1635

…ԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ II

809
Մ-22

…ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1940

ՀԽՍՀ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

809
Մ-22

Հ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ II

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1940

21 JUN 2013

1635

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

60178-67

Խմբագիր՝ Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գրավլիտի լիազոր Ե-1106, Պատվեր 63, տիրաժ 2000
Հանձնված է արտադրության 8 փետրվարի 1940 թ
Ստորագրված է տպագրության 25 փետրվարի 1940 թ

Մանկ. Ուսհրատի տպարան, Մարքսի փ. 17, Երևան 1940 թ.

ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Վերածնունդը, ինչպես նաև նրա հետ կապված հումանիստական շարժումը՝ իտալական երևույթ չեր միայն։ Վերածնության դարաշրջանը Արևմտյան Եվրոպայում ամենից առաջ սկսվում է Իտալիայում, սակայն թե Վերածնունդը և թե հումանիստական շարժումը համեվրոպական երևույթ եր։

Իտալիան իր առաջնությունը կուլտուրայի և գրականության ասպարեզում կարողացավ պահպանել մինչև 16-րդ դարը։ 16-րդ դարի առաջին կեսը իտալական կուլտուրայի և արվեստի (Վերածնության) վերջին շրջանն եր։ Այս վերջին շրջանում Իտալիայում հանդես են գալիս արվեստի և գիտության այնպիսի հանճարներ, ինչպիսիք եին Լեոնարդո-դա-Վինչին (1452—1519), Միքել Անջելոն (1475—1564), Ռաֆայելը (1483—1520), Տիցիանը (1477—1576)։

Այդ նույն ժամանակից պատմական զարգացման բնագավառում սկսում են ավելի խոշոր դեր խաղալ այլ Եվրոպական երկրներ, և Իտալիան մղվում է երկրորդ պլանը։ Իտալիայից հետո իրենց գրականության կլասիկ շրջանն ապրեցին Իսպանիան և Անգլիան։ Վերածնության շարժումն ուժեղ թափ ստացավ նաև Գերմանիայում և Ֆրանսիայում։ Հենց այդ շրջանում, ինչպես Էնգելսն է նշում, Ֆրանսիայում և Գերմանիայում առաջացավ նոր, ժամանակակից գրականություն։

Ինչպես Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում, այնպես ել Գերմանիայում հումանիստական շարժման առաջացումը և ձևավորումը ֆեոդալական Գերմանիայի բուրժուական զարգացման հետևանք եր։ Սակայն սրա հետ միասին պետք է նշել այն հսկայական ազդեցությունը, որ գործել է իտալական հումանիզմը գերմանական հումանիստների վրա։ Այդ ազդեցությունն այնքան ուժեղ եր, վոր վորոշ պատմաբաններ գրել են, թե՝ հումանիզմը Գերմանիա թափանցեց Իտալիայից և վոր գերմանական հումանիստական շարժումը իտալական հումանիզմի շարունակությունն ե։ Այդ, ի հարկե, ճիշտ չե։ Հումանիզմը, ինչպես նաև Վերածնունդը ամեն մի երկրում ուներ իր առաջացման պատճառները և չնայած այդ պատճառների ընդհանուր հիմքին՝ կապիտալիզմի զարգացմանը, այնուամենայնիվ, ամեն մի երկրում ինչպես Վերա-

ծնունդը, այնպես էլ հումանիստական շարժումն ուներ իր կոնկրետ առանձնահատկությունները:

Հումանիստական շարժման սկիզբը Գերմանիայում սովորաբար համարվում է 15-րդ դարը: 15-րդ դարի առաջին կեսում Գերմանիայում, գերմանական ազնվականության վորոշ շրջաններում և մասնավորապես գերմանական մի շարք համալսարաններում կազմակերպվում են գրականագետների խմբակներ, վորոնք իտալական հումանիստների նման զբաղվում են անտիկ գրականության և լեզուների ուսումնասիրությամբ և պայքարի մեջ են մտնում համալսարաններում իշխող յեկեղեցական-աստվածաբանական և սխոլաստիկական գիտությունների դեմ: Այդ նպատակով հումանիստ հեղինակները լինում էին այն ժամանակ գոյություն ունեցող գրեթե բոլոր համալսարաններում.

Հումանիստները մեծ դիմադրության էին հանդիպում և մեղադրվում էին քրիստոնեության հիմունքները խախտելու մեջ, ու չնայած դրան, հումանիստները վճռական հաջողություններ ունեցան գերմանական մի շարք համալսարաններում:

Արդեն 70-ական թվականներին հումանիստներին հաջողվեց Ֆրեյբուրգյան և Բազելի համալսարաններում ստեղծել սպեցիալ ամբիոն: 1492 թվին, այդ ժամանակվա հայտնի հումանիստ Կոնրադ Ցելտիսին ընտրվում է Ինգոլշտադտյան համալսարանի գրականության և ճարտասանության պրոֆեսոր:

Հումանիստների պայքարի հաջողությունների հետևանքով 90-ական թվականներին Վիեննայի համալսարանում, գիտական աստիճաններ ստանալու համար հումանիստար գիտությունների իմացությը դառնում է պարտադիր: 16-րդ դարասկզբին Վիտենբերգում և Ֆրանկֆուրտում նոր ստեղծված համալսարաններն ամբողջապես գտնվում էին հումանիստների ուժեղ ազդեցության տակ: Նույնիսկ այնպիսի հին համալսարաններում, ինչպիսին Լայպցիգի, Քյոլնի համալսարաններն էին, հումանիստներին հաջողվում է վորոշ տեղ գրավել: Գերմանական մյուս ամենահին համալսարաններից մեկում, Երֆուրտյան համալսարանում 16-րդ դարի սկզբին աշխատում էին գերմանական հումանիզմի փայլուն ներկայացուցիչներ՝ Կրոտ Ռուբեան, Էոբան

Հեսսը, Ուլրիխ ֆոն Հուտտենը: Հումանիստների Երֆուրտյան խմբակի ղեկավարն էր Մուցիան Ռուֆը:

Գերմանական հումանիստական գրականության պատմությունը սովորաբար սկսում են Սեբաստիան Բրանտի (1457—1521) ստեղծագործություններից:

Բրանտը գերմանական սատիրական գրականության նշանավոր ներկայացուցիչներից մեկն էր: Նա Բազելի համալսարանում յեղել է իրավաբանության դոկտոր, իսկ 1501 թվին աշխատել է վորպես այդ քաղաքի քաղաքագլուխ: Նույն պաշտոնով աշխատել է նաև Ստրասբուրգում և Ելզասում: Գրել է բազմաթիվ գրական և հրապարակախոսական աշխատություններ: Միաժամանակ զբաղվել է նաև գեղարվեստական ստեղծագործությամբ: Նրա լավագույն ստեղծագործությունը համարվում է «Հիմարների նավը» գրվածքը, չափածո լեզվով, վորն ունեցավ շատ մեծ հաջողություն: Այստեղ հեղինակը տալիս է իր դարաշրջանի բոլոր խոցոտ կողմերի նկարագրությունը և ուժեղ քննադատությունը: Պոեմի ֆաբուլան կառուցված է այսպես. Նկարագրվում է հիմարների ճանապարհորդությունը դեպի Նարբագոնիա (հիմարների յերկիրը): Այս հիմարների մեջ գտնվում են այդ ժամանակվա գրեթե բոլոր դասակարգերի և սոցիալական խավերի ներկայացուցիչները: Հիմարների մեջ կարևոր տեղ են գրավում ազնվականության և հոգևորականության ներկայացուցիչները, սխոլաստիկ գիտնականները: Միաժամանակ Բրանտը տալիս է իր դարաշրջանի բարքերի, սովորությունների, ընտանեկան կյանքի լայն նկարագիրը: Նրա համակրանքը, բոլոր դեպքերում, գյուղացիության կողմն է:

«Հիմարների նավը» գերմանական այդ դարաշրջանի գրականության մեջ շատ խոշոր դեր խաղաց, վորին շատ հեղինակներ հետևեցին:

Գերմանական հումանիստների գործունեության մեջ կարևոր տեղ էր գրավում «Աստվածաշնչի» քննադատական-փիլիսոփայական ուսումնասիրությունը: Այդ ուսումնասիրության գործնական-քաղաքական նշանակությունը յերևում է այդ ժամանակ մեծ աղմուկ հանած այն բանավեճից, վորը տեղի ունեցավ հումանիստների հին, ֆեոդալական աշխարհի ներկայացուցիչների

միջև: Այս վեճի կենտրոնական հերոսը գերմանական հումանիզմի ականավոր ներկայացուցիչ Ռեյխլինն էր (1455—1522):

Իոհան Ռեյխլինը իր ժամանակվա նշանավոր յեբրայագետներից մեկն էր: Սկզբում նա ծառայում էր Վյուրտեմբերգյան պալատում իրավաբանի պաշտոնով, այնուհետև աշխատում էր Հեյդելբերգյան համալսարանում, վորպես հունական և հրեական լեզուների ամբիոնի վարիչ: Նույն պաշտոնով նա յերկար ժամանակ աշխատել է Ինգոլշտադտյան և Տյուբինգենյան համալսարանում: Ռեյխլինը գլխավորապես զբաղվում էր հունական, լատինական և հին հրեական լեզուների հետազոտությամբ: Այս զբաղմունքների նպատակն էր ուսումնասիրել քրիստոնեության հնագույն հուշարձանները, վորպեսզի հնարավոր լինի քրիստոնեական ուսմունքը մաքրել հետագա շրջանների բոլոր աղավաղումներից և սխալ մեկնաբանումներից: Նա հատկապես մեծ նշանակություն էր տալիս հրեական միստիկայի ուսումնասիրությանը: Ռեյխլինը իր ուսումնասիրությունների ժամանակ ձգտում էր վոչ թե քրիստոնեությունը գիտական փաստարկումներով բացասելու, այլ աշխատում էր վերականգնել քրիստոնեությունը այն վիճակով, ինչպես նա գոյություն էր ունեցել հնագույն աղբյուրների մեջ: Դա առաջին համարձակ փորձն էր, վոր կրոնի հարցերին պատմական մոտեցում ուներ:

1509—10 թ. թ. շրջանում Գերմանիայում սկսում են հետապնդել գրականության ներկայացուցիչներին: Մի անգամ Ռեյխլինին ներկայանում է մի անծանոթ մարդ, ցույց է տալիս թագավորի հրամանը այն մասին, վոր ինքը լիազորված է բռնագրավել բոլոր հրեական գրքերը և առաջարկում է Ռեյխլինին օգնել և օժանդակել իրեն այդ գործում:

Այդ անծանոթը ռեակցիոներ Պֆեֆֆերկորնն էր: Նա ազգությամբ հրեա էր բայց 1506 կամ 1507 թվին Քյոլնում քրիստոնեություն ընդունելուց հետո դառնում է իր ազգակիցների վոխերիմ հակառակորդը: 1507 թվին նա հրապարակում է իր առաջին աշխատությունը «Հրեական հայելի» վերնագրով, վորտեղ նա հարձակվելով հրեաների վրա, նրանց մեղադրում էր մի շարք ծանր հանցանքների համար քրիստոնեության հանդեպ և հրեաների դեմ պայքարելու ամենահզոր միջոցներից մեկը համարում էր հրեական գրականության բռնագրավումը և

վոչնչացումը, ուղղակի այրումը: Պֆեֆֆերկորնը չի բավարարվում միայն հրապարակական գրավոր ելույթներով: Իր բարբարոսական նպատակն իրագործելու համար՝ նրան հաջողվում է վոչ միայն թագավորի համաձայնությունը վերցնել, այլև նրանից մանդատ ստանալ:

Հրեական գրականության վոչնչացման անհրաժեշտության հարցի քննությունը հանձնարարվում է գերմանական մի շարք համալսարանների և մասնագետների, նրանց թվում նաև Ռեյխլինին:

Ռեյխլինը պատրաստում է մի փայլուն զեկուցում, վորտեղ ապացուցում էր, վոր հրեական գրականության վոչնչացումը բարբարոսություն է, և վոր այդ բարբարոսության դեմ կանգնելու միակ ճիշտ ուղին այդ գրքերի գիտական ուսումնասիրությունը և մեկնաբանությունն է:

1511 թվին Պֆեֆֆերկորնը հանդես յեկավ մի այլ աշխատությամբ՝ «Ձեռքի հայելին»: Այս գործն ուղղված էր Ռեյխլինի դեմ, վորտեղ Պֆեֆֆերկորնը զրպարտելով իր գաղափարական ազնիվ հակառակորդին, ապացուցում էր, թե Ռեյխլինը կաշառված է հրեաների կողմից:

Ռեյխլինը նույն թվին հրապարակում է իր նշանավոր պարսավագիրը՝ «Աչքի հայելին», իսկ 1513 թվին յերկրորդ պարսավագիրը՝ «Քյոլնի զրպարտիչների դեմ»:

Ռեյխլինի և Պֆեֆֆերկորնի բանավեճը իր ժամանակ գրավեց վողջ հասարակության ուշադրությունը: Ընթերցող հասարակությունը բաժանվեց յերկու բանակի: Բոլոր առաջադեմ մտքերը, նրանց թվում նաև գերմանական հումանիստները, համախմբվեցին Ռեյխլինի շուրջը: Միջնադարը ներկայացնող բոլոր սև ուժերը, նրանց թվում նաև Քյոլնի համալսարանի խավարամիտ պրոֆեսորները հանդես յեկան Պֆեֆֆերկորնի կողմնակիցների և պաշտպանների դերում:

«Ռեյխլինյան հարցը» ստացավ վորոշ իմաստով համեվրոպական նշանակություն. Ռեյխլինը Գերմանիայից դուրս նույնպես ունեցավ իր հակառակորդները և բարեկամները:

1514 թվին Ռեյխլինը «Նշանավոր մարդկանց նամակները» վերնագրով հրապարակեց այն բոլոր նամակները, վոր նա ստացել էր իրեն համակրողներից: 1515 թվին, հումանիստների եր-

ֆուրտյան խմբակը՝ վորը ռեյխլինյան հարցում շատ արմատական դեր էր բռնել, հրատարակեց այդ ժամանակաշրջանի սատիրական գրականության ամենանշանավոր հուշարձաններից մեկը՝ «Խավարամիտ մարդկանց նամակները» («Epistolea Obscurorum virorum»), վորն ուղղված եր Քյոլնի աստվածաբանների դեմ և մերկացնում եր նրանց տգիտությունն ու բարոյական այլասերումը։

«Խավարամիտ մարդկանց նամակները» գրված եր այնքան վարպետությամբ և մեծ տաղանդով, վոր սկզբում աստվածաբանները կարծում եյին, թե դրանք իսկական նամակներ են և նույնիսկ վողջունեցին այդ գրքի լույս տեսնելը։ Միայն հետագայում նրանք հասկացան, վոր այդ բոլորն ուղղված ե իրենց դեմ։

«Խավարամիտ մարդկանց նամակները» հասցեյագրված են հակառեյխլինյան բանակի ղեկավար աստվածաբան Որտուին Հոլացիուսին։ Ամեն մի նամակը վերագրվում ե վորևե աստվածաբանի կամ վանականի։ «Նամակների» մեջ ցայտուն կերպով դրսևորված ե աստվածաբանների և վանականների տգիտությունը, նրանց բարոյական այլասերումը, նրանց դատարկ և անիմաստ վեճերը։ Գրվածքի հեղինակների հարցը մինչև հիմա չի լուծված։ Կարծիք կա, վոր գլխավոր մասնակիցները յեղել են Կրոտ Ռուբիան և Հուտտենը։

«Խավարամիտ մարդկանց նամակների» հետ ավելի մոտիկից ծանոթանալու համար թարգմանաբար բերենք 16-րդ նամակը։

ՀԵՆՐԻԽ ՇԱՖՍՄՈՒԼԻՈՒՍԸ[1])

Մագիստրոս Որտուին
Հոլացիուսին եղում է
բազում վողջույններ ...

Իմ Հռոմ մեկնելուց առաջ դուք ասացիք, վոր յես հաճախ նամակ գրեմ և յերբեմն ձեզ դիմեմ աստվածաբանական հարցերով, վորովհետև դուք այդ հարցերին ավելի ճիշտ լուծում եք տալիս, քան Հռոմում։ Ահա թե ինչու յես դիմում եմ ձեզ հետևյալ հարցերով.— Ինչ կարծիք ունեք դուք այն մասին, յեթե վորևե մեկը Վեներայի որը, այսինքն շաբաթվա վեցերորդ որը, կամ թե չե ընդհանրապես պաս որը ձու ուտի, վորի մեջ ձագ կա։ Մենք մի քանի որ առաջ նստած եյինք Կամպոդել-Ֆիորի հյուրանոցում, ճաշում եյինք այնտեղ և ձու կերանք։ Ձուն կոտրելով յես նկատեցի, վոր նրա մեջ գտնվում ե փոքրիկ ճուտ և ցույց տվեցի ընկերոջս։ Նա ինձ ասաց, շուտ արեք կերեք ձուն այնպես, վոր չտեսնի հյուրանոցի տերը, այլապես նրան պետք ե վճարել նաև ճուտի համար։ Այստեղ այդպիսի սովորություն կա, յեթե վորևե բան են մատուցել, անպայման պետք ե վճարել, վորովհետև յետ չեն վերցնում։ Յեթե հյուրանոցի տերը նկատի, վոր ձվի մեջ ճուտ կա, նա անպայման կասի՝ վճարեցեք ճուտի արժեքը։

Յես անմիջապես ձուն խմեցի և նրա. հետ միասին կուլ տվեցի նաև ճուտը։ Յեվ միայն հետո գլխի ընկա, վոր այդ որը Վեներայի որն եր և ասացի ընկերոջս. ինչ արեցիք դուք։ Յես ձեր պատճառով մահացու մեղք գործեցի — պաս որին միս կերա, իսկ նա ինձ պատասխանեց, վոր այդ բոլորովին ել մահացու մեղք չե, վոր յես նույնիսկ վոչ մի մեղք չեմ գործել, քանի վոր այդ ճուտին պետք ե ձու համարել մինչև այն ժամանակ, քանի դեռ նա դուրս չի յեկել ձվից։ Նա նույնիսկ ասաց, վոր այդ գրեթե նույն բանն ե, ինչպես որինակ պանիրը, վորի մեջ յերբեմն վորդեր են լինում, ինչպես նաև կեռասը, ընկույզը, թարմ բակլան... չե վոր այդ բոլորն ուտում են ուրբաթ որերին։ Դրանից հետո յես հեռացա և յերկար մտածեցի այդ մասին։ Յերդվում եմ աստծո անունով, պարոն Որտուին, յես միանգամայն գլուխս կորցրել եմ և չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես վարվեմ։ Յես շատ եյի ցանկանում խորհրդակցել կուրիայի անդամներից մեկի հետ, բայց գիտեմ, վոր նա անհրաժեշտ գիտելիքներ չունի։ Ինձ թվում ե, թե ճուտը ձվում միս ե. չե վոր նյութը արդեն ձևավորվել ե և ընդունել կենդանու անդամների և մարմնի տեսք և նա արդեն ունի վոգի։ Այլ բան են պանրի մեջ յեղած վորդերը. չե վոր վորդերը ձկների դասից են, այդ յես լսել եմ մի բժշկից, իսկ նա լավ ֆիզիկոս ե։ Յես ամբողջ սրտով խնդրում եմ ձեզ պատասխանեք իմ հարցին։

1) Գերմաներեն Schafsmaul բառից, վոր նշանակում ե վոչխարի մռութ, հիմարի գլուխ։

Յեթե դուք այդ համարում եք մահացու մեղք, ապա Գերմանիա վերադառնալուց առաջ, մեղքերս կարող եմ այստեղ քավել։ Բացի այդ, թող ձեզ հայտնի լինի, վոր մեր «մագիստրոս» Հակոբ Գոգստրատենը բանկից հազար գուլդեն ստացավ։ Յես այժմ համոզված եմ, վոր նա գործը կշահի և սատանան կտանի այդ Ռեյխլինին և մյուս բոլոր բանաստեղծներին և իրավաբաններին այն բանի համար, վոր նրանք դուրս են գալիս աստծո յեկեղեցու դեմ, այսինքն աստվածաբանների դեմ։ Չէ վոր աստվածաբանությունը յեկեղեցու հիմքն է, քանի վոր քրիստոս ասել է.—«և այս քարի վրա կկառուցեմ իմ յեկեղեցին»։ Յեվ այսպես ձեզ հանձնում եմ աստծուն։ Յեղեք առողջ։ Գրված է Հռոմ քաղաքում»։

Այս նամակի մեջ հետաքրքիրը նախ այն է, վոր նրա խավարամիտ հեղինակը չի հասկանում իր խավարամիտ և տգետ լինելը և իր տգիտությունը ներկայացնում է վորպես մի խորիմաստ փիլիսոփայություն՝ «մարդկությանը հուզող» «պրոբլեմների» մասին։ Մյուս բոլոր նամակները գրված են այդ նույն վոգով։ Այդ նամակներում ջախջախիչ քննադատության են յենթարկվում սխոլաստիկական գիտությունը և գիտնականությունը, խավարամտությունը, հոգևորականության անառակ կյանքը, կրոնական մոլեռանդությունն ու նախապաշարումները, սխոլաստիկական մանկավարժությունը, մի խոսքով այն ամենը, ինչ կապված է միջնադարյան խավարամտության հետ։

Գերմանական հումանիզմի պատմության մեջ կարևոր դեր խաղաց նաև Ուլրիխ փոն Հուտտենը (1488—1525)։ Նա ծնվել է ասպետական-ազնվական ընտանիքում։ Նախնական կրթությունը ստացել է վանքում։ Փախչելով վանքից՝ գնում է Երֆուրտ, վորտեղ ընդունվում է համալսարան, վորպես ուսանող։ Այնուհետև անցնում է Ֆրանկֆուրտյան համալսարանը, վորտեղ ստանում է բակալավրի աստիճան։ Ակտիվ մասնակցություն է ունենում 1522 թվի ասպետական ապստամբությանը, վորի զինվորական ղեկավարն էր Ֆրանց փոն Զիկկինգենը։ Ապստամբության պարտությունից հետո Հուտտենը փախավ Շվեյցարիա, վորտեղ և մահացավ։

Հուտտենը իր ժամանակվա նշանավոր քաղաքական գործիչներից մեկը լինելուց բացի, յեղել է նաև գրող և պամֆլետիստ։ Հումանիստական հակումները նրա մոտ հանդես են գալիս դեռ վաղ հասակից։ Իր առաջին բանաստեղծություններից մեկում («Վոչ վոք») ուժեղ քննադատության է յենթարկում սխոլաստիկական գիտությունը։ Ռեյխլինի և խավարամիտների պայքարի շրջանում կանգնում է նշանավոր հումանիստի պաշտպանության դիրքերում և գրում է նրան նվիրված իր նշանավոր բանաստեղծությունը («Կապնիոնի Տրիումֆը», 1517)։ Այնուհետև ակտիվ մասնակցություն է ունենում «Խավարամիտ մարդկանց նամակները» գրելու աշխատանքին։ Յերբ 1515 թվին Վյուրտեմբերգի դուքսը ստորաբար սպանեց նրա յեղբորը, Հուտտենը, վորպես պատասխան, հրապարակեց իր «Ճառեր» վերնագրով աշխատությունը։ Հուտտենի լավագույն գործերը լույս տեսան 1520—21 թվերի շրջանում։ Նրանցից նշանավորներն են՝ «Ճակատագիրը» և «Վադիկս կամ Հռոմեական յերրորդությունը»։

Մարքսը Լասսալի «Ֆրանց փոն Զիկկինգեն» դրամայի առթիվ գրած իր նամակում, Հուտտենին համարում է կործանվող ասպետության ներկայացուցիչ և նրա կործանման պատճառները բացատրում է այսպես —«... Զիկկինգենը և Հուտտենը պետք է կործանվեյին, վորովհետև նրանք իրենց յերևակայության մեջ հեղափոխականներ եյին (վերջինս չի կարելի ասել Գյոցի մասին) և—ճիշտ ինչպես 1830 թ. լեհական կրթված ազնվականությունը,—դարձան մի կողմից արդիական գաղափարների գործիք, իսկ մյուս կողմից—փաստորեն ներկայացնում եյին ռեակցիոն դասակարգային շահը»[1]։

Նույն բանը Հուտտենի մասին ասում է Ենգելսը թե Լասսալին ուղղված իր նամակում (նրա վողբերգության առթիվ) և թե «Գյուղացիական պատերազմները Գերմանիայում» աշխատության մեջ։ Նա Հուտտենին համարում է ազնվականության տեսական ներկայացուցիչ։

Հուտտենի մասին Ենգելսը գրել է.—

«Հուտտենը շատ պարզ և արմատական կերպով ազնվականության անունից ձևակերպել է կայսերական բարենորոգման (ռեֆորմի)

---

1) Մարքսը և Ենգելսը Արվեստի մասին, եջ 65—69։

ծրագիրը: Խոսքն այն մասին էր, վորպեսզի հեռացվեյին բոլոր իշխանները, սեկուլյարիզացիայի յենթարկվեյին հոգևոր իշխանությունները և նրանց ունեցվածքը, հաստատվեր ազնվական դեմոկրատիա միապետի գլխավորությամբ. Ազնվականության, այդ գերազանցապես զինվորական դասակարգի, իշխանությունը վերականգնելու ճանապարհով, իշխանների, քաղաքական անմիջականության այդ կրողների վերացման, հոգևորականության հզորության վոչնչացման և Գերմանիայի Հռոմի հոգևոր իշխանությունից ազատելու ճանապարհով, Հուտտենը և Զիկկինգենը, հուսով էին կայսրությունը նորից դարձնել միասնական, ազատ և ուժեղ»[1]):

Այստեղից էլ ստացվում է այն հակասությունը, վոր հատկանշական է Հուտտենի վողջ հասարակական-քաղաքական և գրական գործունեյության համար: Մի կողմից նա հանդես է գալիս վորպես կործանվող ասպետության ներկայացուցիչ և այդ ասպետության անկախության պաշտպան, իսկ մյուս կողմից հանդիսանում է «արդիական գաղափարների գործիչ», ըմբոստանալով պապական Հռոմի և միջնադարյան սխոլաստիկայի ու խավարամտության դեմ:

Հուտտենի թողած գրական ժառանգության մեջ ամենից նշանավորը նրա սատիրական դիալոգներն են, վորոնք գրված են հունական նշանավոր սատիրիկ գրող Լուկիանոսի հետևողությամբ: Սատիրական դիալոգների մեջ շատ էյական տեղ է գրավում Հռոմի քննադատությունը:

«Վադիկս կամ հռոմեական յերրորդությունը» պարսավագրի մեջ ասվում է, թե Հռոմում զբաղվում են յերեք բանի վաճառքով—քրիստոսի, հոգևոր աստիճանների և կնոջ: «Այժմ յես պարզորեն տեսնում եմ,—ասում է Վադիկսի զրուցակիցը, վորը յեղել է Հռոմում,—վոր Հռոմը բոլոր հիվանդությունների աղբյուրն է, խոցերի և խարդախությունների ովկեանոս, բոլոր թշվառությունների պատճառ, և վոր այդ հիվանդությունների աղբյուրի վոչնչացումը պետք հանդիսանա ամեն մի ազնիվ գերմանացու գործը»:

1) Маркс и Энгельс, Собр. соч. т. VIII, стр. 158.

Մի այլ դիալոգում, Հռոմն այսպես է նկարագրվում.—«Նայեցեք այնտեղ, Հռոմին—վողջ յերկրագնդի այդ շտեմարանին, վորտեղ կենտրոնացվում են այն ամենը, ինչ վոր գողանում և հափշտակում են բոլոր յերկրներից և վորտեղ նստած է անկուշտ ցեցը: Այդ ցեցն իր բազմաթիվ խժռողների հետ միասին լափում է ամեն ինչ: Նրանք սկզբում ծծեցին մեր արյունը, հետո սկսեցին լափել մեր միսը, իսկ այժմ հասել են ուղեղին: Ջարդում են վոսկորները, վորպեսզի լափեն այն, ինչ վոր մնացել է: Միթե գերմանացիները զենքի չեն դիմի և հարձակվի սրով և կրակով: Դիշատիչներն արյան մեջ խեղդում են գերմանական ժողովրդին և հասցնում են իրենց փորը: Մեր փողերով նրանք ձի, շուն և անասուններ են պահում, մեր փողերով նրանք անառակություն են անում: Առաջ նրանք այդ փողը վերցնում էին խարդախությունների միջոցով, իսկ այժմ դիմում են սպառնալիքի և ուժի, վոր, ինչպես քաղցած գայլեր, թալանեն մեզ: Եվ մենք պետք է նրանց փայփայենք: Վերջ ի վերջո յերբ պետք է խելոքանանք և հատուցում պահանջենք մեր խայտառակության և ընդհանուր թշվառության համար»[1]):

Այս մի քանի օրինակից պարզ յերևում է, վոր Հուտտենը պապական Հռոմի ամենավտանգավոր հակառակորդներից մեկն էր, վոր նա պայքարում էր վոչ միայն քննադատությամբ, այլև զենքի կոչ էր անում այդ նույն Հռոմի դեմ: Ժողովրդին Հռոմի դեմ վոտքի հանելու և իր հայացքները լայն տարածելու նպատակով, իր մի շարք պամֆլետները գրում է գերմաներեն լեզվով:

Գերմանական հումանիզմի մյուս նշանավոր ներկայացուցիչը Երազմ Ռոտտերդամցին է (1467—1536):

Ծնվել է Նիդերլանդներում, Ռոտտերդամ քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է տեղական դպրոցում, վորտեղ դասավանդումը տարվում էր սխոլաստիկական մանկավարժության բոլոր օրենքների համաձայն: Ծնողների մահից հետո (14 տարեկան հասակում զրկվում է ծնողներից), Երազմը ստիպված է լինում վանք մտնել թե իր գոյությունը պահպանելու և թե ուսումը շարունակելու նպատակով: Վանքում նա մնում է մոտ

1) Д. Штраус, «Ульрих фон Гуттен», 1896 թ. էջ 267:

յերկու և կես տարի: Այստեղ նա հնարավորություն է ունենում իր ամբողջ ժամանակը նվիրել ուսման գործին, սովորել կլասիկ լեզուներ և ուսումնասիրել կլասիկ գրողներին: Վանքը նրա կյանքում ունեցավ նաև այն նշանակությունը, որ նա մոտիկից ծանոթանալով վանականների կյանքին, հետագայում կարողացավ իր դիտողությունները վարպետորեն օգտագործել իր ստեղծագործությունների մեջ: Վանքից դուրս գալով, Էրազմը գնում է Փարիզ, ըստ յերևույթին ուսումը շարունակելու նպատակով: Այս շրջանից են սկսվում նրա ճանապարհորդությունները Յեվրոպայում: Նա լինում է Անգլիայում, Իտալիայում, ամեն տեղ նա մոտ կապեր է հաստատում այդ ժամանակվա նշանավոր մարդկանց ու մասնավորապես հումանիստների հետ: Անգլիայում նա ծանոթանում է Թոմաս Մորի հետ և դառնում է նրա ամենամոտ բարեկամներից և ընկերներից մեկը: Կեմբրիջի համալսարանում մի քանի տարի դասավանդում է հունարեն լեզու և աստվածաբանություն: Հետո նա ապրում է Գերմանիայում, Կարլոս 5-րդի մոտ ծառայում է մի քանի տարի: Կյանքի վերջին օրերը անց է կացնում Շվեյցարիայում (Բազել), որտեղ և մահանում է:

Էրազմը թողել է բավականին մեծ և նշանավոր գրական ժառանգություն: Նա գրել է մի շարք աշխատություններ փիլիսոփայական և աստվածաբանական թեմաների շուրջը: Բացի այդ՝ նա գրել է նաև սատիրական գործեր, որոնից մեծ հաջողություն ունեցավ նրա «Խոսակցությունները»: Մեծ հաջողություն ունեցավ նաև նրա մի այլ գործը—«Adagia», որն անտիկ աշխարհի զանազան գրավոր և բանավոր աղբյուրներից քաղված առակների և անեկդոտների ժողովածու յէ:

Ինքը, Էրազմը իր ամենահիմնական գործը համարում էր «Աստվածաշնչի» հունարեն տեքստի ուղղումը և գրած կոմենտարիաները: Բայց նա յեվրոպական գրականության պատմության մեջ մնաց իր մի շատ նշանավոր գործով, որը հանդիսանում է Վերածնության դարաշրջանի սատիրական գրականության գոհարներից մեկը: Այդ գործը կոչվում է «Հիմարության գովասանական խոսքը»: Լույս տեսավ 1509 թվին և մի քանի ամսվա ընթացքում ունեցավ յոթ հրատարակություն: Գրված էր լատիներեն, բայց լատինական տեքստի լույս տեսնելուց անմիջապես

հետո թարգմանվեց գերմաներենի: Թարգմանված է յեվրոպական բոլոր լեզուներով: Կա ռուսական յերկու թարգմանություն և հրատարակություն (1902 թ. և 1931 թ.): Էրազմը իր գիրքը նվիրել է Թոմաս Մորին:

«Հիմարության գովասանական խոսքը» սկսվում է մի նամակով, որը հասցեագրված է Թոմաս Մորին: Էրազմն այստեղ բացատրում է, թե ինչպես է իր մոտ առաջացել այդ գրքի մտահղացումը: Այդ նամակ-առաջաբանում Էրազմն ի միջի այլոց գրում է.—«Ինչ վերաբերում է անմիտ հանդիմանություններին, որ ուղղված է անտեղի սրության դեմ, յես կպատասխանեմ, որ միշտ էլ թույլատրված է յեղել անպատիժ կերպով ծիծաղել մարդկային ամենօրյա կյանքի վրա, միայն թե ծիծաղելու ազատությունը չվերածվի մոլեգնության: Յես զարմանում եմ ժամանակակից ականջների նրբանկատության վրա, որոնք թվում է, թե ոչ մի բան չեն կարող տանել բացի հանդիսավոր տիտղոսից»:

Ինչպես այս տողերի, այնպես էլ ամբողջ նամակի մեջ Էրազմը արդարացնում է իր գիրքը, նա գտնում է, որ սատիրան անչափ օգտակար մի բան է. պետք է ծաղրել այն, ինչ արժանի յե ծաղրելու և դրանից մարդիկ ոչ թե կկորցնեն, այլ շատ բան կշահեն:

Գրքի կենտրոնական հերոսը հիմարությունն է, ամբողջ գիրքը հենց այդ հիմարության մենախոսությունն է: Սատիրայի մեջ այս տրադիցիան Էրազմը չստեղծեց: Գերմանիայում մինչև Էրազմի հանդես գալն ու նրա ժամանակ բավականին տարածված էր այդ տիպի գրականությունը, որտեղ խոսվում էր հիմարության և հիմարների մասին: Գերմանացիները այդ տիպի գրականության համար ունեին նույնիսկ հատուկ տերմին՝ Narrenliteratur հիմարների գրականություն: Մինչև Էրազմի գրքի լույս տեսնելը հրապարակի վրա արդեն կար Սեբաստիան Բրանտի «Հիմարների նավը», որից Էրազմը շատ բան է վերցրել:

«Հիմարության գովասանական խոսքում» Էրազմը քննադատության է յենթարկում իր ժամանակվա ողջ հասարակությունը և հասարակական բոլոր խավերին: Հիմարությունը հայտարարում է, որ ինչպես ամբողջ հասարակությունը, այնպես էլ հասարակության բոլոր խավերն ու շերտերը իրեն են յենթարկվում: Այս քննադատության մեջ ամենից շատ ուշադ-

րություն է դարձվում հոգևորականությունը, աստվածներին և մինչև իսկ Հռոմի պապին։ Սրա հետ միասին Էրազմը պախարակում է սխոլաստիկան, սնոտիապաշտությունը ու խավարամտությունը։

Հիմարությունն իր մասին ասում է.—«Իմ ծնողը չի եղել ոչ թե Քաոսը, Օրկը, Սատուրնը, Հաբեթը, այլ Պլուտոսը[1]), որն աստվածների և մարդկանց միակ և իսկական հայրն է։ Թե անտիկ աշխարհում և թե այժմ, նրա ձեռքի շարժումով կատարվել և կատարվում են ամեն ինչ—սրբազանը և աշխարհիկը։ Նրա վճռից են կախված պատերազմը և խաղաղությունը, պետական իշխանությունը, դատարանը, խորհրդակցությունները, ժողովրդական հավաքույթները, ամուսնությունը, օրենքները, միությունները, արվեստը, գիտական աշխատանքները, մի խոսքով մահկանացուների բոլոր հասարակական և մասնավոր գործերը»։

Հաջորդ գլուխներում հիմարությունը խոսում է այն մասին, որ ինքը ունիվերսալ մի յերևույթ է, որ կյանքի մեջ չկա ոչ մի բան, որ իրեն չենթարկվի։ Նրա իշխանությունն այնքան հզոր է, որ նույնիսկ տարածվում է աստվածների վրա։ Այնուհետև հիմարությունը յեզրակացնում է.—«Հիմարությունը ստեղծում է պետությունը, պաշտպանում է իշխանությունը, կրոնը, դատարանը։ Յեվ վերջ ի վերջո ինչ է ամբողջ կյանքը, յեթե ոչ՝ հիմարության կատակը»։

Հիմարության այս դատողությունների մեջ հետաքրքիրը նախ նրա ծնունդն է Պլուտոսից և հետո Պլուտոսի փառաբանությունը։ Էրազմը շատ խորն է ըմբռնում հարստության, փողի դերը հասարակական կյանքում։ Ամեն ինչ կախված է այդ փողից և հարստությունից։ Յեվ պետությունն ու դատարանը, և պատերազմն ու խաղաղությունը, արվեստն ու գիտությունը, ընտանիքն ու ամուսնությունը—այս բոլորը յենթարկվում են փողին, ղեկավարվում են նրա շարժումով։

1) Պլուտոս—հունարեն բառ է=հարստություն, ներկա դեպքում՝ հարստության աստված։

60178-67

Էրազմի գրքում մանրամասն նկարագրվում ու բնութագրվում են հիմարության բոլոր տեսակներն ու ձևերը։

1. Քերականներ—ուժեղ քննադատության են յենթարկվում միջնադարյան քերականների տգիտությունը, մեծամտությունը, «մեծ գիտնական» յերևալու հավակնությունները, մանկավարժական-սխոլաստիկական մեթոդները ու դատարկ բանավեճերը։ «Յես ճանաչում եյի գիտությունների մի իսկական Թագավորի, որն ամբողջ քսան տարի տանջվում էր քերականության վրա, հույս ունենալով, որ կհաջողվի վերջ ի վերջո անսխալ տարբերել խոսքի ութ մասերը»։

2. Բանաստեղծներ—«Բանաստեղծները—ազատ մարդիկ են։ Նրանց ամբողջ գործն այն է, որ շոյեն հիմարների ականջն ամեն տիպի անմտություններով և անիմաստ հեքիաթներով։ Յեվ ամենազարմանալին այն է, որ նրանք իրենց ստեղծագործություններով ցանկանում են իրենց համար անմահություն ձեռք բերել և մյուսներին էլ նույն բանն են խոստանում»։

Հատկանշական է, որ այստեղ խոսքը ոչ թե առհասարակ բանաստեղծների մասին է, այլ այն բոլոր գրչակների մասին, որոնք ոչ մի կապ չունենալով արվեստի հետ, գրական «գործունեությամբ» են զբաղվում միայն անմահանալու նպատակով, և ոչ թե հասարակության շահը նկատի ունենալով։ Հիմարության այս կարգի տեսակներից մեկն էլ միջնադարյան ճարտասաններն են։

3. Իրավաբաններ—Սրանց ամբողջ գործն այն է, որ հենվում են հազար ու մի օրենքի վրա, վիճում են իրար հետ բազմաթիվ պրոբլեմների մասին, բայց ոչ մի ճիշտ խոսք չեն ասում։ Վերին աստիճանի մեծամիտ են, ինքնահավան և ագահ։

4. Փիլիսոփաներ—Խոսքն ի հարկե դարձյալ միջնադարյան սխոլաստիկ փիլիսոփաների մասին է։ Սրանք հալածում և հետապնդում են միայն այն պատճառով, որ ունեն յերկար միրուք և վերարկու։ Իրենց համարում են ամենագետ, բայց «իրականում ոչ մի բան չիմանալով, նույնիսկ իրենք իրենց չեն կարողանում ճանաչել»։

5. Աստվածաբաններ—Հիմարության այս տեսակը նկարագրելու ժամանակ, Էրազմի ծաղրը [illegible] է ավելի սուր և խայթ-

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

ծիչ։ Աստվածաբանների մասին ասված է. «Ինչ վերաբերում աստվածաբաններին, ապա լավ կլինի, որ այստեղ անցնենք լռությամբ և չխառնենք այդ գարշահոտ ճահիճը և ձեռք չտանք այդ թունավոր բույսին»։ Բայց այնուամենայնիվ Էրազմը խառնում է այդ ճահիճը։

6. Վանականները—Էրազմի ատելությունն այս բաժնում նույնպես սուր է և ազդեցիկ։ Նա լավ ծանոթ լինելով վանական կյանքին, անչափ կոնկրետ ու բնորոշ փաստերով մերկացնում է նրանց անասնական կյանքի բոլոր այլանդակ կողմերը, նրանց ագահությունն ու խարդախությունները։

7. Թագավորը և պալատական ազնվականությունը—Այս բաժնում Էրազմը ցույց է տալիս, որ թե թագավորը և թե ազնվականությունը ավելի շատ մտածում են իրենց գանձարանի և ստամոքսի մասին, քան թե հպատակների և պետական գործերի մասին։ «Նրանք քնում են մինչև կեսօր, վարձու քահանան կողքի ու պատրաստ կանգնած է նրանց մոտ, հենց որ արթնանում են, անմիջապես սկսում են աղոթքը։ Դրան հետևում է նախաճաշը, որից հետո ճաշ են մատուցում։ Ապա խաղեր, կատակներ, թղթախաղ, աղջիկներ։ Ընդմիջումներին մի քանի անգամ նախաճաշ, գինի։ Ապա գալիս է ընթրիքի ժամանակը։ Այսպիսով առանց ձանձրույթի անցնում են ժամերը, օրեր, ամիսներ, տարիներ և դարեր։ Յես նույնիսկ չեմ կարողանում նայել այդ յերկարապոչերին»։

8. Հոգևորական բարձր աստիճանավորները—Հռոմի պապը—իրենց պերճաշուք կյանքով սրանք գերազանցում են թե թագավորներին և թե ազնվականությանը։

Բայց այս բոլորից այն յեզրակացությունը չպետք է հանել, թե Էրազմը ընդունում էր իր ժամանակվա հասարակական-քաղաքական կյանքի արմատական հեղաշրջման խնդիրը և մասնավոր սեփականության վերացումը, ինչպես նրա բարեկամ և ընկեր Թոմաս Մորը։ Այս տեսակետից Էրազմը Թոմաս Մորից արմատապես տարբերվում էր։

Էրազմի գլխավոր խնդիրը կրոնի բնագավառում այն յեկեղեցին էր, որ մաքրված է քրիստոնեության միջնադարյան աղավաղումներից և որը պետք է կառուցվի քրիստոնեության նախնական վիճակի սկզբունքների վրա։ Բայց այդ նախնական քրիստոնեությունը Էրազմի մոտ ստանում է հումանիստական մեկնաբանություն, նա բացասում է միջնադարյան ասկետիզմին հատուկ մարդու փոքրացումը։ Կաթոլիկական յեկեղեցին Էրազմի կարծիքով պետք է պահպանվի, բայց դրա հետ միասին պետք է վերանայվեն բոլոր արարողությունները և պաշտամունքի ձևերը, որոնք պետք է լինեն ոչ թե ինքնանպատակ, այլ միջոց մարդու վիճակի բարելավման և մարդու ինքնակատարելագործման համար։ Այդ նույն նպատակին պետք է ծառայեն բոլոր հոգևոր պաշտոնյաները, նրանց թվում յեպիսկոպոսները, կարդինալները և ինքը, Հռոմի պապը։ Նույն բարենորոգման նպատակներով նա քննադատում է նաև թագավորներին և ազնվականությանը, ծաղրում է նրանց այն բանի համար, որ նրանք պարծենում են իրենց բարձր ծագումով ու տոհմագրությամբ։ Թագավորից ու պաշտոնական ազնվականությունից նա պահանջում էր գիտակցել իրենց հասարակական պարտականությունները։ Այդ ազնվականության ու թագավորի վերացման հարցով Էրազմը բոլորովին էլ չի զբաղվում։

Պետք է նշել, որ Էրազմը պատկանում էր այդ ժամանակվա այն բուրժուական մտավորականության թվին, որ բացասելով ֆեոդալիզմը, քննադատելով յեկեղեցին և հոգևորականությունը, առաջ էին քշում առանձին բարենորոգումների հարցը, որը չպետք է սասաներ գոյություն ունեցող կարգերի հիմքերը։ Այս մտավորականությունը հեղափոխության ընդունակ էր միայն մտածողության մեջ, մտքի բարձր հորիզոններում, որին չի հասնում իրական կյանքի աղմուկը։ Գերմանական բուրժուազիայի այս գիծը պահպանվեց շատ յերկար ժամանակ։ Էրազմը գործնական կյանքում, ինչպես Էնգելսն է նրա մասին արտահայտվում, յեղել է խոհեմ, վողջամիտ մի փիլիսոփա, որը չի ցանկացել մատներն այրել։

Էրազմի այս վախը և նրա գործնական անսկզբունքայնությունը ի հարկե չի կարելի բացատրել նրա անհատական բնավորությամբ, ինչպես փորձել են բացատրել հին պատմաբանները։ Դասակարգային պայքարի այդ վերին աստիճանի բուռն դարաշրջանում «կաբինետային գիտնականը» (Էնգելսի վորակումն է) Էրազմ Ռոտերդամցին իշխող դասակարգերի մեջ չէր տեսնում վորևե ուժ, վորը կարողանար պաշտպանել այն

անհրաժեշտ բարենորոգումները, վորոնց մասին յերազում եր ինքը։ Իսկ նրա վերաբերմունքը դեպի ժողովուրդը խիստ բացասական եր։ Ժողովրդին նա անվանում է «բազմագլուխ գազան», վորը ընդունակ չէ ղեկավարվելու հումանիստական գաղափարներով։

Այդ տեսակետից բնորոշ է Երազմի վերաբերմունքը դեպի Լյութերը։ Սկզբում նա Լյութերի կողմնակից եր, իսկ հետո թողեց նրան և անցավ հակառակորդների շարքը։ Այդ վարքագիծը հատկանշական եր այդ դարաշրջանի այլ հումանիստների համար նույնպես։ Իրենց պայքարով նրանք նախապատրաստեցին ռեֆորմացիան, բայց յերբ հրապարակ յեկան գյուղացիական մասսաները, հումանիստները, նրանց թվում նաև Երազմն ու Լյութերը, վախեցան մասսաների հեղափոխական յելույթից։ Հումանիստների մի մասը վերադարձավ կաթոլիկական յեկեղեցու գիրկը, մյուս մասը դուրս յեկավ ռեֆորմացիայի դեմ, վախենալով նրա մասսայական-ժողովրդական բնույթից։

Այս յերկվությունը հատկանշական է նաև ռեֆորմացիայի պարագլուխ Մարտին Լյութերին (1483—1546)։

Լյութերը ծնվել է հանքատիրոջ ընտանիքում։ Սովորել է Երֆուրտյան համալսարանում, այդ շրջանում մոտեցավ հումանիստներին, բայց հումանիստ չդարձավ։ Լյութերի գործունեյության առաջին շրջանում ցայտուն կերպով դրսևորվում է, ինչպես Ենգելսն է ասում, նրա ուժեղ գյուղացիական բնությունը։

Այդ շրջանում Լյութերը դուրս է գալիս Հռոմի դեմ, պապի և հոգևորականության դեմ և պահանջում է նրանց դեմ գործել «զենքով և ոչ թե խոսքով»։ Ենգելսը բերում է Լյութերից հետևյալ տողերը.—«Յեթե նրանց (այսինքն Հռոմի պապերի) մոլեգին կատաղությունը պետք է շարունակվի նաև սրանից հետո, ապա, ինչպես ինձ թվում է, նրանց վոչնչացնելու համար չկա ավելի լավ միջոց, քան այն, վոր թագավորները և իշխանները գործի դնեյին ուժը, վոտքի կանգնեյին և հարձակվեյին այդ վնասակար մարդկանց վրա, վորոնք թունավորում են ամբողջ յերկիրը, և միանգամից վերջ դնեյին նրանց վոչ թե խոսքով, այլ զենքով։ Յեթե մենք գողերին պատժում ենք սրով, մարդասպաններին կախաղանով, իսկ հերետիկոսներին հրով, ապա ինչու չհարձակվենք այդ վնասակար կործանման ուսուցիչների, այդ պապերի, կարդինալների, յեպիսկոպոսների և հռոմեական Սոդոմի մյուս վոհմակների վրա բոլոր հնարավոր զենքով և ինչու մեր ձեռքերը չլվանալ նրանց արյան մեջ»[1]։

Բայց այս առաջին հեղափոխական վոգևորությունը յերկարատև չեղավ։ Մի կողմից գյուղացիները և պլեբեյները Լյութերի այդ կոչի մեջ տեսնում եյին ապստամբության մարտակոչ, իսկ մյուս կողմից՝ Լյութերի շուրջն են համախմբվում ավելի չափավոր քաղաքացիները և ցածր ազնվականության մի զգալի մասը։ Լյութերն այժմ սկսում է քարոզել խաղաղ զարգացում և պասսիվ դիմադրություն։

Իր գործունեյության այդ հեղափոխական շրջանում է, վոր Լյութերը թարգմանում է աստվածաշունչը։ Այս մասին Ենգելսը գրել է.—

«Լյութերն աստվածաշնչի իր թարգմանությամբ պլեբեյական շարժման ձեռքը տվեց մի հզոր զենք։ Աստվածաշնչում իր դարաշրջանի ֆեոդալականացած քրիստոնեյությանը հակադրեց առաջին դարերի համեստ քրիստոնեյությունը, քայքայվող ֆեոդալական հասարակությանը հակադրեց այն հասարակության պատկերը, վորը վոչինչ չգիտեր բազմամարդ, արհեստական ֆեոդալական հիերարխիայի մասին։ Գյուղացիությունը բազմակողմանիորեն ոգտագործեց այդ զենքը իշխանների, ազնվականների և հոգևորականության դեմ։ Այժմ Լյութերը այդ զենքը ուղղեց նրանց (գյուղացիների—Հ. Մ.) դեմ...»[2]։

Ենգելսն այստեղից գալիս է այն յեզրակացության, վոր Լյութերը դավաճանեց վոչ միայն ժողովրդական, այլ և բյուրգերական շարժմանը։

Լյութերի կատարած դերը գերմանական գրականության պատմության մեջ Ենգելսը բնութագրում է այսպես.—«Լյութերը վոչ միայն մաքրեց յեկեղեցու ավգյան ախոռները, այլ և գերմաներեն լեզվի ախոռները, ստեղծեց գերմանական արդի արձակը և հորինեց տեքստն ու մելոդիան հաղթանակի զգացմունքով տոգորված այն խորալի, վորը դարձավ 16-րդ դարի մարսելյոզը»[3]։

---

[1]) Маркс и Энгельс, «Собр. соч.», т. VIII, стр. 132-133.

[2]) Маркс и Энгельс, Собр. соч. т. VIII, стр.

[3]) Մարքսը և Ենգելսը Արվեստի մասին, եջ 123—124.

Էնգելսը նշում է, վոր չնայած այդ յերգերի տեքստը և մելոդիան շնչում է հաղթանակով, բայց այժմ դժվար է և հարկավոր չէ այն հասկանալ այդ իմաստով:

Սրա պատճառն Էնգելսի կարծիքով այն է, վոր «Ընդհանրապես անցյալ հեղափոխությունների պոեզիան (Մարսելյոզը միշտ բացառություն է կազմում) շատ քիչ է հեղափոխական ազդեցություն գործում հետագա շրջաններում, վորովհետև վորպեսզի ազդի մասսաների վրա, նա պետք է արտացոլի նաև մասսաների նախապաշարումները»[1]):

Էնգելսի այս դիտողությունը պետք է նկատի ունենալ նաև այն յերգերի և գրականության գնահատման ժամանակ, վոր ստեղծվեց գյուղացիական-պլեբեյական շրջաններում, վորոնց ղեկավարը հանդիսանում էր այդ դարաշրջանի ամենափայլուն դեմքերից մեկը — Թոմաս Մյունցերը (1498—1525):

Մյունցերը կաթոլիկական յեկեղեցու դեմ դուրս յեկավ Լյութերից առաջ: Նա դեռևս Գալլեյի լատինական դպրոցում, վորտեղ աշխատում էր վորպես դասատու, կազմակերպում է գաղտնի ընկերություն, վորի նպատակն էր պայքարել Մագդեբուրգյան արքեպիսկոպոսի և առհասարակ յեկեղեցական կարգերի դեմ:

Մյունցերի յելույթներն այդ շրջանում ունեցել են շատ սուր բնույթ և կապված եյին ժողովրդի պայքարի հետ՝ ուղղված բոլոր տեսակի շահագործողների դեմ: 1515—1520 թ. թ. շրջանում Մյունցերը խիստ հետապնդումների հետևանքով հաճախ փոխում է իր բնակավայրը: 1520 թվին նա ապրում է Ցվիկկաու քաղաքում, վորտեղ նախապատրաստում է ապստամբություն քաղաքի խորհրդի դեմ:

Մյունցերի թե հասարակական-քաղաքական և թե գրական գործունեյությունը մի նպատակ ուներ՝ վոտքի հանել ժողովրդին գոյություն ունեցող կարգերի դեմ և տապալել շահագործող դասակարգերի ծանր լուծը:

«Աստծո թագավորություն ասելով,—գրում է Էնգելսը,—Մյունցերը հասկանում էր այնպիսի հասարակարգ, վորտեղ արդեն չկան վոչ դասակարգային տարբերություններ, վոչ մասնավոր սեփականություն, վոչ էլ հասարակության անդամներից անկախ և նրանց օտար պետական իշխանություն: Բոլոր գոյություն ունեցող իշխանությունները, վոր չափով նրանք չեն յենթարկվի

1) «Маркс и Энгельс, об искусстве», М. 1933, стр. 194.

հեղափոխությանը և չեն հարի նրան՝ պետք է վոչնչացվեն: Վողջ աշխատանքն ու գույքը պետք է համայնացվեն, պետք է ստեղծվի լիակատար հավասարություն»[1]):

Այստեղից հետևում է, թե Լյութերը և Մյունցերը հանդիսանում են յերկու հակառակ կուսակցությունների ղեկավարներ: Լյութերը, բյուրգերական ռեֆորմացիայի գաղափարախոսը, կրոնի մասին իր ուսմունքը յենթարկում է աշխարհիկ իշխանությանը: Այդ ռեֆորմի վողջ իմաստը, վերջ ի վերջո, այն էր, վոր բյուրգերականությունը պետք է լեզու գտներ գոյություն ունեցող կարգերի հետ, դուրս գալով միայն յեկեղեցական ֆեոդալիզմի դեմ: Թոմաս Մյունցերը չի գնում կոմպրոմիսի ճանապարհով: Նա հեղափոխականորեն բացասում է վոչ միայն ֆեոդալիզմն ու ֆեոդալական պետականությունը, այլև բացասում է ամեն մի դասակարգային հասարակություն և ամեն մի շահագործում: Մյունցերի յերազած հասարակությունը — կոմունիստական հասարակություն էր: Այդ պատճառով էլ Էնգելսը շատ բարձր էր գնահատում Թոմաս Մյունցերին:

Ինչ վերաբերում է Մյունցերի կրոնական քարոզներին, ապա այդ քող էր միայն իր հիմնական նպատակի՝ հասարակական հեղաշրջման, շահագործման և շահագործողների լիակատար վերացման՝ ուսմունքը տարածելու համար: Հավատը Մյունցերի համար վոչ այլ ինչ է, քան «բանականության արթնացումը մարդու մեջ, այդ պատճառով էլ հավատ կարող եյին ունենալ նաև հեթանոսները»[2]): Էնգելսը գտնում էր, վոր Մյունցերի «կրոնական փիլիսոփայությունը մոտենում է աթեիզմին»[3]):

Այսպիսով գերմանական այս շրջանի գրականության մեջ ցայտուն կերպով արտացոլվեցին այն հակասությունները և դասակարգային պայքարի կոնկրետ ձևերն ու արտահայտությունները, վորոնք բնորոշ եյին այդ դարաշրջանի համար: Էնգելսի նշած յերեք հիմնական հասարակական-քաղաքական լագերը՝ կաթոլիկական կամ ռեակցիոն, լյութերական-բյուրգերական-բարենորոգչական և հեղափոխական-մյունցերական — այդ բոլորն

1) Маркс и Энгельс, Собр. соч. т. XVIII, стр. 139.

2) Նույն տեղ, եջ 138:

3) Նույն տեղ, եջ 138:

իրենց ազդեցությունն ունեցան այդ դարաշրջանի գրականու-
թյան վրա։
Այդ դարաշրջանի գրականության վրա շատ ուժեղ ազդե-
ցություն գործեցին նաև գյուղացիական մեծ պատերազմները։
16-րդ դարի վերջերին արդեն հրապարակվում են չափածո թեր-
թեր, վորտեղ կոչ է արվում դուրս գալ իշխող կարգերի դեմ։
Ստեղծվում է գյուղացիական պոեզիա, վորից մեզ շատ քիչ
բան է հասել։ Մեզ հասած մի քանի յերգերից և բանաստեղծու-
թյուններից յերևում է, վոր այդ տիպի ստեղծագործություն-
ների մեջ ցայտուն կերպով արտահայտվել են գյուղացիության
դժգոհությունն ու ատելությունը իշխող դասակարգերի և գոյու-
թյուն ունեցող կարգերի դեմ։
Գերմանական Վերածնության դարաշրջանի գրականության
պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում նաև ժո-
ղովրդական բանահյուսությունը՝ ֆոլկլորը։ Այդ դարաշրջանի
ժողովրդական ստեղծագործությունների մեջ ամենահետաքրքիր
յերևույթներից մեկը յեղել է ժողովրդական գիրքը դոկտոր Ֆա-
ուստի մասին։
Հին պատմաբանները հետազոտելով Ֆաուստի առասպելը և
մեծ մասամբ յելնելով արտաքին սյուժետային առանձնահատ-
կություններից, յեկել են այն յեզրակացության, վոր Ֆաուստի
առասպելն ունի շատ հին ծագում։ Նույնիսկ վորոշ պատմաբան-
ներ պնդել են, վոր այդ առասպելն այնքան հին է, վորքան
ինքը՝ մարդկությունը։ Այդ տեսակետը վոչ մի քննադատության
չի դիմանում և ահա թե ինչու։
Դեռևս 4-րդ դարից մեզ հասել են բազմաթիվ առասպելներ,
վորտեղ մարդը հոգին վաճառում է սատանային, պայմանով,
վոր սատանան պարտավոր է իրագործելու նրա կամքը և բոլոր
ցանկությունները, վորից հետո, համաձայն պայմանագրի՝ նա
պետք է իր հոգին տա սատանային։ Այս տիպի առասպելների
արտաքին ֆաբուլային սխեման նման է Ֆաուստի լեգենդին,
բայց դրանից վոչ մեկը Ֆաուստ չէ։ Եյականն այստեղ վոչ թե
այդ պայմանագիրն է, այլ այն նպատակը, վորի համար կնքվում
է այդ պայմանագիրը։ Վերոհիշյալ առասպելների մեջ պայմա-
նագիրը կնքվում է բազմաթիվ նպատակներով, բացի այն նպա-
տակից, վորին հետապնդում է Ֆաուստը։ Այնտեղ մարդիկ իրենց

հոգին վաճառում են սատանային՝ հարստության, փառքի, սիրո
և այլ նպատակների համար։ Բացի այդ, այդ բոլոր վարիանտ-
ներն ունեն յերջանիկ վերջավորություն, հոգին վաճառողը մեղ-
քերը քավում է, սատանան այլևս չի կարող հոգին վերցնել,
պայմանագիրը չեղյալ է համարվում։ Այդ առասպելներից վոչ
մեկի մեջ մենք չենք հանդիպում այնպիսի պայմանագրի, հա-
մաձայն վորի՝ մարդը գիտության, գիտելիքների համար վաճա-
Հոգու վաճառքը գիտության համար –
ռեր իր հոգին սատանային։
այս է Ֆաուստի առասպելի վողջ եյությունը, իսկ նման թեմա-
յին մենք հանդիպում ենք միայն Վերածնության դարաշրջա-
նում։ Յեվ այդ հասկանալի յէ։ Բավական է այստեղ վերհիշել
այն հետաքրքրությունը, վոր առաջացավ դեպի գիտությունն
ու դեպի կյանքի բոլոր յերևույթների ճշմարիտ ճանաչումը Վե-
րածնության դարաշրջանում, վորպեսզի հասկանալի լինի, թե
ինչու Ֆաուստի տիպը կարող էր առաջանալ միայն այդ ժամա-
նակ։ Ֆաուստի լեգենդի հիմքում ընկած է հենց այդ անսահման
ծարավը դեպի գիտությունը, դեպի բնության գաղտնիքները
ճանաչելը, վորի համար էլ Ֆաուստը վաճառում է իր հոգին և
յերբեք չզղջալով այդ բանի համար, հերոսաբար կործան-
վում է։
Ֆաուստը, վորպես տիպ, և նրա առասպելը համաշխարհա-
յին գրականության պատմության մեջ նույն դերն է խաղացել,
ինչ անտիկ աշխարհի Պրոմեթեոսի առասպելը։ Բայց յեթե Պրո-
մեթեոսի տիպը ժողովրդական յերևակայության մեջ կարող էր
ստեղծագործվել միայն հույների մոտ, այն էլ հունական հասարա-
կության զարգացման վորոշ շրջանում, ապա նույն բանը պետք
է ասել նաև Ֆաուստի մասին։ Նա կարող էր ստեղծվել միայն
նոր ժամանակներում, այն մեծագույն դարաշրջանում, յերբ,
Ենգելսի բառերով ասած, առաջին անգամ մարդն ու աշխարհը
հայտնագործված է համարվում։ Ֆաուստը ժողովրդական յերևա-
կայության մեջ կարող էր ձևավորվել միայն Վերածնության
դարաշրջանում։
Յեվ իսկապես, Ֆաուստի անվանը ժողովրդական առասպել-
ների մեջ առաջին անգամ հանդիպում ենք 16-րդ դարի սկզբին
և այդ դարն էլ պետք է համարել Ֆաուստ առասպելի սկզբնա-
վորման շրջանը։

Մյուս, սուր վեճերի առարկա դարձած հարցն այն է, թե Ֆաուստը պատմական անձնավորություն է, թե յերևակայության ծնունդ։ Գրականագետների մի մասը գտնում է, վոր Ֆաուստը վորպես պատմական անձնավորություն գոյություն չի ունեցել, վոր նա գրքի հերոս է և վոչ թե պատմական-իրական անձնավորություն (Ռիկարդ, Նոդե, Հերման)։ Ուրիշները Ֆաուստին նույնացնում են գրքի տպագրության գյուտարարներից մեկի՝ Իոհան Ֆաուստի կամ Ֆուստի հետ (Վ. Հյուգո, Հ. Հայնե, Միսսոն և այլն)։ Յերրորդ խումբը (սրանց կարծիքը ավելի տարածված է) գտնում է, վոր Ֆաուստը վորպես պատմական անձնավորություն գոյություն է ունեցել։ Համաձայն դրանց տեսության, Ֆաուստը ապրել է 16-րդ դարում (առաջին կիսում), սովորել է Կրակովում, յերկար ժամանակ ապրել է Վիտենբերգում, վորպես կախարդ (մոգ) ճանապարհորդել է Իտալիայում և Գերմանիայում։ Վենետիկում փորձել է թռչել և օդ բարձրանալ, բայց անհաջողությամբ է վերջացել։ Այնուհետեվ 24 տարով պայմանագիր է կնքել սատանայի հետ, ժամկետը լրանալուց հետո սատանան հոգին վերցրել է։ Ասում են, թե անա այդ Ֆաուստն է յեղել ժողովրդական գրքի հերոսը։ Նույնիսկ բերում են նաև այսպիսի փաստեր. այժմ էլ գերմանական զանազան քաղաքներում կան փողոցներ և տներ, վորտեղ հին ավանդության համաձայն ապրել է Ֆաուստը։ Կան փողոցներ, վորոնք նույնիսկ կոչվում են նրա անունով։ Բայց այս փաստերը միայն վկայում են Ֆաուստի լայն ժողովրդական անուն ունենալու մասին։

«Ֆաուստի» բոլոր վարիանտների մեջ սովորաբար տարբերում են յերեք հիմնական խումբ. ա) Վերին Հռենոսյան, բ) Վիտենբուրգյան, գ) Երֆուրտյան։ Առաջին յերկու խմբի մեջ Ֆաուստը հանդես է գալիս վորպես կախարդ-շառլատան, իսկ Երֆուրտյան խմբի մեջ հանդես է գալիս վորպես հումանիստ։

16-րդ դարի վերջին «Ֆաուստի» առասպելը գրական վերամշակության է յենթարկվում և հրատարակվում։ Առաջին վերամշակությունը լույս տեսավ 1587 թվին Ֆրանկֆուրտում, գրավաճառ Իոհան Շպիսի հրատարակությամբ, այսպիսի վերնագրով.—«Դոկտոր Իոհան Ֆաուստի, հանրահայտնի կախարդի և գրբացի պատմությունը, թե ինչպես նա վորոշ ժամանակով և

վորոշ պայմանով պայմանագիր է կնքում սատանայի հետ, թե ինչպես այդ ժամանակամիջոցում նրա հետ չտեսնված արկածներ տեղի ունեցան մինչև վոր նա վերջապես արժանի պատիժ ստացավ։ Կազմված է մեծ մասամբ նրա սեփական և նրանից հետո մնացած ստեղծագործություններից և տպագրվում է վորպես դաս և նախազգուշացում բոլոր անաստված մարդկանց համար»։

Շպիսի վարիանտը «Ֆաուստի» հետագա պատմության մեջ շատ խոշոր դեր խաղաց։ Հետագա բոլոր վերամշակությունների սկզբնաղբյուրն այդ վարիանտն է, այդ պատճառով սրա հետ անհրաժեշտ է ավելի մոտիկից ծանոթանալ։

Շպիսի վարիանտից մենք իմանում ենք, վոր Ֆաուստը յեղել է գյուղացու վորդի։ Ծնողները յեղել են աստվածավախ և բարեպաշտ մարդիկ։ Նրանք իրենց վորդուն ուղարկում են Վիտենբերգ սովորելու։ Ֆաուստն այնտեղ ուսումնասիրում է աստվածաբանություն և լինելով մեծ ընդունակությունների տեր անձնավորություն՝ կարճ ժամանակամիջոցում ձեռք է բերում աստվածաբանության դոկտորի աստիճան։ «Բայց նա ուներ անմիտ և շփոթ գլուխ, այդ պատճառով էլ նրան անվանում էին խորհրդածող» ասվում է տեքստում։ Աստվածաբանությունից նա անցնում է բժշկության, աստղաբաշխության, մաթեմատիկայի և վերջապես իրեն նվիրում է կախարդության (մոգության)։ «Ուսերից կպցնելով արծվի թևեր, նա ցանկանում էր հետազոտել յերկինքը և յերկիրը և ամեն ինչ...»։

Մի անգամ, գիշերն անտառում, Ֆաուստը փորձում է կախարդել սատանային։ Սատանան հանդես է գալիս և ներկայանում է նրան Մեֆիստոֆել անունով։ Այնուհետև սատանայի հետ պայմանագիր է կնքում 24 տարով։ Պայմանագրի համաձայն Մեֆիստոֆելը պարտավորվում է իրագործել նրա բոլոր ցանկությունները ու պահանջները, վոր յերբ ժամկետը լրանա՝ Ֆաուստի հոգին վերցնի։

Պայմանագիրը կնքելուց հետո Ֆաուստն իրեն ամբողջովին նվիրում է մարմնական հաճույքին և առհասարակ վարում է շատ անառակ կյանք, իսկ Մեֆիստոֆելն իր հերթին աշխատում է բոլոր պայմաններն ստեղծել նրա համար։ Բացի այդ, նա Ֆաուստի հետ յերկար զրույցներ է ունենում բնության

տիեզերական չերևույթների և գիտական բազմաթիվ հարցերի մասին Մեֆիստոֆելի զրույցներից Ֆաուստը ծանոթանալով տիեզերքի կառուցվածքի և դժոխքի հետ, ցանկանում է իր աչքով այդ բոլորը տեսնել։

Այնուհետև մանրամասն նկարագրվում է Ֆաուստի ճանապարհորդությունը, նա Մեֆիստոֆելի հետ միասին լինում է չերկնքում, դժոխքում, թափառում է աշխարհի բոլոր ծայրերում։ Այս ճանապարհորդությունների ժամանակ Ֆաուստը բազմաթիվ արկածներ է ունենում։ Լինում է Հռոմի պապի մոտ, Պոլսում, սուլթանի պալատում, ընկնում է Կարլոս 5-րդի պալատը և Ֆաուստի ցանկությամբ Մեֆիստոֆելը կենդանացնում է Ալեքսանդըր Մակեդոնացուն և նրա կնոջը։

Այնուհետև նկարագրվում է Ֆաուստի խնջույքները ուսանողության շրջանում։ Սրանց ցանկությամբ նա կենդանացնում է Հեղինեյին, ինքը սիրահարվում է, ամուսնանում նրա հետ և ունենում որդի։

Մոտենում է պայմանագրի ժամկետը։ Ֆաուստը մեծ նախապատրաստություն է տեսնում։ Անում է վերջին կարգադրությունները, գրքերը հանձնում է իր աշակերտ Վագներին։ Ֆաուստը մահից սարսափում է։ Ընկնում է ծանր տրամադրության մեջ։ Նա սարսափում է, իսկ Մեֆիստոֆելը ծիծաղում է նրա վրա։ Մահվան օրվա նախօրյակին Ֆաուստը հրավիրում է իր ծանոթներին և ամբողջ գիշերը անց է կացնում նրանց հետ։ Հետևյալ գիշերը Ֆաուստի սենյակից լսվում են սարսափելի շըշուկներ և սուլոցներ, «կարծես ամբողջ սենյակը լցված էր օձերով»։ Լսվում է նաև Ֆաուստի ձայնը, վորը օգնություն է կանչում։ Առավոտյան, յերբ ուսանողները մտնում են նրա սենյակը, Ֆաուստին չեն գտնում։ Սենյակի բոլոր պատերը ներկված են արյունով, Ֆաուստի ուղեղը ցրված է սենյակի մեջ և կպած պատերին։ Սենյակի մի անկյունում ընկած են արյունաշաղախ աչքերը, իսկ մյուս անկյունում ատամները։ Ֆաուստի այլանդակված մարմինը գտնում են բակում, անասունների աղբակույտի մեջ։

Շպիսը իր հերոսի նկատմամբ բացասական վերաբերմունք ունի։ Նա Ֆաուստին դատապարտում է այն ժամանակվա կղերա-ֆեոդալական աշխարհայացքի տեսակետից։ Այս տեսակետից

շատ տիպական են այն բառերը, վորոնցով վերջանում է «Ֆաուստը». «Նրա անկման մեջ արտահայտվում է նրա մեծամտությունը, նրա համարձակությունն ու խելագարությունը, նման այն հսկաների, վորոնց մասին բանաստեղծները պատմում են, թե նրանք սարը սարի վրա բարձրացնելով, ցանկանում են պայքարել աստծո դեմ, կամ թե չար հրեշտակների նման հակադրվել աստծուն և այդ պատճառով էլ նրանք կործանվում են։ Այսպիսով, ով ցանկանում է բարձր սավառնել, նա ընկնում է ավելի մեծ բարձրությունից։ Նա ցանկանում էր թափանցել տիեզերքի և չերկնքի գաղտնիքների մեջ, հետազոտել մինչև նրանց հիմքը»։ Շպիսի վարկածում վորքան էլ աշխատել են Ֆաուստին ներկայացնել վորպես մի բախտախնդիր շառլատան, այնուամենայնիվ նրա տիտանական կերպարը, նրա ըմբոստ վոգին և գիտության ծարավը — այդ հիմնական գծերը չեն թաքցըվել։ Ֆաուստն այդ վարկածում դատապարտվում է հենց իր այդ գծերի համար։ Ֆաուստի կյանքի վերջը, որը նկարագրվել է սարսափելի գծերով, վորպեսզի ցույց տրվի, թե ամեն մեկը, ով կցանկանա մրցել աստծու հետ և թափանցել տիեզերքի գաղտնիքների մեջ, ով կցանկանա իմանալ այն, ինչ վոր կարող է իմանալ միայն աստված, նա իր կյանքը կվերջացնի Ֆաուստի նմանը։

Շպիսի հրատարակությունը մեծ հաջողություն ունեցավ։ Տասներեք տարվա ընթացքում նա հինգ հրատարակություն ունեցավ։ 1588 թվին լույս տեսավ Շպիսի վարկածի չափածո հրատարակությունը։

Մյուս վարկածը, վոր պատկանում է Գեորգ Ռուդոլֆ Վիդմանին, լույս տեսավ 1599 թվին։ Վիդմանի վարկածի մեջ Ֆաուստի տիտանական կերպարը ավելի յե աղավաղվում։ Նա այստեղ հանդես է բերվում վորպես մի սովորական կախարդ-շառլատան։ Այդ վարկածում դուրս է նետված Ֆաուստին հատուկ հիմնական գիծը — գիտության ծարավը և բնության ու տիեզերքի ճանաչման ձգտումը։

1674 թվին լույս տեսավ մի այլ վարկած, վորի հեղինակն է Նիկոլայ Պֆիցերը։ Այդ վարկածի մեջ նշանավորն այն է, վոր այդտեղ առաջին անգամ նկարագրվում է Ֆաուստի սիրո պատմությունը մի հասարակ գեղջկուհու հետ։ Ֆաուստը ցան-

կոնում է ամուսնանալ, բայց Մեֆիստոֆելը խանգարում է ցույց տալով Հեղինեյին։ Այդ գեղեցկուհին համարվում է Գյոթեի Գրետխենի նախատիպերից մեկը։

«Ֆաուստ» առասպելը մեծ հետաքրքրություն առաջացրեց ոչ միայն Գերմանիայում, այլև Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներում։ Նրա զանազան վարիանտները թարգմանվում են անգլերեն, ֆրանսերեն և հոլանդերեն։ «Ֆաուստ» լեգենդի առաջին լուրջ գեղարվեստական վերամշակմանը մենք հանդիպում ենք Վերածնության դարաշրջանի Անգլիայում։ 1588 թվին լույս տեսավ Շեքսպիրի նշանավոր նախորդներից մեկի, Քրիստոֆոր Մարլոյի ողբերգությունը՝ «Դոկտոր Ֆաուստի կյանքը և մահը» խորագրով։ Մարլոն մի կողմից հավատարիմ է մնում ժողովրդական լեգենդին, իսկ մյուս կողմից Ֆաուստի տիպը ավելի խորացնելով և հարստացնելով՝ նրան հասցնում է Վերածնության դարաշրջանի մտքի և կամքի տիտանների աստիճանին։

Գերմանական գրողների մեջ «Ֆաուստ» լեգենդի վրա առաջին անգամ ուշադրություն դարձրեց Լեսսինգը։ Նա նույնիսկ փորձեց դրամատիկական վերամշակման ենթարկել այդ թեման, բայց դժբախտաբար չվերջացրեց։

«Գրոհ և փոթորկի» շրջանում «Ֆաուստը» ավելի մեծ հետաքրքրություն առաջացրեց։ Այդ շրջանում լույս տեսան 39 առանձին վերամշակություններ։ Բայց բոլորին գերազանցեց Գյոթեն, իր «Ֆաուստ»-ով։

Գերմանիայի Վերածնության դարաշրջանի ժողովրդական գրականության մյուս նշանավոր գործը «Տիլ Ուլենշպիգելն» է, որի ամենահին վարիանտը վերաբերում է 1519 թվին (լույս է տեսել Ստրասբուրգում)։ Ուլենշպիգելի մասին նույնպես գրականության պատմության մասնագետների մոտ վեճեր են եղել։ Մի մասը պնդել է, թե նա եղել է պատմական անձնավորություն, մյուս մասը պնդել է, թե նա նույնպես գրքային հերոս է։ Իշխող տեսակետն այն է, որ նա պատմական անձնավորություն է։ Համաձայն այս տեսակետի՝ նա նույնպես եղել է գյուղացու որդի, ծնվել է 1350 թվին, Կնեյտլինգում։ Վարել է թափառաշրջիկ կյանք և Գերմանիայի զանազան շրջաններում արկածներ է ունեցել։ Հետո Ուլենշպիգելի կենսագրությունն

ընդունել է առասպելական շատ տարբեր գծեր, դառնալով առասպելական հերոս։

Դա նույնպես ժողովրդական գիրք է. Ուլենշպիգելը ժողովրդական հերոս է։ Նրա մեջ մարմնացած է ժողովրդի բացասական վերաբերմունքը իշխող հասարակական կարգերի և դասակարգերի նկատմամբ։ Ուլենշպիգելը շատ սրամիտ անձնավորություն է և այդ սրամտությունը նա ամբողջ թափով գործ է ածում իշխող դասակարգերին ծաղրելու ժամանակ։ Ամբողջ գործը թողնում է անեկդոտների տպավորություն և այդ պատճառով գերմանական պատմաբաններն այդ գործը համարում են անեկդոտների ժողովածու։

Ժողովրդական գրականության մեջ շատ էական տեղ էր գրավում նաև սատիրական գրականությունը։

Ամենատարածված ժանրերից մեկը շվանկն էր։

Շվանկները փոքրիկ, ուրախ բովանդակությամբ պատմվածքներ են։ Դրանք թե իրենց կառուցվածքով և թե շոշափած թեմաներով հիշեցնում են ֆրանսիական ֆաբլիոներին, մասնավորապես իտալական ֆացետիներին։ Նույնիսկ որոշ շվանկներ իրենցից ներկայացնում են ֆացետիների յուրահատուկ վարիանտներ։

Ժողովրդական շվանկների գրական վերամշակմամբ զբաղվել են շատ գրողներ։ Նրանց մեջ ամենից նշանավորներն են — Իոհան Պաուլի (1458—1530), որը հայտնի դարձավ իր շվանկների ժողովածույով, որ կոչվում է «Ծիծաղ և գործ»։ Լույս տեսավ նրա մահից հետո՝ 1552 թվին։

Բերենք Պաուլիի շվանկներից մի քանի օրինակներ.—

«Մի անգամ մի մարդ իր կնոջ հետ միասին նավով տեղ էր գնում։ Նավը ծանրաբեռնված էր այնպես, որ ճանապարհորդները ստիպված էին ծովը նետել իրենց ծանրոցները։ Երբ հերթը հասավ նրան, նա ասաց. «Իմ ունեցած իրերի մեջ ամենից ծանրը կնոջս լեզուն է։ Նրա լեզուն չեն կարող տանել ոչ իմ հարևանները և ոչ էլ ես»։

«Երկու քաղաքացիներ մի անգամ գնում էին Հռոմ, որ պապից այնտեղ իրենց մեղքերը քավելու համար կոնդակ ստանան։ Նրանցից մեկը շատ հարուստ էր, շատ փող ուներ և կարող էր կոնդակ ստանալու համար լավ վճարել և նրա միջոցով ա-

պատմել իր բոլոր մեղքերից և տանջանքներից: Իսկ մյուսը կարողացավ միայն խոստովանել մեղքերը և վերադարձավ:

Ճանապարհին հարուստը պարծենում էր իր հարստությամբ և կոնդակով և այդ թղթով շատ էր աղմկում: Բայց ահա մի քանի տարուց հետո պատահեց այնպես, որ յերկուսն էլ մահացան և հանդիպեցին դժոխքում: Զքավորը հարցրեց հարուստին.— «Մի՞թե դու յել այստեղ ես, ու՞ր են քո կոնդակները, որոնցով այնքան պարծենում էիր, ինչու չօգնեցին քեզ»: Հարուստը պատասխանեց.— «Լսիր պատմեմ, թե ինչ պատահեց ինձ հետ, յերբ մոտեցավ իմ մահվան ժամը: Ինձ ներկայացավ սատանան, որը անգրագետ էր և չկարողացավ կարդալ կոնդակը, իսկ իմ մյուս կոնդակները այրվել էին: Ահա և յես ընկա այստեղ»,

Շվանկների մյուս նշանավոր վերամշակողը Իորգ Վիկրամն էր: Նրա ժողովածուն՝ «Ճանապարհորդական գիրքը» լույս տեսավ 1555 թվին:

Վիկրամի շվանկները նույնպես ունեն նույն բնույթը և գրված են նույն ստեղծագործական սկզբունքներով: Վիկրամի մոտ հոգևորականության քննադատությունը ավելի սուր է: Նա մերկացնում է հոգևորականության այլասերված կյանքը, ցույց է տալիս, որ նրանց իսկական աղոթարանը գինետունն է, իսկ ամենասիրած աստվածը՝ գինին:

Ժողովրդական գրականության մյուս նշանավոր ժանրերից մեկն էլ Ֆաստնախտշպիլն էր (բարեկենդանային խաղ): Սրանք փոքրիկ չափածո կոմեդիաներ են, որոնք շատ տարածված էին Գերմանիայում 15—16-րդ դարերում: Այս ժանրի ծագումը սովորաբար կապում են բարեկենդանային տոների հետ, որի ժամանակ յերիտասարդության շրջանում այսպիսի սովորություն կար. յերիտասարդները թափառում էին քաղաքում և այս կամ այն փողոցում, որտեղ մեծ բազմություն կար կուտակված, ցուցադրում էին փոքրիկ տեսարաններ: Այդ ներկայացում-խաղերը սովորաբար ունեյին սատիրական բնույթ և ծաղրվում էր առօրյա կյանքից առնված այս կամ այն յերևույթը: 15-րդ դարից սկսած այս տիպի խաղերը ստանում են ավելի կազմակերպված բնույթ: Լայնանում է նաև այդ խաղերի թեման, պատկերացնում են որոշ տեսարաններ ընտանեկան կյանքից, ծաղրում են գյուղացիների միամտությունը, շոշափում են հաճախ քաղաքական և կրոնական թեմաներ:

Ֆաստնախտշպիլները մեծ հետաքրքրության առաջացրին գերմանական գրողների շրջանում, հատկապես 16-րդ դարում: Մի շարք գրողներ զբաղվում էին գերազանցապես այս ժանրով (Հանս Ռոզենպլյուտ, Հանս Ֆոլց և այլն): Բայց այդ բոլորի մեջ ամենախոշոր գրողը Հանս Սաքսն էր (1494—1576):

Սաքսը սովորաբար համարվում է այդ շրջանի գերմանական բյուրգերության ամենախոշոր գրողը:

Ծնվել է Նյուրնբերգ քաղաքում, դերձակի ընտանիքում: Մանկությունն ու ամբողջ կյանքն անց է կացրել հայրենի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է լատինական դպրոցում: Այնուհետև զբաղվել է արհեստով, յեղել է կոշկակար: Հենց այս շրջանում էլ նա մոտիկից ծանոթանում է ժողովրդական յերգիչների—մայստերզինգերների հետ և նրանց ազդեցության տակ ինքն էլ սկսում է բանաստեղծություններ գրել: Կյանքի վերջին շրջանում նա բավականին հարստություն է կուտակում, թողնում է իր արհեստը և զբաղվում է միայն գրական-ստեղծագործական աշխատանքներով:

Հանս Սաքսն աչքի յէր ընկնում իր առասպելական բեղմնավորությամբ: Նա թողել է վեց հազարից ավելի տարբեր տիպի ստեղծագործություններ—մայստերզինգերական, հոգևոր և աշխարհիկ բովանդակությամբ բանաստեղծություններ: Թողել է նաև յերկու հազար բանաստեղծություն՝ գրված, այսպես կոչված, շպրուխի ձևով (յերկտողանի բանաստեղծություն), յերկու հարյուրից ավելի դրամա: Իր այս բեղմնավորությամբ նա հիշեցնում է իսպանական դրամատուրգ Լոպե-դե-Վեգային: Յեվ հետաքրքիրն այն է, որ ոչ միայն գրում էր, այլև նրա բոլոր դրամաները բեմադրվում էին նրա անձնական ղեկավարությամբ:

Սաքսը յեղել է բազմաժանր գրող: Գրել է չափածո և արձակ շվանկներ, մայստերզինգերական յերգեր, մեծ մասամբ սիրային բնույթի, գրել է ֆաստնախտշպիլներ և հոգևոր յերգեր:

Այս բոլոր գործերի մեջ Սաքսը տալիս է իր դարաշրջանի ռեալիստական պատկերը: Նրա ստեղծագործությունների մեջ ծաղրվում են բոլոր իշխող դասակարգերը, հոգևորականությունը, նրանց կենցաղային այլանդակությունները, միջնա-

դարյան սխոլաստիկան։ Նրա համակրանքը լայն ժողովրդական մասսաների կողմն է, արհեստավորության կողմը։ Բայց միաժամանակ Սաքսը ծաղրել է նաև գյուղացիության միամտությունը, նրա անմիտությունը։

Սաքսի դրամաների (ֆարսերի) մեջ լավագույն գործերից մեկը համարվում է «Դպրոցականը դրախտում»-ը։ Գործող անձերն են՝ թափառող դպրոցականը, գյուղացին և նրա կինը։

Գեղջկուհու առաջին ամուսինը մահացել է, նա ամուսնացել է յերկրորդ անգամ և խիստ դժգոհ է իր ամուսնական կյանքից։ Հաճախ հիշում է նա իր նախկին ամուսնուն և նրան համեմատելով յերկրորդ ամուսնու հետ՝ գալիս է այն յեզրակացության, որ վերջինս ժլատ է, բռնակալ, դաժան։ Նա խորապես համոզված է, որ իր նախկին ամուսինն այժմ գտնվում է դրախտում։ Նրա այս միամտությունը շահագործելով, դպրոցականը[1]) հավատացնում է նրան, որ ինքը յեկել դրախտում և տեսել է նրա ամուսնուն։ Գեղջկուհին հարցնում է իր ամուսնու առողջության և նրա ապրելակերպի մասին։ Դպրոցականը հավատացնում է, որ նրա ամուսինն ապրում է մեծ կարիքի մեջ, հագուստները մաշվել են, ուտելու վոչինչ չունի և այլն։ Յերբ գեղջկուհին իմանում է, որ դպրոցականը նորից դրախտ է գնալու, շատ է ուրախանում։ Պատրաստում է մի կապոց, կապոցի հետ միասին դպրոցականին է հանձնում իր խնայած վոսկիները և խնդրում, որ այդ բոլորը հանձնի ամուսնուն։ Դպրոցականը խոստանալով, իրեն հանձնված իրերը և վոսկին վերցնելով գնում է։

Գեղջկուհին ամեն ինչ պատմում է իր ամուսնուն։ Գյուղացին հասկանում է, որ կնոջը խաբել են, ձի յե նստում և հետևում է դպրոցականին։ Ճանապարհին հանդիպում է նրան, բայց դպրոցականը խաբելով գյուղացուն՝ նրա ձին նույնպես հափշտակում է և այնպես է անհետանում, որ գյուղացին չի կարողանում գտնել։ Վախենալով, որ կինը իր վրա կծիծաղի, վերադառնալով տուն, նա կնոջը հավատացնում է, որ ձին նույնպես դպրոցականի հետ միասին ուղարկեց նվեր նրա ամուսնուն։

1) Այսպես էին կոչվում Գերմանիայում գրագետ մարդիկ։ Այդ տերմինը մեծ մասամբ գործ եր ածվում, յերբ խոսք եր լինում միջնադարյան շառլատան գիտնականների մասին։

Այս գործից յերևում է, որ Սաքսը ծաղրում է միջնադարյան գիտնականների շառլատանությունը, բայց դրա հետ միասին ծաղրում է նաև գյուղացիների միամտությունն ու դյուրահավատությունը։ Գյուղացիների միամտությունը ծաղրված է նաև նրա այլ ֆաստնախշպիլներում (օր. «Ֆյուզինգենյան կոնկրատ» և այլն)։

Հանս Սաքսից հետո գերմանական գրականության մեջ մինչև 18-րդ դարը խոշոր յերևույթների չենք հանդիպում, բացի մի գրողից, վորի մասին անհրաժեշտ է մի յերկու խոսք ասել։ Դա Հանս Յակոբ Գրիմմելսհաուզենն է (1625—1676), վորը հայտնի դարձավ իր «Սիմպլիցիսիմուսի Արկածները» (1668 թ.) գործով։

Այստեղ ամենալայն կտավի վրա ներկայացված է Գերմանիայի հասարակական-քաղաքական կյանքը՝ յերեսնամյա պատերազմների շրջանում։ Գործը գրված է պիկարոյական վեպի սկզբունքներով։ Հերոսը ամենատարբեր տիպի աշխատանքներ է տանում և ծառայում է շատ մարդկանց մոտ—հովիվ, խոհարար, վորսորդ, ծառա, զինվոր, հայթուկ, դերասան, մուրացկան, գող, վանական, ճգնավոր, մի խոսքով ամեն ինչ։

Սիմպլիցիսիմուսին ծառայեցնելով բազմաթիվ մարդկանց մոտ—այդ պրիոմով հեղինակը հնարավորություն է ունենում բնութագրել իր ժամանակաշրջանի բոլոր դասակարգերին և հասարակական խավերին։ Հեղինակի վերաբերմունքը դեպի իշխող դասակարգերը բացասական է։ Բացի այդ, վեպի մեջ ներկայացված է յերեսնամյա պատերազմների բոլոր սարսափները, նրա կործանարար ազդեցությունը տնտեսական կյանքի վրա և նրա ծանր հետևանքները մասնավորապես գյուղացիության համար։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Письма темных людей», пер. Н. Куна, изд. «Academia» 1935 г.

2. Эразм Роттердамский «Похвальное слово глупости», 1938 г.

3. Пуришев. «Хрестоматия по западно-европейской литературе эпохи Возрождения и XVIII века», 1937 г.

4. Мокульский. «Хрестоматия по истории западно-европейского театра», 1937 г., М. т. I.

5. Маркс и Энгельс. «Собр. соч.» т. VIII.

6. «Մարքսը և Ենգելսը արվեստի մասին»:

7. А. А. Гвоздев. «История западно-европейской литературы», 1935 г.

8. Луначарский. «Западно-европейская литература в ее важнейших моментах», 1930, т. I.

9. Коган, П. С. «Очерки по истории западно-европейской литературы», т. I., 1928 г.

10. Де ла Барт. «Беседы по истории всеобщей литературы», т. I. 1914.

11. Н. Стороженко. «Очерки по истории западно-европейской литературы», 1916 г.

ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Ֆրանսիան 16-րդ դարում հանդիսանում եր Արևմտյան Յեվրոպայի ամենամեծ պետություններից մեկը թե իր տերիտորիայով և թե իր ազգաբնակչության քանակով: Յեթե 15—16-րդ դարերի Գերմանիան աչքի յեր ընկնում իր քաղաքական-հասարակական մասնատված սիստեմով, ապա Ֆրանսիան Վերածնության դարաշրջանից սկսած արդեն հանդես ե գալիս վորպես կենտրոնացված դասային միապետության օրինակելի յերկիր: Կապիտալիզմի զարգացումը մի կողմից քայքայում ե ֆեոդալական հին հարաբերությունները, իսկ մյուս կողմից նպաստում ե յերկրի միացմանը մի պետության մեջ: Ֆրանսիական միապետությունը, վորը վերջնականապես ամրացված և հզոր ուժ դարձավ 16-րդ դարում, հաջողում ե վերջնականապես փշրել ֆեոդալական ազնվականության դիմադրությունը: Այդ ազնվականության մի մասը վոչնչացվեց, իսկ մյուս մասը ստիպված յեղավ յենթարկվելու թագավորին:

Ֆրանսիական միապետության հզորացման հետ միասին սկսվում ե ֆրանսիական միապետների նվաճողական քաղաքականությունը հարևան յերկրների դեմ: 1495 թվին ֆրանսիական հսկայական բանակն անցնում ե Ալպյան լեռները և վոտք ե դնում Իտալիա: Դրանից հետո ֆրանսիական բանակը նորից մի քանի անգամ գրավում ե Իտալիայի զանազան մասերը: Այս արշավանքները դեպի Իտալիա՝ Ֆրանսիայի համար այն նշանակությունն ունեցան, վոր ֆրանսիացիները ծանոթացան իտալական հումանիստական կուլտուրայի հետ: Ինչպես մի ժամանակ հռոմեացիներն իրենց յենթարկելով Ելլադան, յենթարկվեցին հունական կուլտուրային, փիլիսոփայությանն ու գրականությանը, այնպես ել այժմ ֆրանսիական բարոնները մտնելով Ֆլորենցիա և Նեապոլ՝ ապշահար կանգնեցին արվեստի խոշորագույն հուշարձանների առաջ:

Ֆրանսիական ամենախոշոր թագավորը 16-րդ դարում Ֆրանցիսկ I եր: Նրա որոք բացարձակ միապետությունը հաս-

նում է իր զարգացման բարձր աստիճանին։ Նա իր հրաման-
ների մեջ միշտ գրում էր.—«Այս է իմ բարի կամքը»—և գըտ-
նում էր, վոր այդ բավական է նոր օրենքները հաստատելու
համար։

Ֆրանցիսկ I շարունակում էր նախորդների նվաճողական
քաղաքականությունը Իտալիայի և այլ երկրների նկատմամբ։
Այդ շրջանում իտալական կուլտուրայի և գրականության ազդե-
ցությունը ֆրանսիական կուլտուրայի ու գրականության վրա
ավելի է ուժեղանում։ Հին, միջնադարյան հաստ պարիսպնե-
րով շրջապատված ամրոցների փոխարեն, վորոնց փոքրիկ և
նեղ պատուհաններից հազիվ էին արևի ճառագայթները ներս
թափանցում, այժմ կառուցում են լուսավոր և փառահեղ պա-
լատներ, իսկ պարիսպները փոխարինվում են շքեղ պարտեզ-
ներով։ Պալատները զարդարվում են Իտալիայից վորպես ավար
հափշտակված արձաններով և արվեստի այլ հուշարձաննե-
րով։ Իտալական նշանավոր քանդակագործներն ու նկարիչները
հրավիրվում են պալատ, իտալական գրողների գործերը թարգ-
մանվում են ֆրանսերեն։ Կուլտուրայի և գրականության
«կենտրոնը» դառնում է պալատը և պալատական հասարակու-
թյունը։

Ֆրանսիայի համակենտրոնացումը մի միասնական պե-
տության մեջ և կենտրոնական իշխանության ցանցի տարա-
ծումը ամբողջ երկրում, նպաստում է միասնական-գրական
լեզվի ստեղծմանը։ Ֆրանցիսկ I շատ լավ էր հասկանում, վոր
հսկայական երկիրը կառավարելու համար անհրաժեշտ էր ըս-
տեղծել պետական գրագետ պաշտոնյաների մի հսկայական բա-
նակ, վորը կարողանար հասկանալ թագավորի վարած քաղա-
քականությունը, հրատարակված օրենքները և կիրառեր տե-
ղում։ Այս է պատճառը, վոր Ֆրանցիսկը մեծ ուշադրություն էր
դարձնում պաշտոնյաների լուսավորության վրա։ Նա հիմնում
է դպրոցներ, նույնիսկ մի հատուկ բարձրագույն դպրոց, վոր
հայտնի դարձավ College de France անունով, վորտեղ պետք է
սովորեին պետական ապագա բարձր և ստորին պաշտոնյանե-
րը։ Այդ դպրոցներում ուսումնասիրում էին հունարեն և լատի-
ներեն լեզուները, անտիկ գրականությունը, փիլիսոփայություն,
բժշկագիտություն, մաթեմատիկա և այլն։ Գործը լավ կազմակեր-

պելու համար Ֆրանցիսկը նույնիսկ ցանկանում էր հիմնած բար-
ձրագույն դպրոցի դիրեկտոր նշանակել Էրազմ Ռոտտերդամցուն։

16-րդ դարի Ֆրանսիայում ամեն ինչ այդպես հաշտ ու
խաղաղ չէր գնում։ Այդ դարաշրջանի Ֆրանսիան նշանավոր է իր
դասակարգային սուր պայքարով և կրոնական պատերազմներով։

Գերմանական ռեֆորմացիան ունեցավ իր կողմնակիցները
նաև Ֆրանսիայում։ Հատկապես 16-րդ դարի առաջին քառամ-
յակում լյութերականությունը լայն տարածում է գտնում Ֆ-
րանսիայում, իսկ 1536 թվին լույս է տեսնում Կալվինի (1509—
1564) նշանավոր աշխատությունը—«Instituti Religionis Chris-
tianae», վորն անմիջապես թարգմանվեց ֆրանսերենի։

Ֆրանսիական պալատական շրջաններում կրոնական ռե-
ֆորմացիայի գաղափարները սկզբում բարյացակամ վերաբեր-
մունքի արժանացան։ Այդ հանգամանքը հնարավորություն
տվեց Կալվինին իր աշխատությունը նվիրել Ֆրանցիսկ I-ին։
Բայց կաթոլիկական կրոնի գաղափարները պաշտպանելու համար
հանդես է գալիս Սորբոնը, աստվածաբանական ֆակուլտետնե-
րի գլխավոր կենտրոնը միջին դարերում, և թագավորից պա-
հանջում է ամենախիստ միջոցներ ձեռք առնել «հերետիկոս լյութե-
րականների» նկատմամբ։ Բայց երբ մի օր առավոտյան Փարիզի
փողոցների պատերին և նույնիսկ թագավորի ննջարանի դռանը
տեսան բողոքականների փակցրած կոչերը, ուղղված կաթոլիկա-
կան յեկեղեցու և ռոմապետության դեմ, հալածանքը բողոքա-
կանների նկատմամբ ուժեղացավ։ Կալվինականներն այլևս չէ-
ին կարող անպատիժ կերպով շարունակել իրենց գործունեու-
թյունը։ Մահվան է դատապարտվում Դոլեն (Dolet) այն բա-
նի համար, վոր համարձակվել էր թարգմանել Սոկրատեսին
վերագրվող հետևյալ փրազը.—«Մահվանից հետո դու կլինես
վոչինչ»։ Դոլեյին մեղադրեցին վոգու անմահությունը բացա-
սելու մեջ, տանջեցին և խարույկի վրա կենդանի այրեցին։
Խարույկ է բարձրացվում և այրվում նաև Բերկեն, Լյութերի և
Էրազմ Ռոտտերդամցու թարգմանիչը։ Այդ պայմաններում Կալ-
վինը այլևս չէր կարող գործել Ֆրանսիայում։ Նա փախչում է
Շվեյցարիա՝ Ժնև և այնտեղից շարունակում իր պայքարը կա-
թոլիկության և միջնադարյան սխոլաստիկայի դեմ։

Էնգելսն իր «Լյուդվիգ Ֆեյերբախ» աշխատության մեջ այսպես է բնութագրում կալվինականությունը.—«Սակայն բացի գերմանացի Լյութերից կար նաև ֆրանսիացի Կալվինը։ Զուտ ֆրանսիական կտրուկությամբ նա առաջին պլանը մղեց ռեֆորմացիայի բուրժուական բնույթը, յեկեղեցուն տալով հանրապետական, դեմոկրատական բնույթ։ Մինչդեռ լյութերական ռեֆորմացիան դեհեկացվում էր Գերմանիայում, այդ յերկիրը տանելով դեպի կործանում, կալվինական ռեֆորմացիայի դրոշի տակ համախմբվեցին հանրապետականները Ժնևում, Շոտլանդիայում և Հոլանդիայում, և հոլանդացիների կողմից տարվեց պայքար իրենց ազատագրման համար իսպանական տիրապետությունից և գերմանական կայսրությունից։ Նույն այդ կալվինիստական ռեֆորմացիան իդեոլոգիական կոստյում մատուցեց բուրժուական հեղափոխության յերկրորդ գործողությանը, վոր տեղի ունեցավ Անգլիայում։ Այստեղ կալվինիզմը հանդիսացավ այն ժամանակվա բուրժուազիայի շահերի կրոնական ցայտուն արտահայտություն...»[1])։

Սակայն չնայած պետության ձեռք առած միջոցներին, կալվինիզմը մեծ հաջողությամբ տարածվում էր սկզբում բուրժուազիայի և արհեստավորության, իսկ հետո ազնվականության վորոշ շրջաններում։ Կալվինականությամբ տարվեց ազնվականության այն մասը միայն, վորը չէր հաշտվում իր կախյալ վիճակի հետ։ Ազնվականության այդ մասը ցանկանում էր լինել անկախ։ Մյուս կողմից մանր ազնվականությունը մեծ նախանձով էր նայում կաթոլիկական յեկեղեցու հողերին և բոլորովին էլ դեմ չէր լինի, յեթե այդ հողերի մի մասն ստանար թեկուզ բռնագրավման ճանապարհով։ Կալվինականության սկզբունքներից մեկն էլ հենց այդ յեկեղեցական հողերի բռնագրավումն էր. ահա թե ինչու ազնվականության այդ մասը հարեց կալվինականությանը։

Կալվինականներին Ֆրանսիայում սկսեցին անվանել հուգենոտներ։ Հուգենոտները դարձան այնքան հզոր ուժ, վոր սկսեցին բռնագրավել կաթոլիկական յեկեղեցական հողերը։ Հուգենոտների և կաթոլիկների միջև յեղած հակասություննե-

1) Маркс и Энгельс, «Соч». Т, XIV, стр. 675.

րըն ավելի սրվեցին, ու վերջ ի վերջո սկսվեց պատերազմ նըրանց միջև։ Յերեսուն տարվա ընթացքում տեղի ունեցավ տասը մեծ ճակատամարտ։ Հուգենոտներին վոչնչացնելու համար կաթոլիկները օգտագործեցին Հենրիխ Նավարացու հարսանեկան հանդեսը։ 1572 թվի օգոստոսին հռչակավոր հուգենոտներ Նավարացու հարսանեկան հանդեսի առթիվ հավաքվել եյին Փարիզ։ Օգոստոսի նախօրեյին, կաթոլիկները հուգենոտներին կոտորելու բոլոր նախապատրաստությունները տեսնելուց հետո, գիշերը սկսում են արյունահեղ կոտորածը, յերբ բոլոր հուգենոտները քնած եյին և վոչինչ չգիտեյին նախապատրաստվող դավադրության մասին։ Պատմաբանների վկայությամբ, այդ գիշերը, վորը հայտնի յե Բարդուղիմյան գիշեր անունով, կոտորվեցին յերեսուն հազար հուգենոտներ։

Ահա այդ պայմաններում գործեցին ֆրանսիական Վերածնության դարաշրջանի հումանիստները։

Վերևում նշվեց, վոր 16-րդ դարում իտալական հումանիստական կուլտուրայի և գրականության ազդեցությունը բավականին ուժեղանում է Ֆրանսիայում։ Բայց ֆրանսիական հումանիզմի առաջացումը և զարգացումը չի կարելի բացատրել միայն իտալական ազդեցությամբ։ Այդ ազդեցությունը միայն խթան էր, արտաքին մի հանգամանք, բայց վոչ էյական պատճառ։ Էյական պատճառը ֆեոդալական կարգերի քայքայումը և նոր, բուրժուական հարաբերությունների ձևավորումն էր Ֆրանսիայում։ Այս տեղ նույնպես հումանիստական շարժումը, և առհասարակ վողջ Վերածնունդը, ֆեոդալական Ֆրանսիայի բուրժուական զարգացման հետևանք էր։ Այստեղ նույնպես հումանիզմի էյական հակառակորդներից մեկը ֆեոդալիզմն էր, կաթոլիկական յեկեղեցին, միջնադարյան ասկետիզմն ու սխոլաստիկան։ Հումանիստների պայքարն այստեղ նույնպես ամենից առաջ ուղղված էր միջնադարի դեմ։ Ֆրանսիական հումանիստները նույնպես զբաղվում եյին կլասիկ լեզուների (հունարեն, լատիներեն) ուսումնասիրությամբ, անտիկ գրականության և փիլիսոփայության ուսումնասիրությամբ. նրանք նույնպես հավաքում են ձեռագրերը, թարգմանությամբ են զբաղվում, մի խոսքով կատարում են այն, ինչ վոր Արևմտյան Յեվրոպայի մյուս յերկրների հումանիստները։ Ֆրանսիական հումանիստները գոր-

ծում էին կենտրոնացված պետության պայմաններում։ Բայց այդ, ֆրանսիական հումանիստների պայքարը միջնադարյան սխոլաստիկայի և կաթոլիկական յեկեղեցու դեմ համեմատաբար ավելի հեշտ եր այն իմաստով, վոր նրանք հենվում եյին իտալական և գերմանական հումանիստների փորձի վրա։

Ֆրանսիական հումանիզմը միատարր հոսանք չեր։ Այդ շարժման մեջ ընդգրկված եյին մարդիկ, վորոնք իրենց քաղաքական-հասարակական համոզմունքներով կապված եյին ազնըվականության հետ և հետաքրքիր ե նշել, վոր այս կարգի հումանիստներն իտալական գրականությունից ոգտագործում եյին այն շրջանի գործերը, յերբ հումանիզմն Իտալիայում քաշվել եր պալատական-ազնվական շրջանները և իր կապերը կտրել եր լայն ժողովրդական ակունքներից։ Իսկ այն հումանիստները, վորոնք ավելի հետեվողական եյին իրենց հայացքների մեջ և ամեն ինչ եյին, բայց վոչ սահմանափակ բուրժուաներ, այս հումանիստները խիստ կերպով հալածվում եյին Ֆրանսիայում և նույնիսկ բարձրացվում եյին խարույկ։

Առհասարակ պետք ե նշել, վոր վոչ մի քննադատություն չի դիմանում այն լեգենդը, վոր հյուսել են բուրժուական պատմաբանները Ֆրանցիսկ I-ի մասին։ Յեթե հավատալու լինենք այդ պատմաբաններին, ապա պետք ե ընդունենք, վոր ֆրանսիական Վերածնության դարաշրջանի վողջ կուլտուրան և հումանիստական գրականությունն իր գոյությամբ պարտական ե Ֆրանցիսկ I-ին և նրա պալատին։ Ճիշտ չե նաև այն հորջորջումը, վոր տրվում ե Ֆրանցիսկին — «հումանիստների պաշտպան», «հովանավորող» և այլն և այլն։ Իրականությունն այն ե, վոր յեթե 15-րդ դարի վերջին և 16-րդ դարի սկզբին ֆրանսիական միապետությունը բարյացակամ վերաբերմունք ուներ դեպի հումանիզմը և հումանիստական շարժումը, ապա հետագայում, յերբ այդ շարժումը ծավալվեց և ավելի ցայտուն դըրսեվորեց իր հակակղերական և հակաֆեոդալական եյությունը, ֆրանսիական միապետությունը և մասնավորապես Ֆրանցիսկ I փոխեց իր վերաբերմունքը հումանիստների նկատմամբ։ Պետությունը վոչ միայն հալածում եր հումանիստներին, բանտ նստեցնում և տանջում, այլ և խարույկ եր բարձրացնում հրապարակորեն և այրում։

Պարզ ե, վոր այդ պետությունը չեր կարող հումանիստների անկեղծ բարեկամը լինել։

Ֆրանսիական Վերածնության դարաշրջանի գրականության պատմությունը սովորաբար սկսում են Մարգարիտ Նավարացու խմբակից։

2. ՄԱՐԳԱՐԻՏ ՆԱՎԱՐԱՑԻ ԿԱՄ ՎԱԼՈՒԱ
(1492—1549)

Ֆրանսիական վերածննդի կարեվորագույն օջախներից մեկը Լիոնն եր։ Հակառակ Սորբոնի, միջնադարյան դոգմաների և սխոլաստիկայի այդ հենարանի, Լիոնը Փարիզից ավելի շուտ ե դառնում հումանիստական շարժման կենտրոնը։ Այդ յերեվույթը սովորաբար բացատրում են նրանով, վոր Լիոնը իր աշխարհագրական դիրքով հնարավորություն ունեցավ Իտալիայի հետ ավելի շատ կուլտուրական-հասարակական շփում ունենալ, քան Փարիզը։ Յեվ նույնիսկ պատմում են այսպիսի առասպել. յերբ Լիոնի բանաստեղծներից մեկը բացեց Պետրարկայի յերգած Լաուրայի գերեզմանը, այդ մեծ խթան հանդիսացավ Պետրարկայի ստեղծագործությունների ուսումնասիրության համար։ Ինքը, Ֆրանցիսկ I ուղեվորվեց Ավինիոն Լաուրայի գերեզմանը տեսնելու նպատակով և նույնիսկ գրեց Լաուրային նվիրված մի բանաստեղծություն։ Կարամզինի «Ռուս ճանապարհորդի նամակները» գործից մենք գիտենք, վոր նույնիսկ 18-րդ դարի վերջերին գնում եյին Ավինիոն Լաուրայի գերեզմանը տեսնելու համար։ 19-րդ դարում միայն վերջնականապես ապացուցվեց, վոր վոչ մի հիմք չկա պնդելու, թե այդ գերեզմանը այն Լաուրայի գերեզմանն ե, վորին յերգել ե Պետրարկան։

Այդ առասպելը հետաքրքիր ե միայն այն տեսակետից, վոր Լիոնում մեծ հետաքրքրություն ե առաջացնում դեպի յեվրոպական առաջին հումանիստ՝ Պետրարկայի գործերը։ Պետրարկիզմով տարվում են այդ ժամանակվա Լիոնում բնակվող գրեթե բոլոր բանաստեղծները։

Պետրարկիզմ ասելով այն ժամանակ հասկանում եյին վոչ միայն բանաստեղծական հատուկ վոճ, պատկերավոր լեզու, այլ և սերը, վորպես իդեալական ձգտում։ Նույնիսկ շատ գործածա-

կան էր դարձել այնպիսի արտահայտություն, ինչպիսին էր «Սիրել այնպես, ինչպես Պետրարկան էր սիրում»։ Սերն այստեղ հասկացվում էր պլատոնական իմաստով։

Ահա այս լեռնական շարժմանը հարեց Մարգարիտ Նավարացին։

Մարգարիտը Ֆրանցիսկ I-ի քույրն էր, բայց վոչ մի կողմով նման չէր իր յեղբորը։ Նա յեղել է իր ժամանակվա ամենազարգացած կանանցից մեկը։ Ստացել է փայլուն կրթություն, բայց յերբեք չի բավարարվել այն գիտելիքներով, վոր ձեռք էր բերել ուսման ժամանակ։ Ազատ իմացել է մի շարք լեզուներ — լատիներեն, հունարեն, գերմաներեն, իսպաներեն։ Զբաղվել է նաև հրեական լեզվով։ Բանաստեղծուհին ծեր տարիքում ձեռնարկում է հունարեն լեզվի ուսումնասիրությանը և ինչպես կենսագիրներն են պատմում, գիշեր-ցերեկ զբաղվում է այդ աշխատանքով։ Այդ ժամանակաշրջանի գրեթե բոլոր հումանիստները մեծ հարգանքով են խոսում Մարգարիտի մասին և չկար մի հումանիստ, վոր նրան բանաստեղծություն նվիրած չլիներ։ Իսկ ինքն իր հերթին միշտ պաշտպանել և հովանավորել է իր ժամանակվա հալածվող հումանիստներին։ Նրա մոտ ապաստան ունեյին այդ ժամանակվա բոլոր գրողները — Կլեման Մարոն, Բոնավենտուր Դեպերյեն, Ֆարելը, Սենտ-Մարտը, Ռուսելը և նույնիսկ Կալվինը։ Մարգարիտը յերկու անգամ դատարանի ձեռքից և մահապատժից ազատեց Բերկենին։

Մարգարիտը յեղել է իր ժամանակվա նշանավոր գրողներից մեկը։ Նա հայտնի դարձավ իր բանաստեղծությունների ժողովածույով, վոր լույս տեսավ այսպիսի վերնագրով — «Պրինցեսսա Մարգարիտի մարգարիտները» (1547 թ.)։

Այդ ժողովածույում հավաքված բանաստեղծությունները գրված են Պետրարկայի ուժեղ ազդեցության տակ, բայց մեծ մասամբ ունեն կրոնական-դիդակտիկական բնույթ։ Բանաստեղծություններից պարզ յերևում է, վոր հեղինակը տարված է ռեֆորմացիայի հովերով։ Նա նույնիսկ գրել է մի պոեմ՝ «Հանցավոր վոգու հայելին», վորտեղ շարադրել է իր հայացքները կրոնի մասին։ Պետք է նշել, վոր իր գործով և առհասարակ իր ժողովածույով Մարգարիտը շատ թելերով կապված է միջին դարերի, միջնադարյան աշխարհայացքի և կրոնի հետ։ Նրա

հասարակական-քաղաքական համակրանքը ազնվականության կողմն է։ Բայց մյուս կողմից նրա այդ ժողովածույից յերևում է, վոր Մարգարիտը տարվել է նաև հումանիզմի գաղափարներով։

Նավարացու ամենանշանավոր ստեղծագործությունը, վորով նա մեծ համբավ ձեռք բերեց, այդ նրա նովելլաների ժողովածուն է — «Հեպտամերոն»-ը։ Այդ գործը գրված է 1540—1549 թ. թ. շրջանում, բայց առաջին անգամ լույս տեսավ հեղինակի մահից հետո, 1558 թվին։

Հետևելով Բոկաչչիոյին, Մարգարիտը ցանկանում էր գրել Դեկամերոն (տասն օր), բայց կարողացավ գրել միայն յոթանասուներկու նովելլա, այդ պատճառով էլ նրա ժողովածուն կոչվում է «Հեպտամերոն», վոր նշանակում է յոթ օր։

«Հեպտամերոնը» իր կառուցվածքով հիշեցնում է «Դեկամերոնին»։ Պատկերացվում էր, թե ինչպես հինգ յերիտասարդ աղջիկ և հինգ տղա, պիրենյան ջրերից վերադառնալու ժամանակ, ճանապարհին ստիպված են լինում մի քանի օր ապաստել, վորովհետև գետը վարարել է և ափերից դուրս յեկել։ Ժամանակն ուրախ անցկացնելու նպատակով վորոշում են հերթով ուրախ նովելլաներ պատմել, ճիշտ այնպես, ինչպես Բոկաչչիոյի յերիտասարդները։ Բայց այդ նմանությունը արտաքին է միայն։ Բոկաչչիոյի մոտ, յեթե ամեն մի օրվա նովելլաները և ամեն մի նովելլան առանձին վերցրած մի ինքնուրույն ամբողջություն կազմելուց բացի, ներքին տրամաբանական կապով միացված է ամբողջ գործի մեջ, ապա նույն բանը չի կարելի ասել «Հեպտամերոնի» մասին։ Այդ ամուր տրամաբանական կապը բացակայում է այստեղ։ «Հեպտամերոնը» նովելլաների սովորական ժողովածու է։

«Հեպտամերոնի» և «Դեկամերոնի» մեջ շոշափված պրոբլեմների տեսակետից նույնպես կան արտաքին նմանություններ։

Նովելլաների բովանդակությունը մեծ մասամբ սիրային է։ Թեման գլխավորապես առնված է գրավոր և բանավոր աղբյուրներից։ Նովելլաների մի մասի գլխավոր հերոսը Ֆրանցիսկ I է, ինքը հեղինակը նույնպես հանդես է բերված Պարլամենտ անունով։ Հանդես է բերված նաև Մարգարիտի մայրը Ոյզիլ ծածկանվան տակ։

«Հեպտամերոնում» Մարգարիտը բոլորովին չի հետապնդում այն նպատակը, որով ղեկավարվել է Բոկաչչոն իր «Դեկամերոնը» գրելու ժամանակ։ Մարգարիտը չի զբաղվում հոգևորականության և միջնադարյան սխոլաստիկայի մերկացմամբ։ «Հեպտամերոնի» բոլոր նովելլաների առանցքը մեծ մասամբ սերն է, բայց ոչ այն սերը, որ նկարագրում է Բոկաչչոն։ «Հեպտամերոնում» խոսվում է ոչ թե այն մասին, թե ինչպես է հանդես գալիս սերը իր «բնական» վիճակում, այնպես, ինչպես որ կա, այլ խոսքը գերազանցապես վերաբերում է այն բանին, թե ինչպիսին պետք է լինի սերը և ինչպես պետք է մարդիկ սիրեն, որ լավ լինի։ Յեվ այդ հնարավոր, ցանկալի սերը հակադրվում է ռեալ սիրուն։ Ամեն մի նովելլա վերջանալուց հետո քննության է առնվում այն բարոյախոսական պրոբլեմը, որը շոշափվում է նովելլայի մեջ։ Իսկ ամեն մի նովելլայի սկզբում Ոյզիլը կարդում է «Աստվածաշնչից» մի հատված և այդ հատվածը սկսում են մեկնաբանել բողոքական ոգով։

«Հեպտամերոնի» ամենաէական արժանիքներից մեկն այն է, որ այստեղ փշրվում է միջնադարյան ֆաբլիոների միակողմանիությունը և որոշ իմաստով նաև սխեմատիզմը։ Մարգարիտը նովելլայի մեջ մեծ տեղ է տալիս լուրջ և հաճախ ողբերգական տարրին։ Բացի այդ, նրա նովելլաների մեջ մեծ ուշադրություն է դարձվում այն դրդապատճառների վրա, որոնցով պայմանավորվում է հերոսի այս կամ այն քայլը։

Անհրաժեշտ է նշել, որ սերը Մարգարիտի մոտ միայն ֆիզիկական կիրք չէ, ինչպես այդ նկարագրված է իտալական մի շարք նովելլիստների մոտ։ Մարգարիտը ֆիզիկականի կրքի հետ միասին նշում է նաև այսպես կոչված սրտի կիրքը, զգացմունքը։ Այնուհետև Մարգարիտն առաջինն էր ֆրանսիական գրականության մեջ, որ նկարագրեց բնության բանաստեղծական կողմը և հիմք դրեց այն տրադիցիային, որի համաձայն բնությունը նույնպես կարելի յե նկարագրել գեղարվեստական գործի մեջ։ Այս բոլորի հետ միասին պետք է նշել այն քնքուշ լիրիզմը, որով թափանցված են նրա նովելլաները։

Ինչպես Բոկաչչոյին, այնպես էլ Նավարացուն որոշ պատմաբաններ մեղադրել են անբարոյականության մեջ։ Նավարացու նովելլաները նույնպես համարվել են պոռնոգրաֆիական։ Բայց պետք է նշել, որ Նավարացու «անբարոյականությունը» ունի այն բնույթը, ինչ որ Բոկաչչոյի մոտ։ Սիրո, ընտանեկան հարաբերությունների և սիրային կապերի բաց նկարագրությունն առհասարակ հատկանշական էր Վերածնության գրականության համար, որը ոչ մի կապ չունի հետագա դարաշրջանների պոռնոգրաֆիկ գրականության հետ։

Ֆրանսիական Վերածնության դարաշրջանի գրականության մյուս կարևոր դեմքերից մեկը Կլեման Մարոն էր։

3. ԿԼԵՄԱՆ ՄԱՐՈ

(1497—1544)

Ծնվել է բանաստեղծ Ժան Մարոյի ընտանիքում։ Յերկար ժամանակ յեղել է Մարգարիտ Նավարացու մանկլավիկը։ Մասնակցել է 1525 թվի հայտնի ճակատամարտին, որի ժամանակ Ֆրանցիսկ I-ի բանակը ծանր պարտություն կրեց։ Պատերազմի ժամանակ ծանր վիրավորվում է և գերի ընկնում,

Մարոն, չնայած պալատական գրող էր և շատ մոտ կապեր ուներ թե Ֆրանցիսկի և թե նրա քրոջ՝ Մարգարիտի հետ, կղերական օրգանների կողմից մշտապես հալածվել և հետապնդվել է։ 1526 թվին մեղադրվելով հերետիկոսության (բողոքականության) մեջ՝ բանտարկվեց։ Ազատվելուց հետո նորից է բանտարկվում (1527 թ.) նույն պատճառաբանությամբ, բայց Ֆրանցիսկի կարգադրությամբ շուտով ազատվում է։ 1532 թվին նրան նորից հետապնդում են այն «հանցանքի» համար, որ պաս օրերին համարձակվել է խոզի յուղ ուտել։ Այս անգամ միջամտում է Մ. Նավարացին և գործը դադարեցվում է։ 1535 թվին նրա անունը գրվում է այսպես կոչված 73 անբարեհույսների ցուցակում, բայց նրան նորից հաջողվում է խուսափել հետապնդումից։ Մի տարի թափառելով զանազան յերկրներում, 1536 թվին նորից վերադառնում է պալատ։ 1542 թվին իր մի ստեղծագործության լույս տեսնելու պատճառով («Պսալմներ») նորից ստիպված է լինում փախչել Ժնև։ Մահանում է 1544 թվին Իտալիայում։

Մարոն իր հասարակական-քաղաքական հայացքներով ու համոզմունքներով սերտորեն կապված է յեղել պալատական

շրջանների հետ, բայց սրա հետ միասին նրա վրա բավականին ուժեղ ազդեցություն և գործել հումանիստական շարժումը։ Յերբ խուզարկեցին նրա բնակարանը, գրադարանում գտան Բոկաչչոյի, Պետրարկայի, Ովիդիուսի, Կատուլլի և մի շարք այլ կլասիկ գրողների ստեղծագործությունները։ Այդ նշանակում է, վոր Մարոն վոչ միայն հետաքրքրվել է իտալական հումանիստներով, այլև անտիկ գրողների գործերով։

Մարոն հանդիսացել է ֆրանսիական Վերածնության դարաշրջանի նշանավոր բանաստեղծներից մեկը։ Նա գրել է գերազանցապես բանաստեղծություններ ու այդ բնագավառում յեղել է բազմաժանր գրող։ Նա գործածել է հատկապես «փոքր ձևը»։ Նրա սիրած ժանրերը յեղել են—էլեգիա, բալլադա, առակ, էպիգրամ, ուղերձ, պաստորել, էկլոգ, փոքր յերգեր, ռոնդո և այլն։

Նրա պոեզիայի ամենաէական գաղափարական առանձնահատկությունն այն է, վոր նրա մոտ հումանիզմը զուգակցվում է կալվինիզմի հետ, Վերածնությունը՝ ռեֆորմացիայի հետ և նրան հալածում եյին թե՛ վորպես կալվինական և թե՛ վորպես հումանիստ։

Մարոյի պոեզիայի հիմնական թեման սերն է, աշխարհիկ ուրախ սերը։ Իրական կյանքի պաշտամունք, ապրելու և կյանքը վայելելու անդիմադրելի ցանկություն, անսահման կենսուրախություն և խոր հավատ դեպի մարդու ստեղծագործական ուժերն ու կարողությունները—ահա այն հիմնական գծերը, վորոնցով բնորոշվում է նրա պոեզիան։ Բայց այն, ինչ վոր համարվում է նրա պոեզիայի ամենաէական արժանիքը, առանց վորի առհասարակ պոեզիա գոյություն ունենալ չի կարող, այդ Մարոյի ինքնաբուխ անկեղծությունն է։ Բացի այդ, նա յեղել է չափազանց խոսքի մեծ վարպետ և խոր բովանդակության հետ միասին նա իր բանաստեղծություններին տվել է այնպիսի ձևական կատարելություն, վոր ֆրանսիական ընթերցողները և մանավանդ հետագա շրջանի բանաստեղծները միշտ մեծ հիացմունքով են կարդացել նրան։ Յեվ չնայած այն հանգամանքին, վոր նա կապված լինելով պալատական շրջանների հետ՝ իր վորոշ բանաստեղծությունները աշխատում եր հարմարեցնել պալատական հասարակության ճաշակին, այնուամենայնիվ նա իր գրական ժառանգության լավագույն մասով կապված է Վերածնության հետ։

Նրա ազդեցությունը շատ մեծ է յեղել ֆրանսիական պոեզիայի հետագա զարգացման վրա։ Մինչև Մալերբի հանդես գալը, ֆրանսիական պոեզիայի պատմության մեջ միակ բանաստեղծը համարվել է Մարոն, և յեթե խոսք եր լինում սովորելու մասին, ապա այդ նշանակում եր, վոր պետք է սովորել Մարոյից։ Մալերբը, Ռուսսոն, Ռասինը միշտ էլ մեծ հիացմունքով են խոսել Մարոյի մասին։

Ֆրանսիական վերածնության գրականության մյուս խոշոր ներկայացուցիչը համարվում է Բոնավենտուր Դեպերյեն։

4. ԲՈՆԱՎԵՆՏՈՒՐ ԴԵՊԵՐՅԵ
(1510—1544)

Ինչպես նկատեցինք վերևում, բողոքականության ուժեղացման հետ միասին ուժեղանում է նաև պետության հալածանքները բողոքականների նկատմամբ։ Բայց չնայած այդ հալածանքներին՝ կալվինականությունը լայն տարածում է ստանում Ֆրանսիայում։ Ինքը, Կալվինը հիմնվելով Ժնևում՝ շարունակում է պայքարը կաթոլիկության դեմ։ Յերբ Ֆրանցիսկ I-ը հանդիսավոր կերպով անցավ կաթոլիկության կողմը, այդ ժամանակից սկսած Ֆրանսիայում ստեղծվեց յերկու բավականին ուժեղ լագեր—բողոքականների և կաթոլիկների։ Այդ ժամանակից սկսած ֆրանսիական ամեն մի քաղաքացի պարտադիր ձևով պետք է իր վերաբերմունքը ցույց տար այդ յերկու կողմերի նկատմամբ, նա պետք է պատկաներ այս յերկու կողմերից մեկին։ Միջին ճանապարհ բռնելը կամ ավելի ճիշտը՝ յերրորդ ուղին ընտրելը, մեծ համարձակություն և փորձանքների հետ էր կապված, վորովհետև այս կարգի մարդիկ հավասար չափով հալածվում եյին թե՛ բողոքականների և թե՛ կաթոլիկների կողմից։ Հալածանքների դաժանության մեջ Կալվինը վոչնչով հետ չեր մնում իր հակառակորդ կաթոլիկներից։ Այսպես, օրինակ, նա խարույկ բարձրացրեց և այրեց այդ ժամանակվա նշանավոր իսպանացի գիտնական-բնագետ Սերվետին, վորն աշխատում եր Ֆրանսիայում։

Սերվետը, արյան շրջանառության գյուտի նախակարապետներից մեկը, խարույկ բարձրացվեց այն բանի համար միայն,

վոր դուրս էր յեկել այսպես կոչված սուրբ յերրորդության դեմ։ Սերվետի բազմաթիվ աղերսանքները՝ կրակն ուժեղացնելու համար (վորպեսզի շուտ այրվի և տանջանքներին վերջ տրվի), վճռականապես մերժվեց։ Կալվինը ստիպեց յերկու ժամ անընդհատ կենդանի «տապակել» նրան։

Էնգելսը վորպես բնորոշ փաստ նշում է[1]), վոր բողոքականները կանխեցին կաթոլիկներին ազատ բնագիտության հետապնդման մեջ, վորն այդ ժամանակ արդեն սկսել էր ազատագրվել՝ աստվածաբանությունից։

Այսպիսով, այդ դարաշրջանի առաջավոր մտքերը գտնվում էին, ինչպես ասում են, յերկու կրակի արանքում։ Մի կողմից նրանց խարույկով սպառնում են Սորբոնի կաթոլիկ աստվածաբանները, իսկ մյուս կողմից այդ նույն խարույկով սպառնում են կրոնական ռեֆորմացիայի ֆանատիկոսները, վորոնք հավաքվել էին Ժնևում, ռեֆորմացիայի պարագլուխ Կալվինի շուրջը։

Ահա այս յերկու բանակի զոհերից մեկը դարձավ Դեպերյեն։ Չնայած բանտի և խարույկի տխուր հեռանկարին, այնուամենայնիվ նա համարձակություն ունեցավ դուրս գալ վերոհիշյալ յերկու բանակների դեմ և մինչև իր կյանքի վողբերգական վախճանը հերոսաբար գնաց այդ ուղիով։

Ծնվել է Arnay-le Duc կոչված վայրում։

Ինչպես բոլոր հումանիստները, այնպես էլ նա զբաղվել է անտիկ լեզուների ուսումնասիրությամբ և համարվել է հունարեն և լատիներեն լեզուների խոշորագույն մասնագետներից մեկը։ 1535 թվին Օլիվետանի հետ միասին թարգմանում է «Աստվածաշունչը»։ 1536 թվին հումանիստ Դոլեյի հետ միասին կազմում է «Լատինական լեզվի կոմենտարիաներ» աշխատությունը։ Նա յերկար ժամանակ ապրում էր Լիոնում։ Այստեղ նա առաջին անգամ ծանոթանում է իր դարաշրջանի նշանավոր հումանիստների հետ—Մարո, Րաբլե, Բյուդե, Դոլե և այլն։ 1536–1540 թ. թ. աշխատում է Մարգարիտ Նավարացու մոտ, վորպես նրա գրական խմբակի քարտուղար։ Այստեղ նա սկսում է իր գրական գործունեությունը։ Նա գրում է իր նովելները,

1) Տես՝ Էնգելս—«Բնության դիալեկտիկայի հին առաջաբանը» («Բնության դիալեկտիկա», ռուս. հրատ. 1933, էջ 87։

վորոնք լույս տեսան նրա մահից հետո, 1558 թվին «Նոր զվարճալի և ուրախ խոսակցություններ» վերնագրով։ 1538 թվին լույս տեսավ նրա նշանավոր գործը՝ «Աշխարհի ծնծղան», վորի համար քիչ էր մնում խարույկ բարձրացնեյին հրատարակող տպարանատեր Մորենին։ Իսկ ինչ վերաբերում է գրքին, նա հայտարարվեց հերետիկոսական գործ և այրվեց։ Գրքի հեղինակը չեր կարող այդ բոլորից հետո հանգիստ ապրել։ Բայց չնայած վատիկանության հետապնդումներին, նա իր գիրքը նույն թվին նորից հրատարակեց, այս անգամ Լիոնում (առաջին հրատարակությունը Փարիզում)։ Կյանքի վերջին շրջանում, մշտապես հալածվելով և հետապնդվելով կառավարական օրգանների կողմից, կյանքն անց է կացնում ամենածանր թշվառության և զրկանքների մեջ։ Յելք և հանգիստ չգտնելով, կյանքին վերջ է տալիս ինքնասպանությամբ։

Դեպերյեյի թե նովելները և թե սատիրական դիալոգները հանդիսանում են ֆրանսիական հումանիստական շարժման ամենալավագույն և ամենահամարձակ արտահայտություններից մեկը։ Ֆրանսիական հումանիզմը իր ամենաբարձր արտահայտությունը ստացավ Դեպերյեյի և Րաբլեյի մոտ։

Դեպերյեյի նովելները գրված են Բոկկաչչոյի ուժեղ ազդեցության տակ։ Նովելների թեման մեծ մասամբ առնված է ֆրանսիական նովելների մի ժողովածույից, վորը լույս տեսավ 15-րդ դարի վերջին «Հարյուր նոր նովելներ» վերնագրով։ Դեպերյեյի նովելներն ունեն շատ ուժեղ հակակղերական բնույթ։ Իր նովելներում Դեպերյեն ջախջախիչ քննադատության է յենթարկում թե կաթոլիկներին և թե կալվինականներին, և հավասար չափով բացասում է այդ յերկու հոսանքներն էլ իրենց բոլոր արտահայտությունների մեջ։ Նովելների գլխավոր հերոսները հոգևորականներն են, միջնադարյան սխոլաստիկները, շառլատան գիտնականները, մի խոսքով միջնադարյան բոլոր ռեակցիոն ուժերը, վորոնք մերկացվում և ջախջախվում են այնպես, ինչպես ասում են, քարը քարի վրա չի մնում։ Այդ բոլոր ուժերը նրա մոտ քննադատվում են հումանիզմի դիրքերից։ Դեպերյեյի հիմնական հակառակորդը, բոլոր դեպքերում, մնում է յեկեղեցին, կղերականությունը, կաթոլիկական և բողոքական դոգմաները։

Դեպերյեյի լավագույն ստեղծագործությունն «Աշխարհի ծնծղան» է։ Գրված է դիալոգների ձևով, ամբողջ գործը բաղկացած է այդպիսի չորս դիալոգից։ Քննադատության հիմնական առանցքը կրոնն է, քրիստոնեությունը, բողոքականությունը և կաթոլիկությունը։ Հիմնական գաղափարը, որ արտահայտվում է այստեղ, կարելի յե ամփոփել չորս կետում։

Առաջին.—Հավատի էությունն այն է, որ նրա միջոցով հաստատվում է այն, ինչ որ մարդիկ չգիտեն և չեն կարող իմանալ։ Հետևապես կրոնը կեղծիք է, խաբեբայություն, շառլատանություն։

Յերկրորդ.—Աստծո հզորությունը գրքի մեջ է («Աստվածաշունչ»)։ Սա նշանակում է, որ այդ գիրքը, որի հեղինակը մարդն է, հենց այդ մարդն էլ ստեղծել է աստծուն։ Ուրեմն, յեթե աստված մարդու ստեղծածն է և ոչ թե մարդը աստծու, այստեղից էլ յեզրակացությունը պարզ է։ Դեպերյեն բացասում է աստծո գոյությունը։ Նա աթեիստ է։ Իզուր չէ, որ նրա դիալոգներն այրվեցին որպես հերետիկոսական գործ։ Իր այս աշխատությամբ Դեպերյեն անպայման հանդիսանում է 18-րդ դարի ֆրանսիական մատերիալիզմի նախապատրաստողներից մեկը։

Յերրորդ.—Բոլոր յեկեղեցիները և կրոնական դոգմաները, լինի դա կաթոլիկական, թե կալվինական-բողոքական—խաբեբայություն և շառլատանություն են, այդ բոլորն ստեղծված են մարդկանց խաբելու համար և ամենամեծ շառլատանները կալվինականները և կաթոլիկներն են։ Դեպերյեն աստծու հետ միասին բացասում է յեկեղեցին և հոգևորականությունը։ Այս գծով նույնպես նա հանդիսանում է 18-րդ դարի ֆրանսիական լուսավորիչների նախորդներից մեկը։

Չորրորդ.—Շատ հետաքրքիր է, որ դիալոգների մեջ քրիստոսը հանդես է գալիս Մերկուրու կերպարանքով։ Մերկուրին անտիկ աշխարհի դիցաբանության մեջ մի շարք ֆունկցիաներ ունենալուց բացի, միաժամանակ խորամանկության և խաբեբայության հովանավորողն էր։ Առաջին դիալոգի մեջ նրա մասին ասվում է.—«Նա ոչ միայն խարդախ է, այլ և բոլոր խարդախությունների գյուտարարը»։ Բայց քրիստոսը որքան էլ խարդախ ու շառլատան լինի, այնուամենայնիվ կան ավելի վտանգավոր խարդախներ. նրանցից մեկը Բերֆա-

նոսն է, մյուսը՝ Կուրտալիուսը։ Այս շառլատանների միջոցով Դեպերյեն հանդես է բերել կաթոլիկության և բողոքականության ներկայացուցիչներին։ Դիալոգների մեջ ցույց է տրված, թե ինչպես այս շառլատանները կազմում են «Սուրբ գիրք», որտեղ պատկերացվում է Յուպիտերի (աստծո մարմնացումը) զանազան արկածները։ «Սուրբ գիրքը» («Աստվածաշունչը») ոչ այլ ինչ է, յեթե ոչ դատարկ և անմիտ արկածների և անեկդոտների մի ժողովածու։

Դեպերյեյի դիալոգները խոշոր յերևույթ է ֆրանսիական Վերածննդի և հումանիզմի պատմության մեջ։ Յեվ սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ բուրժուական գրականագետները և մանավորապես ֆրանսիական գրականության պատմաբանները մեծ արհամարհանքով և հաճախ սարսափով են խոսել Դեպերյեյի մասին։ Նրանք իրենց դասագրքերում կամ չեն հիշատակել Դեպերյեյի անունը և կամ խոսել են ի միջի այլոց։ Այսպես օրինակ, Լանսոն իր «Ֆրանսիական գրականության պատմության» մեջ Դեպերյեյին հատկացնում է տառացիորեն կես եջ այն ժամանակ, յերբ նրա գրքի յերրորդ մասի ամբողջ-յերկրորդ գլուխը նվիրված է Կլեման Մարոյին։ Բնորոշ է նաև այն, որ Լանսոնը Դեպերյեյին նվիրված կես եջում ավելի շատ արտահայտում է իր սարսափը։ Ահա թե ինչ է գրում նա այն տպավորության մասին, որ ստացել է դիալոգները կարդալուց հետո.—«Հանդուգն ֆանտազիան իր ընդհանուր մշուշային բնույթով թողնում է տագնապալի տպավորություն»։

Դեպերյեն ֆրանսիական հումանիզմի ամենախոշոր ներկայացուցիչներից մեկն է և նրա թողած գրական ժառանգությունը պահանջում է ավելի լուրջ և ավելի բարեխիղճ վերաբերմունք։

Բայց, այնուամենայնիվ, ֆրանսիական Վերածնության դարաշրջանի հումանիստական շարժման գագաթը մնում է ֆրանսուա Րաբլեն։ Նա միաժամանակ Վերածննդի խոշորագույն տիտաններից մեկն է և իր թողած գրական ժառանգությամբ յեվրոպական գրականության պատմության մեջ նա կատարեց այն դերը, ինչ որ Բոկաչիոն Իտալիայում, Սերվանտեսը Իսպանիայում, Շեքսպիրն Անգլիայում։

5. ՖՐԱՆՍՈՒԱ ՌԱԲԼԵ
(1494—1553)

Ծնվել է Թուրենում։ Հայրը, Անտուան Ռաբլեն, յեղել է փաստաբան և հարուստ հողատեր։

Նախնական կրթությունը, այդ ժամանակվա սովորության համաձայն, ստացել է հոգևոր դպրոցում։ Նրա ուսուցիչները յեղել են ֆրանցիսկյան միաբանության վանականները, վորոնք հումանիստների շրջանում հայտնի եյին իրենց տգիտությամբ։ Հնարավոր է, վոր սրանց մոտ նա սովորում է լատիներեն, փիլիսոփայություն և աստվածաբանություն։ Քսանվեց տարեկան հասակում դառնում է ֆրանցիսկյան մենաստանի վանական։ Վանք է ընդունվում հոր պահանջով, վոր ցանկանում եր, վոր վորդին անպայման հոգևոր պաշտոն ունենա և աշխատի այդ բնագավառում։ Բայց Ռաբլեն տարվում է Վերածնության շարժման հոսքերով և շատ սուր կերպով զգում է վանքի և հոգևորականության հետամնացությունն ու տգիտությունը։ Աստվածաշունչը ուսումնասիրելու փոխարեն, նա իր ամբողջ ժամանակը նվիրում է լատիներեն և հատկապես հունարեն լեզվի ուսումնասիրությանը։ Այս բնագավառում նա այնքան մեծ հաջողություններ է ձեռք բերում, վոր շուտով լատիներեն և հունարեն լեզուներով գրում է բանաստեղծություններ և մտածում է թարգմանել լատիներեն հունական պատմաբան Հերոդոտի աշխատությունները։ Ռաբլեն գրավոր կապեր է հաստատում այդ ժամանակվա խոշոր հումանիստների հետ, գրում է լատիներեն նամակներ։

Պետք է նշել, վոր այդ շրջանում հոգևորականության ղեկավար շրջաններում մեծ իրարանցում եր առաջացել։ Փարիզի համալսարանի աստվածաբաններին անչափ հուզել եյին Երազմի կոմենտարիաները, վոր նա գրել եր «Աստվածաշնչի» հունական տեքստի համար։ «Աստվածաշնչի» ազատամիտ մեկնաբանությունը դուր չեր յեկել աստվածաբաններին։

Նրանց հուզումը և իրարանցումը վերջացավ նրանով, վոր հունական լեզվի ուսումնասիրությունն արգելվեց վանքերում։ Վանքի իշխանությունը բռնագրավեց նաև Ռաբլեյի բոլոր հունական գրքերը։ Ճիշտ է, Ռաբլեյին հաջողվեց հետ ստանալ իր գրադարանը, բայց այս դեպքը բավական եր, վորպեսզի

նա իր աշխատանքները շարունակելու համար մտածեր ավելի նպաստավոր պայմանների մասին։ Նրան հաջողվում է փոխել իր աշխատանքի բնույթը և դառնալ Մալիեզ քաղաքի յեպիսկոպոսի քարտուղարը։ Սրա միջոցով նա դուրս է գալիս Ֆրանցիսկյան միաբանությունից և դառնում է Բենեդիկտյան միաբանության անդամ։ Դուրս գալով վանքից, նա հնարավորություն է ունենում ավելի մոտիկից ծանոթանալու Վերածնության դարաշրջանի գրականությանը և կուլտուրային, մեծ հետաքրքրություն է հանդես բերում դեպի ժողովրդական բանահյուսությունը և հենց այս շրջանից էլ սկսում է լուրջ ստեղծագործական աշխատանքներով զբաղվել։ Այս շրջանում նա վերջնականապես վերամշակում է իր հումանիստական հայացքները։

1530 թվին Ռաբլեն ընդունվում է Մոնպելյե քաղաքի համալսարանի բժշկագիտական ֆակուլտետը և ուսումնասիրում է բժշկագիտություն։ Վեց ամսից հետո նա ստանում է բժշկագիտության բակալավրի աստիճան և կարդում է ինքնուրույն կուրս։ Նա իր ուսանողների համար ընտրում է Հիպոկրատի «Աֆորիզմներ» հունական տեքստը։ Հունական տեքստի ընտրությունը ցույց է տալիս, վոր Ռաբլեն ցանկանում եր հունական բժշկականությունը մաքրել այն աղճատումներից ու աղավաղումներից, վոր թողել եյին ավել թարգմանիչները։

Ռաբլեն այնուհետև աշխատում է Լիոնի հիվանդանոցում, վորպես բժիշկ, իսկ 1537 թվին ստանում է բժշկական գիտությունների դոկտորի աստիճան։ Փոխելով աշխատանքի վայրը, նա դառնում է Կարդինալ-դյու-Բելլի անձնական բժիշկը, նրա հետ մի քանի անգամ գնում է Հռոմ։ Այս ճանապարհորդությունները նրա համար այն նշանակությունն են ունենում, վոր նա ավելի մոտիկից ծանոթանում է իտալական կուլտուրայի հետ։ Ռաբլեն իր կյանքի վերջին շրջանում հրաժարվում է հոգևոր կոչումից։ Մահանում է Փարիզում։

Ռաբլեն բոլոր կողմերով Վերածնության դարաշրջանի այն բազմակողմանի մարդկանցից եր, վորոնց մասին խոսում է Ենգելսը։ Թե նրա գիտելիքները և թե գրվածքները և ուսումնասիրության առարկան շատ բազմազան են յեղել։ Բժշկագիտության ուսումնասիրության հետ միասին նա զբաղվել է փիլի-

ոփայությամբ, ուսումնասիրել է իրավաբանություն, զբաղվել է բնագիտությամբ և արխեոլոգիայով։ Նա նույնիսկ զբաղվել է աստղագիտությամբ և իր դարաշրջանի աստղագիտության լավագույն մասնագետներից մեկն է եղել։ Նա հրատարակել է անտիկ աշխարհի նշանավոր բժիշկների և իրավաբանների աշխատությունները։

Ռաբլեն դարձավ համաշխարհային անուն իր աշխարհահռչակ վեպի շնորհիվ, որը կոչվում է «Գարգանտյուա և Պանտագրյուել»։ Վեպի վրա Ռաբլեն աշխատել է մոտ քսան տարի։ Վեպը բաղկացած է հինգ մասից.—1. «Մեծ Գարգանտյուայի, Պանտագրյուելի հոր սարսափելի կյանքի պատմությունը» (1534), 2. «Դիպսոդների թագավոր, հանրահայտնի Պանտագրյուելի սարսափելի արարքների պատմությունը» (1532), 3. «Բարի Պանտագրյուելի հերոսական սխրագործությունների և ասացվածքների երրորդ գիրքը» (1546), 4. «Բարի Պանտագրյուելի հերոսական սխրագործությունների և ասացվածքների չորրորդ գիրքը» (1552), 5. «Բարի Պանտագրյուելի հերոսական սխրագործությունների և ասացվածքների հինգերորդ գիրքը» (1564)։

Վեպի ստեղծման պատմությունը հետաքրքիր է երկու կողմով։ Նախ այն, որ վեպի երկրորդ մասը ավելի շուտ է լույս տեսել, քան առաջին մասը։ Եվ հետո վեպի վերջին մասը համեմատաբար ավելի թույլ է։ Պատմաբաններից մի մասը պնդում է, որ վերջին մասը Ռաբլեն թողել է սևագիր վիճակում։ Հեղինակի մահից հետո որևէ մեկը վերամշակել և հրատարակել է։ Այս տեսակետն ունի շատ կողմնակիցներ։ Սակայն վեպի ստեղծման պատմության մեջ ամենակարևորը—վեպի ժողովրդական ակունքների հարցն է։

1532 թվին Լիոն քաղաքում լույս տեսավ մի գիրք այսպիսի վերնագրով՝ «Հսկա Գարգանտյուայի մեծ և անգնահատելի խրոնիկան»։

Այս գրքի հիմքում ընկած է ժողովրդական առասպելը Գարգանտյուայի մասին, որը շատ տարածված էր Ֆրանսիայում 15-րդ դարի առաջին քսանամյակում։ Վերոհիշյալ գիրքն այդ ժողովրդական լեգենդի առաջին գրական վերամշակությունն էր։ Գրքի տարբերությունը լեգենդայից այն է, որ գրքի մեջ սատիրայի բնույթը և օբյեկտը ավելի որոշակի յէ

դառնում։ Բայց մյուս կողմից, ինչպես ճիշտ նշել է Ա. Վեսելովսկին, Լիոնում լույս տեսած խրոնիկան նույնպես ժողովրդական գիրք էր և նա, ինչպես Ֆաուստի լեգենդը, կարող էր լույս տեսնել միայն Վերածնության դարաշրջանում, որովհետև այստեղ սատիրական ձևով ներկայացված էր մահացող, իր դարաշրջանն արդեն ապրած ասպետության կյանքը։ Բացի այդ, խրոնիկան մի պամֆլետ էր ուղղված ասպետական ռոմանտիզմի դեմ։

Ռաբլեյի վեպի աղբյուրը եղել է այդ գիրքը։ Ռաբլեն իր վեպում պահպանել է խրոնիկայի ֆաբուլայի երեք հիմնական մոմենտը՝ ա) հերոսի ծնունդը և մանկությունը, բ) ռազմական սխրագործությունները, գ) հերոսի ճանապարհորդությունը դեպի Փարիզ։ Բացի այդ, Ռաբլեն պահպանել է նաև ժողովրդական գրքի ֆանտաստիկան, չափազանցությունները։ Ժողովրդական գրքի մեջ պատմվում է, որ Գարգանտյուայի նախաճաշի համար անհրաժեշտ էր հինգհարյուր խոզ, ճաշի համար գործ է ածում երեք հարյուր նապաստակ, և սրա հետ միասին խմում է տասնչորսից-տասնհինգ տակառ գինի։ Գարգանտյուայի հագուստի համար պահանջվում է հազար արշին կտոր։

Գարգանտյուայի ձին նույնպես հսկա յէ։ Երբ ճանճերին քշելու համար նա շարժում է իր պոչը, երկրի երեսից սրբում է մի ամբողջ անտառ։ Սակայն ամենակարևորը—այդ ժողովրդական գրքի ոգին է, որ այնքան խոր յուրացրել է Ռաբլեն և այնքան հարազատությամբ արտահայտել է իր վեպի բոլոր մասերում։

Բայց չնայած ժողովրդական քրոնիկայի այդ ֆանտաստիկային և չափազանցություններին, այնուամենայնիվ նա վոչ մի կապ չունի ասպետական գրականության հետ։ Այդ բոլորն ավելի շուտ ժողովրդական վիպերին (էպոսին) հատուկ չափազանցություններ են, որոնք, ինչպես հայտնի յէ, իրենց բովանդակությամբ և էությամբ ռեալիստական են։ Ժողովրդական քրոնիկան թափանցված է նաև անսահման կենսուրախությամբ։ Այստեղ շեշտը դրվում է մարդու իրական, երկրային պահանջների վրա, ֆիզիքական տարերքը էական տեղ է գրավում։ Ժողովրդական գրքում դրված է միջնադարի ուժեղ քննադատությունը։

Ժողովրդական քրոնիկայի այդ վորոշ չափով տարերային հակաֆեոդալական և հումանիստական էյությունը Ռաբլեյի մոտ հասնում է վիթխարի չափերի և վերածվում ֆրանսիական հումանիզմի մի ունիվերսալ ծրագրի: Ռաբլեյի վեպը դառնում է մի ուժեղ բռունցք՝ ուղղված ֆեոդալական-կղերական կարգերի, միջնադարյան սխոլաստիկական փիլիսոփայության, միջնադարյան գրականության, պոեզիայի, աստվածաբանության և նրա քաղաքականության դեմ: Յեվ այս բոլորի հետ միասին Ռաբլեն տալիս է իր գրական իդեալները, այն ապագա հասարակական կարգերի ուտոպիան, վորը պետք է փոխարինի գոյություն ունեցող կարգերին:

Հետաքրքիր է Ռաբլեյի կարծիքը ժողովրդական քրոնիկայի մասին: Իր վեպի յերկրորդ մասի առաջաբանում այդ մասին նա գրել է.—«Հեղինակը խորին համոզմունք է հայտնում, վոր բոլոր խելքը գլխին մարդիկ մեծ լարվածությամբ կարդացել են «Հսկա Գարգանտյուայի մեծ և անգնահատելի քրոնիկան», բայց նրա (հեղինակի—Հ. Մ.) ցանկությունները գնում են ավելի հեռու: Նա խորհուրդ է տալիս բոլոր մարդկանց թողնել իրենց գործը և անգիր անել այդ քրոնիկան, վորպեսզի գրքի տպագրության վոչնչացման դեպքում ի վիճակի լինեն բանավոր հաղորդելու ապագա սերունդներին... Չկա վոչ մի գիրք, վոր հավասարվի քրոնիկային և՛ հետաքրքրության, և՛ օգտակարության տեսակետից: Հասարակությունն այդ արդեն ապացուցել է, քանի վոր յերկու ամսվա ընթացքում այդ գրքից ավելի շատ վաճառվեց, քան թե «Աստվածաշունչը» ինը տարվա ընթացքում: Տարվելով քրոնիկայի հաջողություններով, հեղինակը ցանկանում է հասարակությանը տալ նոր հնարավորություն օգտակար ժամանցի համար, առաջարկում է մի այլ նույնանման գիրք, յեթե վոչ ավելի լավը, վորի մեջ նա պատմում է Գարգանտյուայի մեծ սխրագործությունների մասին»:

Այստեղից արդեն պարզ յերևում է, թե ինչպիսի բարձր գնահատական է տալիս Ռաբլեն ժողովրդական քրոնիկային:

Ռաբլեյի վեպի ամբողջ առանձնահատկությունն այն է, վոր հեղինակը ջախջախիչ քննադատության յենթարկելով ֆեոդալական կարգերը, միաժամանակ շարադրում է հումանիստների գրական իդեալները, հումանիստների ծրագիրն այն ամենի մասին, ինչ վոր պետք է փոխարինի ֆեոդալական կարգերին:

Վեպի մեջ շատ էական տեղ է գրավում նաև՝ սխոլաստիկական մանկավարժական սիստեմի և դաստիարակության քննադատությունը: Քննադատելով այդ բոլորը, Ռաբլեն շարադրում է իր գրական-հումանիստական իդեալների մասին:

Գարգանտյուան սկզբում դաստիարակվում է մի սխոլաստիկ մանկավարժի մոտ: Նրա դաստիարակությունը գրքային դաստիարակություն է: Ուսուցիչը Գարգանտյուային ստիպում է անգիր անել այբուբենը, լատինական լեզվի քերականությունը, աստվածաբանական գրքեր և այլն: Գարգանտյուան այդ բոլորն այնպես է անգիր անում, վոր կարողանում է անգիր ասել վոչ միայն սկզբից մինչև վերջը, այլ և վերջից մինչև սկիզբը: Բացի այդ, նրա դաստիարակությունն ունի խիստ կրոնական բնույթ: Յեկեղեցում նա լսում է մոտ յերեսուն պատարագ և նույնիսկ զբոսնելու ժամանակ մեքենայորեն աղոթքներ է ասում: Նման դաստիարակությունը վոչ մի դրական հետևանք չէր կարող ունենալ: Հայրը նկատելով, վոր վորդին կարող է կործանվել նման տիպի դաստիարակությունից, հեռացնում է սխոլաստիկ դաստիարակին և հրավիրում է մի ուրիշին՝ Պանոկրատին:

Պանոկրատը դաստիարակության իր մեթոդներով և նպատակներով արմատապես տարբերվում է սխոլաստիկ ուսուցչից: Նրա դաստիարակության սիստեմը Ռաբլեյի առաջադրած սիստեմն է, վոր պետք է փոխարինի հին, սխոլաստիկական սիստեմին: Պանոկրատն իր դաստիարակության սիստեմով ու մեթոդներով ցանկանում է իրականություն դարձնել հումանիստների իդեալները ներդաշնակ մարդու մասին:

Գարգանտյուային դաստիարակելու ժամանակ նրա առաջին հոգսը լինում է այն, վոր աշակերտը մոռանա այն ամենը, ինչ սովորել է սխոլաստիկ դաստիարակից: Այնուհետև նա հետապնդում է մի նպատակ—աշակերտի մեջ ներդաշնակորեն զարգացնելու և՛ մարմինը, և՛ հոգին, այսինքն նրան տալ մտավոր և ֆիզիքական դաստիարակություն և նրանից ստեղծել ներդաշնակ մարդ: Նա դաստիարակության ռեալիստական մեթոդի կողմնակից է: Տեսական, մտավոր ուսուցումը սերտորեն կապված է պրակտիկայի հետ, ռեալ դիտողությունների հետ և ամեն մի գիտելիք ռեալ դիտողություններից հանած յեզրակա-

ցություն է: Ճաշի ժամանակ նա զրույց է ունենում իր աշակերտի հետ հացի, գինու, ջրի, աղի, մսի, պտուղների և այլնի մասին: Զբոսնելու ժամանակ աշակերտը և ուսուցիչը բնագիտական բնույթի դիտողություններ են անում, իսկ վաղ առավոտյան և յերեկոյան դիտում են յերկինքը, աստղերը, լուսինը: Գարգանտյուայի խաղերն ուսուցիչը կազմակերպում է այնպես, վոր նրանք օգնեն յերեխային սովորելու թվաբանություն, յերկրաչափություն, աստղաբաշխություն, յերաժշտություն:

Գիտական զբաղմունքներին զուգահեռաբար Գարգանտյուան ստանում է նաև ֆիզիկական դաստիարակություն: Նա զբաղվում է ֆիզկուլտուրայով, ձիարշավով, կատարում է զանազան ֆիզիկական աշխատանքներ—փայտ է ջարդում, սղոցում և այլն:

Պանոկրատն աշակերտի համար կազմակերպում է նաև էքսկուրսիաներ, նրանք լինում են արհեստանոցներում, խանութներում, լսում են հրապարակային զեկուցումներ, փաստաբանների ճառեր, բողոքականների քարոզներ:

Ռաբլեն միջնադարյան սխոլաստիկական դաստիարակությանը միանգամայն գիտակցաբար հակադրում է դաստիարակության նոր սիստեմը: Եթե հին, սխոլաստիկական դաստիարակության նպատակն եր պատրաստել յեկեղեցուն և ֆեոդալական կարգերին հավատարիմ, նվիրված մարդիկ, ապա Ռաբլեն դաստիարակության հիմնական նպատակը համարում է մարդու ներդաշնակ զարգացումը, մարդու հոգևոր ու ֆիզիկական կարողությունների համաչափ զարգացումը:

Եթե Վերածնության դարաշրջանի հումանիստների ճնշող մեծամասնությունը խոսում եր ներդաշնակ մարդու մասին, մարդու ֆիզիկական և մտավոր կարողությունների լիակատար ազատության և համաչափ զարգացման մասին, ապա Ռաբլեն փորձ է անում նշել այն կոնկրետ ուղիները, վորոնցով մարդը կարող է հասնել այդ աստիճանին: Միանգամայն հասկանալի յե, վոր ինչպես Ռաբլեյի այդ իդեալները, այնպես էլ նրա նշած ուղիները անհամատեղելի եյին այն իրականության հետ, վորի մեջ գործում եր Ռաբլեն: Այդ պատճառով էլ Ռաբլեյի մոտ նրա դրական ծրագիրը ստանում է ուտոպիական բնույթ:

Ինչպես Կամպանելլայի, այնպես էլ Թոմաս Մորի ուտոպիաները ցույց են տալիս, վոր Վերածնության դարաշրջանում ապագա հասարակության ուտոպիական պատկերացումը բոլորովին էլ պատահական մի բան չեր, այլ միանգամայն պատճառաբանված և օրինաչափ մի յերևույթ: Ռաբլեն նույնպես իր վեպում նկարագրել է ուտոպիական այն հասարակությունը, վորը նրա կարծիքով պետք է փոխարինի գոյություն ունեցող կարգերին:

Ռաբլեն ջախջախիչ քննադատության է յենթարկում վոչ միայն սխոլաստիկական մանկավարժությունը, այլև սխոլաստիկական գիտությունն ու աստվածաբանությունը: Այս տեսակետից շատ հետաքրքիր է Գարգանտյուայի ճանապարհորդությունը դեպի Փարիզ: Գալով Փարիզ, նա նստում է Փարիզի աստվածամոր տաճարի գմբեթին, վորպեսզի հանգստանա: Զանգատնից հանում է տաճարի հսկայական զանգը, վորպեսզի կախի իր ձիու վզից: Նրա այս քայլը մեծ իրարանցում է առաջացնում Սորբոնի գիտնականների և աստվածաբանների շրջանում: Նրանք իրենց ներկայացուցիչն են ուղարկում Գարգանտյուայի մոտ, վորը պետք է ապացուցի նրա կատարած քայլի վոչ ճիշտ լինելը: Ամենահետաքրքիրը պրոֆեսորի ճառն է այն մասին, թե ինչու անհրաժեշտ է զանգը հետ տալ: Այդ ճառը սկզբից մինչև վերջը մի կատարյալ դատարկաբանություն է, վորից վոչինչ չի հասկանում նույնիսկ ինքը, պրոֆեսորը: Նա կարծում է, թե լատիներեն անիմաստ և անկապ ֆրազներ գործածելով՝ կարող է մեծ տպավորություն գործել Գարգանտյուայի և մյուս լսողների վրա:

Կոմիքականն այն է, վոր նա կարծում է, թե սքանչելի ճառ արտասանեց և ամեն մի լատինական ֆրազ արտասանելուց հետո, դիմելով լսողներին, ասում է.—«ինչպես վոր լավ է ասված»:

Այս կարգի սխոլաստիկական գիտնականներ և աստվածաբաններ վեպում շատ են հանդես բերված: Ռաբլեյի հայացքների մեջ աթեիզմի շատ տարրեր կան: Ռաբլեյի ստեղծագործության այդ աթեիստական տենդենցներն ամեն քայլափոխում նկատվում են: Նույնիսկ վեպի առաջին մասում յերևում է, վոր Ռաբլեն բացասաբար է տրամադրված յեկեղեցու, կրոնի, կույր հավատի դեմ: Դեռ ավելին, նա նույնիսկ կասկածի տակ է դնում աստծո ամենազորությունը:

Այսպես օրինակ, նա նկարագրում է Գարգանտյուայի տարօրինակ ծնունդը. նա ծնվում է մոր ականջից։ Այնուհետեվ խոսում է այն մասին, թե այդ տարօրինակ ծնունդը կարող է անհավատալի թվալ շատերին և ցիտատներով փորձում է ապացուցել, վոր այստեղ տարօրինակ վոչինչ չկա, տարօրինակն այն է, վոր մարդիկ կարող են կասկածել։ Նա «Աստվածաշնչից» ցիտատ է բերում.—«ամեն մարդ հավատում է ամեն բանի»։ Ռաբլեն այստեղից ծաղրական ձևով յեզրակացնում է, թե ուրեմն ինչու չհավատալ, յեթե այդպես է։ Բայց դա (հերոսի ծնունդը) անբնական է, կասեք դուք, դիմում է Ռաբլեն ընթերցողներին։ Հենց այդ պատճառով էլ պետք է հավատալ, վոր անբնական է, վորովհետեվ սորբոնիստներն ասում են, թե հավատը անտեսանելի առարկաների մարմնացումն է։ Այստեղից պարզ յերեվում է, վոր Ռաբլեն սուր կերպով ծաղրում է վոչ միայն սխոլաստիկ գիտնականների ապացուցման մեթոդները, այլ և կողմնակիորեն նշում է, վոր յեթե աստված ամենազոր է և ամեն ինչ կախված է նրա բարի կամքից, ապա նա ինչու չի կարող անել այնպես, վոր մարդն այժմ ականջից ծնվի։ Ռաբլեյի այս դատողությունների մեջ անպայման արտահայտվում է մի տեսակ թերահավատություն դեպի աստված և նրա ամենակարողությունը։

Ռաբլեյի հասարակական-քաղաքական հայացքների համար շատ բնորոշ են նրա վեպի այն գլուխները, վորտեղ նկարագրվում է յերկու պետությունների միջև տեղի ունեցած պատերազմները և այդ պատերազմի պատճառներն ու շարժառիթները։ Պատերազմը տեղի յե ունենում Գարգանտյուայի հոր՝ Գրանգուզյեյի և մի այլ թագավորի՝ Պիկրոշոլի միջև։

Պատերազմի պատճառը Գրանգուզյեյի հովիվների և Պիկրոշոլի հացթուխների միջև տեղի ունեցած մի չնչին միջադեպն է։ Հովիվները ցանկանում են նրանցից ազնիվ ճանապարհով հաց գնել, բայց դրանք ծաղրում են հովիվներին և հարձակվում նրանց վրա։ Այս դեպքը առիթ է դառնում, վոր Պիկրոշոլը զորք հավաքի և հարձակվի Գրանգուզյեյի պետության վրա։ Զորքը սկսում է ավերել, հրդեհել և թալանել գյուղերը, քաղաքները։ Գրանգուզյեն դիմում է բոլոր միջոցների, վորպեսզի պատերազմը կանխվի, վոր այդ դատարկ և անմիտ պատճառով հա-

զարավոր մարդիկ չզոհվեն, բայց Պիկրոշոլը, վոր հիմար, բայց միաժամանակ հափշտակողական հակումներ ունեցող թագավորի տիպարն է, Գրանգուզյեյի այդ վարքագծից գալիս է այն յեզրակացության, վոր իր հակառակորդը թույլ է և վախկոտ, իսկ ինքը Ալեքսանդր Մակեդոնացուց հետո ամենահզոր թագավորն է։

Պիկրոշոլը իր հրամանատարների խորհրդով վերջնականապես գալիս է այն յեզրակացության, վոր նա հեշտությամբ կարող է իրեն յենթարկել ամբողջ Յեվրոպան, և նույնիսկ Արևելքը։

Այդ ամբողջ պատմության մեջ նախ վերին աստիճանի հետաքրքիր է Գրանգուզյեյի ներկայացուցիչ Հալլեյի ճառը, վորով նա դիմում է Պիկրոշոլին անիմաստ պատերազմին վերջ տալու համար.

«Յեթե դատելու լինենք մարդկայնորեն, նրա (Գրանգուզյեյի—Հ.Մ.) համար ծանր է հատկապես այն հանգամանքը, վոր նրան վիրավորանքներ և անիրավություններ պատճառել ես դու և քո մարդիկ, քանի վոր դու, ինչպես նաև քո նախնիներն անհիշելի ժամանակներից նրանց հետ յեղել եք բարեկամության մեջ և մինչև հիմա վոչ վոքի կողմից այդ բարեկամությունը չի խախտվել։ Վոչ միայն նա (Գրանգուզյեն), և նրա ժողովուրդը, հավասար չափով նաև կանադյան կղզիներից այն կողմն ապրող ժողովուրդները ավելի հեշտ կհամարեյին կործանել յերկինքը, քան քանդել ժողովուրդների միջև յեղած բարեկամական կապերը։

Բացի այդ, այդ սրբազան բարեկամությունը իրենով այնպես է լցրել ընդյերկնայինը, վոր ժողովուրդների մեջ, վորոնք ապրում են կոնտինենտում և ովկիանոսային կղզիներում, հազիվ թե դտնվի մի ժողովուրդ, վորը չցանկանա ընդունվել այդ բարեկամական դաշինքի մեջ, գնահատելով այդ դաշինքը ինչպես իր սեփական հողերը և յերկիրը։ Մարդկության հիշողության մեջ չի յեղել վոչ մի իշխող և դաշինք, այնքան վայրենի և անբարտավան, վորը ցանկանար հարձակվել վոչ միայն ձեր յերկրի, այլև ձեր դաշնակիցների հողերի վրա։ Յեվ յեթե հետեվելով իր խորհրդատուներին վորևե թագավոր կցանկանար վարվել այլ կերպ, ապա միայն այդ դաշինքի անունը լսելուց հետո, անմիջապես կհրաժարվեր իր մտադրությունից։

Ինչն է սովորել քեզ, վոր խախտես այդ միությունը, վոտնահարես ամեն մի բարեկամություն և իրավունք, թշնամաբար ներխուժես մեր յերկիրը, չնայած այն բանին, վոր վոչ նա (Գրանգուզյեն) և վոչ էլ նրա հպատակները վոչ մի բանով քեզ չեն վիրավորել, չեն զայրացրել և պատերազմ չեն հայտարարել: Սրանից հետո ուր է հավատարմությունը, ուր է օրենքը, բանականությունը, ուր է մարդկայնությունը» (I մաս, գլ. 31):

Այս հատվածում Ռաբլեն հանդես է գալիս ժողովուրդների և ազգությունների համերաշխության, բարեկամության և խաղաղ համագործակցության պաշտպանի դերում: Նա գտնում է, վոր ամեն մի ժողովուրդ պետք է ինքը լինի իր յերկրի տերը և ինքը տնօրինի իր հասարակական-քաղաքական կյանքը: Իր հայրենիքը ամեն մի ժողովրդի համար թանկ է և վոչ վոք իրավունք չունի բռնի ուժով զրկել վորևե ժողովուրդ իր անկախությունից և ազատությունից: Նա գտնում է, վոր բոլոր ժողովուրդները անհիշելի ժամանակներից մշտապես յեղել են բարեկամական հարաբերությունների և կապերի մեջ, վոր նրանք փոխադարձաբար հարգել և սիրել են իրար և վոր ժողովուրդների համար ավելի հեշտ է կործանել յերկրներ և վողջ տիեզերքը, քան այդ դարավոր բարեկամությունը: Նա գտնում է, վոր ժողովուրդներն իրենց անկախությունը պահպանելու համար պետք է դաշնակցեն, փոխադարձաբար պահպանեն իրենց անկախությունը և ազատությունը, և վոր այդ դաշինքը պետք է այնքան ամուր լինի, վոր ամեն մեկը, ով կհամարձակվի ձեռք բարձրացնել վորևե ժողովրդի հայրենիքի և անկախության վրա, լսելով այդ դաշինքի անունը՝ ուղղակի սարսափի նրանից և ձեռք քաշի իր մտադրությունից:

Ռաբլեն հափշտակողական քաղաքականության դեմ է և միաժամանակ ուժեղ հակապատերազմական գրող է: Պատերազմի ամբողջ պատասխանատվությունը նա դնում է բռնակալ թագավորի ու նրա խորհրդատուների վրա:

Բայց, իհարկե, Ռաբլեյի այս դատողությունները չէյին կարող հասկանալի լինել այնպիսի մարդկանց համար, ինչպիսին Պիկրոշոլն է: Նա կարծում է, թե իր հակառակորդը թույլ է, վոր այդ ճառը վախկոտության հետեվանք է, և նա շարունակում է ավերել յերկիրը և կոտորել բնակիչներին: Հասկանալի յե, վոր

Գրանգուզյեն ստիպված պետք է զենքի դիմեր և պաշտպաներ իր յերկիրն ու իր ժողովրդի պատիվը: Հակառակորդը խայտառակ պարտություն է կրում և գոռոզ Պիկրոշոլը իր զորքի հետ միասին գերի յե ընկնում: Շատ հետաքրքիր է Գրանգուզյեյի վերաբերմունքը: Թե զորքին և թե թագավորին բաց է թողնում և խորհուրդ է տալիս, վոր վերադառնան իրենց յերկիրը և հաշտ ու խաղաղ ապրեն:

Գարգանտյուան գերի զինվորներին ասում է.— «Իմ նախնիները միշտ աչքի յեն ընկել մարդասիրությամբ՝ պարտվողների նկատմամբ: Նրանք նման չեն յեղել այն թագավորներին և կայսրներին, վորոնք իրենց կաթոլիկ համարելով, հարստահարում են, գերիներին պահելով բանտում՝ նրանց ազատելու համար մեծ գումար են պահանջում»:

Այս հատվածի մեջ նույնպես ցայտուն կերպով յերեվում է Ռաբլեյի ժողովրդասիրությունը և նրա անհաշտ ատելությունը հափշտակողական քաղաքականության դեմ:

Սակայն այս բոլորով Ռաբլեն չի բավականանում: Նա իր վեպի մեջ տալիս է իր ուտոպիան ազատ հասարակության մասին: Այս տեսակետից վեպի ամենագեղեցիկ գլուխներից մեկը Թելեմյան[1]) աբբայության նկարագրությունն է:

Վեպի առաջին մասում հանդես է բերված մի վանական՝ Ժան անունով, վորը վոչ մի գծով նման չի միջնադարյան վանքերի վանականներին: Ժանը Վերածնության դարաշրջանի տիպիկ ներկայացուցիչն է, հումանիստական իդեալների կողմնակից: Նա Գարգանտյուայից վորպես պարգև ստանալով մի հողամաս, ստեղծում է մի աբբայություն, վորտեղ մարդիկ ապրում են հումանիստական իդեալների համաձայն: Ի տարբերություն միջնադարյան վանքերի, վորտեղ մեծ մասամբ ընդունվում եյին կյանքի համար անպետք և կյանքից հիասթափված մարդիկ, Ժանը իր միաբանության մեջ ընդունում է բացառապես յերիտասարդ տղամարդկանց և աղջիկներին: Կինը և տղամարդն այստեղ օգտվում են հավասար իրավունքներով, նրանց մեջ գոյություն ունի լիակատար հավասարություն: Բացի այդ, յեթե միջնադարյան վանքերում արգելվում եր ամուսնությունը, ապա

[1]) Thelema բառից, վոր նշանակում է կամք:

այստեղ ամուսնությունը մի տեսակ պայմանագիր է։ Ամուսնությունը պետք է տեղի ունենա փոխադարձ սիրո և համակրանքի հողի վրա։

Թելեմյան աբբայության մեջ վերացված է միջնադարյան վանական կյանքի բյուրոկրատական մեխանիզմը, յերբ ամեն մի միաբան պետք է շարժվեր զանգի ձայնի համաձայն և պարտադիր կերպով օրվա ընթացքում պետք է կատարեր այս կամ այն պարտականությունը։ Այստեղ ամեն մեկը ղեկավարվում է իր առողջ բնազդով և ներքին հակումներով։ Աբբայության խորհրդանշանն է.—«արա այն, ինչ վոր ցանկանում ես»։ Այս սկզբունքը անարխիզմի հետ վոչ մի կապ չունի։ Նա հանդիսանում է հումանիստական իդեալների թանձրացումը։ Ահա թե ինչպես է բացատրում այդ լոզունգի իմաստն ինքը, Ռաբլեն.—«Վարժեցված ազատ, ազնիվ և դաստիարակված մարդիկ, վորոնք ապրում [illegible]ազնիվ մարդկանց հետ, բնությունից օժտված են այնպիսի բնազդներով, վոր գործելով իրենց ներքին հակումների համաձայն, հոժարակամ հեռու յեն մնում ամեն մի այլասերումից։ Յեթե նրանց բանի կերպով յենթարկում են և խոնարհեցնում, ապա ստորացումը և ստրկացումը նրանց ստիպում է հրաժարվել ազնիվ հակումներից և նրանց մեջ այդ ստրկությունը խորտակելու ցանկություն է առաջանում»։ Թելեմում ապրելը կախված է ամեն մեկի կամքից և ցանկությունից, ամեն մեկը, յերբ ցանկանա, կարող է հեռանալ այնտեղից։

Ինչ վերաբերում է Թելեմի բնակիչներին, ապա նրանք բոլորն էլ վերին աստիճանի զարգացած և բազմակողմանի մարդիկ են։ Նրանք բոլորն էլ շատ լավ գիտեն մարդկության կուլտուրայի պատմությունը, կարդում և խոսում են բազմաթիվ լեզուներով, զբաղվում են արվեստի բոլոր ճյուղերով։ Հետաքրքիր է նշել, վոր Ռաբլեյի նկարագրած ուտոպիական հասարակության մեջ բացակայում է նաև մասնավոր սեփականությունը։

Բայց Ռաբլեյին չի հաջողվել լուծել իր պատկերացրած հասարակության մեջ յերկու կարեվոր պրոբլեմներ. դա աշխատանքի և պետության հարցն է։ Թելեմի բնակիչները զբաղվում են միայն մտավոր աշխատանքով, իսկ ֆիզիկական աշխատանքը թողնված է հարևան արհեստավորների վրա։ Հենց այս արհեստավորներն էլ մատակարարում են Թելեմի բնակչությանը

բոլոր անհրաժեշտ մթերքները։ Բայց այդ մոմենտը Ռաբլեյի ուտոպիայի վողջ արժեքը չի նսեմացնում, յեթե նկատի ունենանք, վոր նույնիսկ Թոմաս Մորի «Ուտոպիայում» պահպանված են ստրուկները, վորոնք կատարում են ամեն տեսակի կեղտոտ աշխատանքներ։

Գրականության վորոշ պատմաբաններ (օր. Գիզզեվը) Ռաբլեյի ուտոպիան համարել են բուրժուական իդեալների մարմնացումը։ Այս տեսակետը իրավացիորեն ուժեղ քննադատության յենթարկվեց խորհրդային մամուլում[1])։ Ցույց տրվեց, վոր 16-րդ դարի ուտոպիաները (Թոմաս Մոր—«Ուտոպիա», Կամպանելլա—«Արևի Թագավորությունը»), նրանց թվում նաև Ռաբլեյի ուտոպիան, ձեռնարկվում եյին մարդուն բուրժուական պրակտիկայից ազատագրելու նպատակով, մի պրակտիկա, վորը թշնամական եր հումանիստների իդեալներին։ Բլյումենֆելդը այդ մասին իրավացիորեն նկատում է.—«16-րդ դարի ուտոպիստների ամբողջ առանձնահատկությունն այն եր, վոր նրանք ունեյին իրենց առաջ, ինչպես նաև Ռաբլեն, արդեն վոչ թե աբստրակտ, այսպես ասած անհատի արտահասարակական իդեալ, այլ մասսայական անհատի գաղափարը, կոլեկտիվ անհատի, վորն այդ դարաշրջանում արդեն վոտք եր դնում քաղաքացիական պատերազմների ուղին։ Բայց միաժամանակ պահպանվում եր աբստրակտ, դաստիարակչական, հումանիստական վերաբերմունքը հասարակության պրոբլեմների նկատմամբ»։

Յեվ իսկապես, բոլոր այդ ուտոպիաներում, ինչ պես նաև Ռաբլեյի Թելեմյան աբբայության մեջ, վոչ մասնավոր սեփականության վրա կառուցված ուտոպիան արդարացվում է միայն ներդաշնակ զարգացման և անհատական ընդունակությունների ազատ արտահայտման լույսի տակ։ Հումանիստական անհատը իրացնում է իր լավագույն ընդունակությունները։ Այդ ընդունակությունները աբստրակցիայի յեն յենթարկվում Կամպանելլայի «Արևի թագավորության» մեջ, վորտեղ ներդաշնակ հասարակության պայմաններում և փիլիսոփայական բանականության ջերմ լույսի տակ հասունանում են «Ճշմարտությունը», «Արդարությունը», «Մեծահոգությունը», «Խիզախությունը», «Դաստիարակչությունը» և այլն, և այլն[2])։

[1]) Տես В. Блюменфельд, «Взащиту литературы Возрождения», «Звезда» 1937 г. № 2.

[2]) Т. Кампанелла, «Государство солнце», стр. 83 и след. СПБ 1907 г.

Ինչպես Թոմաս Մորի, այնպես էլ Կամպանելլայի ուտոպիաներն ամենից առաջ նկատի ունեյին ժողովրդի շահերը, նրանք փորձում եյին այդ ճանապարհով ժողովրդական լայն մասսաներին դուրս հանել թշվառության, աղքատության և եղոխղմի ճիրաններից: Ռաբլեն սոցիալիստ չի յեղել, բայց նրա ուտոպիան նույնպես նկատի ունի նախ և առաջ ժողովրդի շահը, նրա ուտոպիայի նախադրյալները նույնպես պետք է վորոնել այստեղ, վոչ թե կապիտալի նախնական կուտակման հերոսների և նրանց իդեալների մեջ:

Ռաբլեյի վեպի հաջորդ չորս մասերի հերոսը Գարգանտյուայի վորդին է, Պանտագրուելը: Այս մասերը գրվել են բավականին յերկար ժամանակամիջոցում, վորի ժամանակ ֆրանսիական կյանքում շատ փոփոխություններ տեղի ունեցան: Այդ փոփոխությունների մեջ ամենակարևորը բուրժուական ռեֆորմացիայի ծավալումն եր: Ժողովրդական մասսաների և բուրժուազիայի միջև յեղած հակասությունները դառնում են ավելի աղաղակող, հումանիզմը հալածանքներից սկսում է թաքնվել, բոցավառվում են խարույկները հանուն դոգմաների և աստծո թագավորության:

Այս բոլորի հետևանքը յեղավ այն, վոր կործանվեցին Ռաբլեյի Թելեմյան իլլյուզիաները: Այդ հանգամանքն առիթ է տվել հին պատմաբաններին պնդելու, վոր սկսած՝ յերկրորդ մասից, Ռաբլեյի վեպն իր բնույթը փոխում է, վոր հաջորդ մասերում Ռաբլեյի գործն այլևս չի շոշափում այն բարձր հումանիստական պրոբլեմները, ինչ վոր առաջին մասում:

Այս բացատրության գաղտնիքը դժվար չե հասկանալ, յեթե նկատի ունենանք, վոր Ռաբլեյի վեպի հաջորդ մասերի քննադատության օբյեկտներից մեկը դառնում է բուրժուական հասարակությունը: Վեպի հաջորդ մասերում Ռաբլեն չի հրաժարվում իր հումանիստական իդեալներից, ընդհակառակը, առաջին մասերում շոշափած պրոբլեմներն այստեղ ավելի յեն խորանում և ծավալվում:

Վեպի յերկրորդ մասում մանրամասն նկարագրվում է Պանտագրուելի դաստիարակությունը: Նա նույնպես դաստիարակ-

վում է այն հումանիստական սկզբունքների համաձայն, վոր առաջադրված է վեպի առաջին մասում: Այդ տեսակետից հետաքրքիր է Գարգանտյուայի նամակը Պանտագրուելին, վորտեղ նա շարադրում է իր հայացքները դաստիարակության մասին: Նա Պանտագրուելից պահանջում է, վոր իր վորդին նախ զբաղվի կլասիկ լեզուների ուսումնասիրությամբ. «Յես ձգտում եմ և ցանկանում, վոր դու կատարելապես ուսումնասիրես լեզուներ — առաջին հունարեն, ...յերկրորդ լատիներեն, հրեական լեզուն, ինչպես նաև հավասար չափով խալդեերեն և արաբերեն: Դու պետք է քո հիշողության մեջ պահես պատմական բոլոր իրադարձությունները: Դիպի ազատ գիտությունները, ինչպիսիք են յերկրաչափությունը, թվաբանությունը և յերաժշտությունը, յես քո մեջ հակում եմ առաջացրել, յերբ դեռ փոքր եյիր, շարունակիր ուսումնասիրել այդ գիտությունները: Ինչ վերաբերում է բնության յերևույթների ճանաչմանը, ապա յես ցանկանում եմ, վոր դու այդ գործին նվիրվես մեծագույն սիրով, վորպեսզի չլինի վոչ մի ծով, գետ, վոր դու չիմանաս: Բոլոր թռչուններին, բոլոր ծառերը, անտառների թփերը և թփիկները, յերկրի վրա գտնվող բոլոր կանաչները, յերկրի ընդերքում յեղած բոլոր մետաղները, Արևելքի և Հարավի բոլոր արժեքները — այս բոլորն ուսումնասիրիր, թող քեզ վոչինչ անհայտ չմնա: Ջանասիրությամբ կարդա հունական, արաբական և լատինական բժիշկների գործերը, ...անատոմիայի միջոցով ձեռք բեր յերկրի լիակատար ճանաչումը, վորը կոչվում է «միկրոկոսմոս», այլ խոսքով — մարդուն» (2-րդ մաս, գլուխ 8-րդ):

Այստեղից յերևում է, վոր Ռաբլեն իր վեպի հաջորդ մասերում մնում է նույն հումանիստը, վոր նրա հայացքների մեջ փոփոխություն չի կատարվել: Բայց կա մի եյական տարբերություն վեպի առաջին մասի և հաջորդ մասերի միջև: Յեթե վեպի առաջին մասում Ռաբլեյի հումանիստները ապրում են իդեալական հասարակության մեջ, ապա հաջորդ մասերում նրանք ապրում են այն ռեալ իրականության մեջ, վորն ամեն քայլափոխում հակասում է այդ հումանիստական իդեալներին: Այս տեսակետից վեպի հաջորդ մասերի ամենահետաքրքիր տիպերից մեկը Պանուրգն է:

Պանուրգը վորոշ պատմաբանների կողմից գծագրվել է բացասական գծերով: Նրան սովորաբար համարել են բուրժուական

պրակտիկայի մարմնացումը: Դա խոշոր թյուրիմացություն է: Վեսելովսկին ապացուցել է[1]), որ ճիշտ այնպես, ինչպես Ժանը, Պանուրգը նույնպես ունի ֆոլկլորային ծագում, որ նա նույնպես հանդիսանում է ժողովրդի զավակը:

Յեվ իսկապես Պանուրգի վողջ առանձնահատկությունն այն է, վոր նա չընկնելով Թելեմյան իդեալական հասարակության մեջ, վորովհետև այդ հասարակության գոյությունն անհնար էր, իր գոյությունը քարշ է տալիս ծայրահեղ չքավորության պայմաններում: Միակ զենքը՝ ամենակարող հակառակորդի դեմ՝ դա ծիծաղն է, բայց մի այնպիսի ծիծաղ, վորի մեջ թափանցված է Թելեմյան ուտոպիայի լավագույն սկզբունքները: Այստեղ բավական է հիշել Պանուրգի հռչակավոր մենախոսությունը պարտքերի մասին: Գվողդեվը Պանուրգի այդ մենախոսությունը մեկնաբանում է վորպես բուրժուական վարկի փառաբանություն: Բայց ով կարդացել է այդ մենախոսությունը, նա չի կարող չնկատել, թե վորքան արհեստական է այդ մեկնաբանությունը:

Պանտագրուելը Պանուրգին հարցնում է, թե վերջ ի վերջո յերբ է նա ազատվելու իր պարտքերից: Պանուրգը պատասխանում է[2]), թե միայն այն ժամանակ, յերբ բոլոր մարդիկ բավարարված կլինեն ամեն ինչով և յերբ Պանտագրուելը իրենից հետո (այսինքն իր մահից հետո) կլինի իր սեփական ժառանգը: Պարտք ունենալն օգտակար է նաև այն պատճառով, վոր բոլոր վարկատուները (պարտատերերը) անկեղծորեն կաղոթեն տածուն պարտապանի կյանքը յերկարացնելու համար, քանի վոր նրանք բոլորն էլ պարգեվ ավելի յեն սիրում, քան թե պարգեվատու ձեռքը, իսկ դրամն ավելի յեն սիրում, քան թե կյանքը: Իր միտքը բացատրելու համար Պանուրգը բերում է մի այսպիսի օրինակ. Հին Գալլիայում մի սովորություն կար. յերբ մահանում էր ստրկատերը, նրա թաղման պրոցեսի ժամանակ այրում էյին նրա բոլոր ստրուկներին և ծառաներին, և միթե,—շարունակում է Պանուրգը,—վերջիններս չէյին աղոթում իրենց տիրոջ կյանքի

1) А. Веселовский, «Рабле и его роман», Собр. соч. т. IV, вып. I, 1909 г.

2) 3-րդ գիրք, գլուխ 3-րդ

համար հենց այն պատճառով, վոր տիրոջ մահից հետո իրենք պետք է բարձրանային խարույկ: Միթե նրանք չէյին գործադրում բոլոր ուժերը, վորպեսզի պահպանեին իրենց տիրոջ կյանքը: Նույն բանը պատահում է նաև վարկատուների հետ: Իսկ ինչ կլիներ, յեթե ընդհանրապես պարտք գոյություն չունենար.—մոլորակները կդադարեցնեյին իրենց ճիշտ ընթացքը, յուպիտերը, վոր վոչնչով պարտական չէ սատուրնին, կզրկեր նրան իր սֆերայից, սատուրնը կմիանար մարսի հետ և յերկուսը միասին կվրդովեյին յերկիրը: Արևը իր լույսը չէր տա լուսնին, աստղերի ծնունդը կդադարեր: Հասարակության մեջ նույնպես կըսկսեր խառնակություն, վոչ վոք հոգ չէր տանի ուրիշի մասին, վոչ վոք չէր արձագանքի օգնություն խնդրողին և չէր օգնի ուրիշին: Յեվ ինչու օգնել: Չէ՞ վոր վոչ վոք վոչ վոքի պարտք չէ, վոչնչով պարտական չէ: Հավատը, հույսը և սերը փոխարեն մարդկանց մեջ կարմատավորվեր անվստահությունը, չարիքը, խարդախությունը: Մարդիկ մեկը մյուսի համար գայլ կդառնային, կբռնեյին ավազակության, թունավորողների և հանցագործության ուղին... «Այնպես վոր, բնության համար ավելի հեշտ կլիներ ձկներին կերակրել օդում, իսկ յեղջերուներին արածացնել ովկիանոսի հատակում, քան թե գործ ունենալ այն ծլատի հետ, վորը կհրաժարվեր պարտք տալուց»: Յեվ վոչ միայն այդ: «Յեթե դուք այդ վողորմելի և վողբալի աշխարհի օրինակով, վորտեղ պարտք չեն տալիս, կառուցեք մյուս «Փոքր աշխարհը» —մարդուն, դուք այստեղ նույնպես կառաջացնենք մեծագույն խառնաշփոթություն: Գլուխը կհրաժարվի մեզ աչք տալուց, վորպեսզի ուղղություն տար ձեռքերի և վոտքերի շարժումներին, վոտքերը կհրաժարվեյին գլուխը կրելուց, ձեռքերը կհրաժարվեյին աշխատելուց: Սիրտը նույնպես կդադարեր անընդհատ աշխատելուց մարմնի մյուս մասերի համար, թոքերը կհրաժարվեյին սրտին օդ մատակարարելուց, միզափամփուշտը կհրաժարվեր յերիկամունքներին ծառայելուց, ուղեղը տեսնելով իրերի այդպիսի անբնական ընթացքը, կհրաժարվեր ջղերին զգացողություն ու միկաններին շարժում հաղորդելուց»:

Դժվար չէ նկատել, վոր Պանուրգի այս խոշոր կատակի մեջ արտացոլված են բուրժուական եգոիստական հասարակության այն եյական կողմերը, վորոնք արդեն ձեվավորվել էյին

այդ շրջանում և վոր գլխավորն է՝ այդ բոլորն արտացոլվել է թելեմյան ուտոպիայի ներդաշնակ հասարակության բարձունքներից։ Այս ճանապարհով էլ ընթանում է Ռաբլեյի ամբողջ վեպը Թելեմից հետո։

«Գարգանտյուա և Պանտագրյուել» վեպը Վերածնության դարաշրջանի հումանիստական-ռեալիստական գրականության գոհարներից մեկն է։ Ռաբլեյի ռեալիզմն ունի իր առանձնահատկությունները։ Ամենաէական առանձնահատկությունն այն է, վոր նրա ռեալիզմը ֆանտաստիկական ռեալիզմ է, իսկ ֆանտաստիկան՝ ռեալիստական ֆանտաստիկա։ Ռաբլեյի ֆանտաստիկան այն դատարկ և իրականությունից կտրված ֆանտաստիկան չէ, վորին մենք հանդիպում ենք ավելի ուշ շրջանի մի շարք գրողների մոտ։

Ռաբլեյի ֆանտաստիկայի վողջ առանձնահատկությունն այն է, վոր նա յերևույթների, առարկաների և մարդկանց չափերը մեծացնում է, բայց սրա հետ միասին պահպանվում է ռեալ իրականության բնականությունը։ Ռաբլեյի վեպն այդ տեսակետից ավելի շատ հիշեցնում է եպոսին և այդ վերաբերվում է նախ և առաջ տիպաժների այն սերնդին, վոր նկարագրվում է այստեղ։ Սրանք նույնպես աչքի յեն ընկնում իրենց անհավատալի հասակով և տիտանական ուժով։ Յեվ բոլորովին պատահական չէ, վոր Ռաբլեն իր վեպի համար ընտրել է ժողովրդական վեպի այդ հանրամատչելի հերոսներին, վորովհետև նրանց միջոցով ավելի հեշտ էր հումանիստական գաղափարների պրոպագանդան։

Ռաբլեյի ֆանտաստիկայի և չափազանցությունների աղբյուրը ժողովրդական քրոնիկան է։ Իսկ այդ չափազանցությունները քրոնիկայի մեջ ունեյին շատ վորոշակի նպատակներ։ Ժողովրդական գրքում կախարդ Մերլինը ճանապարհորդության է ուղարկում նորածին յերկու հսկայի և նրանք հարցնում են կախարդից.—«Ինչպե՞ս պետք է մենք կերակրվենք ճանապարհին։ Ասում են, թե հրապարակ են յեկել այնպիսի մարդիկ, վորոնք գյուղացիներից հաց են գնում և բաղխման մեջ են մտնում հացթուխների ցեխի հետ։ Խեղճ ժողովրդին մի կտոր հացը շատ թանկ է նստում և չկա մեկը, վորին գանգատվի այդ շահագետների մասին»։

Շատ հետաքրքիր է, վոր Ռաբլեյի մոտ, յերբ ծնվում է Գարգանտյուան, նրա հագուստի համար հարկավոր է վոչ թե 302, այլ 302 և մեկ յերրորդական արշին կտոր։ Նրա գոտու համար պահանջվում է 309 1/2 թիզ թավշե ժապավեն, թիկնոցի համար 9600-ից յերկու յերրորդական թիզ պակաս թավիշ, իսկ գլխարկի համար 302 և կես թիզ սպիտակ թավիշ։ Ռաբլեն այստեղ վորոշ չափով կրկնում է ժողովրդական գրքի հակադրությունների մեթոդը—գրանդիոզը և փոքրը գոյություն ունեն կողք-կողքի, հակադրության մեջ։ Մեկ յերրորդական թիզ կտորը կամ հիսուն ունիա (29—86 գրամ) հացը հսկայական թվերի կողքին պահվում է միջոց՝ նշելու համար այն հարաբերությունները, վոր գոյություն ունի ժողովրդի ռեալ կարիքի և պահանջների կատակային ֆանտաստիկայի միջև։

Այդ օրինակից պարզ յերևում է, թե ինչպես Ռաբլեյի ֆանտաստիկայի մեջ արտացոլվում է ռեալ իրականությունը և թե ինչպես նրա ֆանտաստիկան ռեալիստական է։ Ռաբլեն պատկանում է Վերածնության դարաշրջանի ժամանակակից բուրժուական կարգերը հիմնող այն խոշոր մարդկանց թվին, վորոնք ամեն ինչ եյին, բայց վոչ բուրժուական-սահմանափակներ։

6. ՊԼԵՅԱԴԱ

Ռաբլեյից հետո ֆրանսիական Վերածնության դարաշրջանի գրականության պատմության մեջ ամենահետաքրքիր յերևույթներից մեկը, այսպես կոչված Պլեյադայի բանաստեղծներն եյին, վորոնք մի կողմից շարունակեցին ֆրանսիական հումանիստների սկսած գործը, իսկ մյուս կողմից Ֆրանսիայում նախապատրաստեցին կլասիցիզմը։

Պլեյադան կազմակերպվեց 16-րդ դարի կեսերին։ Դա գրական մի խմբակ էր, վորի մեջ մտնում եյին այն ժամանակվա մի շարք նշանավոր գրողներ և վորոնք իրենց այդ խմբակը անվանեցին «Պլեյադա» անունով։

Պլեյադան ըստ եյության գրական մի նոր դպրոց էր, վորի անդամները միացել եյին գրական-ստեղծագործական միյեվնույն սկզբունքների շուրջը և ձգտում եյին միացյալ ուժերով այդ սկզբունքները կիրառել ֆրանսիական իրականության մեջ։

Պլեյադան կազմակերպվեց Ալեքսանդրյան շրջանի յոթ գրողնե-
րի օրինակով (3-րդ դ. մեր երայից առաջ)։ Խմբակի մեջ մըտ-
նում էին Ռոնսարը, Դյու Բելլեն, Ժան Անտուան Բաիֆը և մի
շարք այլ գրողներ։

Պլեյադայի գրական ստեղծագործական սկզբունքները շա-
րադրված են Դյու Բելլեի մի աշխատության մեջ, վոր սովո-
րաբար համարվում է Պլեյադայի մանիֆեստը։

Դյու Բելլեն (1525—1560) սկզբում պատկանում էր կաթո-
լիկական հոգևորականությանը և գրավում էր շատ բարձր
պաշտոններ։ Ռոնսարի հետ հանդիպելուց հետո, նա հրաժար-
վում է հոգևոր գործունեությունից և իրեն ամբողջովին նվի-
րում է գրականությանը։ Նրա գրչին է պատկանում «Ֆրան-
սիական լեզվի պաշտպանությունը և գովաբանությունը» (1549),
վորտեղ, ինչպես նշվեց, շարադրված են Պլեյադայի տեսական-
ստեղծագործական սկզբունքները։ Չնայած Պլեյադայի հիմնական
էսթետիկական սկզբունքները վերագրում են Ռոնսարին, բայց
Դյու Բելլեն համարվում է ֆրանսիական լեզվի և պոեզիայի ռե-
ֆորմատորներից մեկը։

Իր գրքի պոլեմիքական մասում նա ուժեղ քննադատու-
թյան է յենթարկում ֆեոդալական յեկեղեցական գրականու-
թյունը, անտիկ գրողներին ստրկորեն ընդօրինակելու տեն-
դենցները և լատիներեն լեզվի չարաշահումները։ Նա գտնում է,
վոր բանաստեղծները պետք է ավելի լուրջ ուսումնասիրեն ան-
տիկ գրողների գործերը և վոր ֆրանսիական պոեզիան պետք է
մոտեցնել ժողովրդական ստեղծագործությանը։ Նա գրողներին
այսպիսի խորհուրդ է տալիս.—«Կարդա և նորից կարդա, գի-
շեր-ցերեկ թերթիր հունական և հռոմեական գրողներին...
գրիր գեղեցիկ եպիգրամներ, հուզող էլեգիաներ Օվիդիոսի, Տի-
բուլլոսի և Պրոպերցիոսի օրինակով։ Օգտագործիր անտիկ ֆա-
բուլան, գրիր այնպիսի օդաներ, վորոնք դեռ հայտնի չեն ֆը-
րանսիական Մուսային և թող քո ամեն մի տողի մեջ արտա-
հայտվի անտիկ տրադիցիան»։

Անտիկ գրողներին օգտագործելու հետ միասին նա առաջ
է քաշում նաև իտալական պոեզիայի և մասնավորապես Պետ-
րարկայի օգտագործման հարցը։ Նա Պետրարկային համարում է
սոնետների մեծագույն վարպետ և գտնում է, վոր սոնետ պետք

է գրել նրա օրինակով։ Տրակտատի մեջ բավականին տեղ է
գրավում նաև ֆրանսիական լեզվի հարցը։ Հեղինակի հիմնական
միտքն այն է, վոր պետք է պահպանել ֆրանսիական լեզվի
մաքրությունը և օտար բառերի գործածությանը պետք է վե-
րաբերվել մեծագույն զգուշությամբ։ Ինչ վերաբերում է պո-
եզիան ժողովրդական ստեղծագործություններին մոտեցնելու
նրա պահանջին, ապա այդ մնաց միայն պահանջ, իրականում
Պլեյադայի գրողներն այդ ուղին չբռնեցին։ Դրա պատճառը
հասկանալի կլինի, յեթե նկատի ունենանք, վոր նրանք սերտ
կերպով կապված էին պալատական-ազնվական շրջանների հետ։

Դյու Բելլեն, վորպես բանաստեղծ, մեծ մասամբ ընդօրի-
նակել է Պետրարկային և առհասարակ իր ժողովածուի—«L'oli-
ve»—թեմաները մեծ մասամբ վերցրել է իտալական գրողնե-
րից։ Ինքը, Դյու Բելլեն յերկար ժամանակ յեղել է Իտալիայում
և այնտեղ գրել է իր լավագույն պոեմը («Antiquités de Rome»)
և բանաստեղծությունները։

Դյու Բելլեյի տեսության և պրակտիկայի միջև գոյու-
թյուն ունեն հակասություններ։ Նա վորպես տեսաբան «օբյեկ-
տիվ» լիրիկայի կողմնակից էր, մինչդեռ վորպես բանաստեղծ
նա տվել է ինտիմ, սուբյեկտիվ լիրիկայի լավագույն նը-
մուշներ։ Դյու Բելլեն խոշոր դեր է խաղացել նաև ֆրանսիա-
կան գրական լեզվի ստեղծման, ինչպես նաև գրական վորոշ
տեսակների (օդա, էլեգիա, էպոպեա) ստեղծման պատմության
մեջ։

Պլեյադայի ամենախոշոր պոետը հանդիսանում է Պյեր
Ռոնսարը (1524—1585)։

Ռոնսարը ծնվել է ազնվական ընտանիքում։ Նրա հայրը յեղել
է այն ազնվականներից մեկը, վորոնք մասնակցել են իտալա-
կան արշավանքներին և այս հանգամանքը նրա վրա այն ազ-
դեցությունն է ունեցել, վոր նա տարվել է իտալական վերա-
ծնության հովերով։

Ռոնսարը տասնմեկ տարեկան հասակում ընդունվում է Ֆը-
րանցիսկ I-ի պալատը, վորպես մանկլավիկ և դաստիարակվում է
թագաժառանգի հետ միասին։ Այնուհետև նույն պաշտոնով նա
անցնում է Շոտլանդիա, լինում է Հոլանդիայում, Անգլիայում
և վերադառնում է Ֆրանսիա։ Այստեղ նա սկսում է զբաղվել

անտիկ լեզուների և գրականության ուսումնասիրությամբ։ Սրա հետ միասին զբաղվում է նաև ստեղծագործական աշխատանքներով և կարճ ժամանակամիջոցում մեծ անուն է հանում։ Նրան իր ժամանակակիցները համարում էին «Պոետների արքա»։

1550 թվին լույս տեսավ Ռոնսարի բանաստեղծությունների ժողովածուն «Ոդաների առաջին չորս գիրքը» վերնագրով։ Այս գրքից հետո նա իրար հետևից հրատարակում է իր ստեղծագործությունները, վորոնք սկզբում լավ ընդունելություն չգտան ֆրանսիական հասարակության շրջաններում, բայց հետո բոլորի կողմից բարձր գնահատվեցին։

Ռոնսարն իր ոդաներով հետևում է Պինդարին։ Նա աշխատեց ամբողջությամբ վերականգնել անտիկ ոդան իր ժանրային բոլոր առանձնահատկություններով։ Նա նույնիսկ պահպանում էր անտիկ ոդային չափը և կառուցվածքը։ Այստեղից էլ առաջանում են նրա այսպես կոչված պինդարյան ոդաները իրենց ստրոֆայով և անտիստրոֆայով, էպոդով, այսինքըն այնպիսի մասերով, վորոնք Ռոնսարի ժամանակ վոչ մի արժեք չունեին, քանի վոր այդ ոդաները չէին յերգվում, ինչպես անտիկ աշխարհում։

Ինչ վերաբերում է նրա ոդաների թեմային, ապա այդ մասին ինքը, Ռոնսարը գրել է. նրա կարծիքով պոեզիայի թեման պետք է լինի.—«Սերը, գինին, ուրախությունը, մրցումները, պարերը, դիմակահանդեսները, սուսերամարտերը, հաղթական ձիերը, յերբեմն էլ վորևէ փիլիսոփայական դատողություն»։ Ռոնսարը բացի «հաղթական ձիերից» մյուս բոլոր թեմաների շուրջը գրել է բանաստեղծություններ։

Ոդաների մեջ նա յերգում է Ֆրանսիայի փառքը, նրա թագավորների հզորությունն ու մեծությունը, պալատական մրցումները, հանդեսներն ու դիմակահանդեսները, մենամարտությունները և այլն այլն։ Նա գովաբանում է ֆրանսիական զենքի ապագա հաղթանակը Անգլիայի, Իսպանիայի և Գերմանիայի նկատմամբ։ Պետք է նշել, վոր ոդաների մեջ շատ մեծ տեղ է գրավում պալատական-ազնվական կյանքի գովերգությունը և ազնվականության կենցաղի և սովորությունների նկարագրությունը։ Այդ կարգի ոդաներից պարզ յերևում է,

վոր Ռոնսարի հասարակական-քաղաքական համակրանքը ազնվականության կողմն է, վոր նա կապված է ազնվական-պալատական շրջանների հետ։ Արիստոկրատիզմը Ռոնսարի մոտ առհասարակ շատ ուժեղ է, բայց միաժամանակ նրա մոտ կան Վերածնության դարաշրջանի հումանիզմի մի շարք էական գծեր։

Հետաքրքիր է նաև այն, վոր Ռոնսարն իր ոդաների թեման առնելով ազնվական-պալատական շրջաններից և կյանքից՝ միաժամանակ ոգտագործում է նաև անտիկ դիցաբանությունը։ Ազնվականության հետ միասին հանդես են գալիս դիցաբանական աստվածները՝ Յուպիտերը, Ապոլլոնը, Վեներան, Դիանան, Պլուտոնը, Նեպտունը։ Այստեղ դրսևորվում է Ռոնսարի ուժեղ կապն անտիկ աշխարհի հետ, յերևում է, վոր մի կողմից նրա սրտին շատ մոտ են ազնվական-միապետական կարգերը, մյուս կողմից մոտ են անտիկ աշխարհն ու դիցաբանությունը։ Այդ է այն հակասականությունը, վորի մասին խոսել են Ռոնսարի ստեղծագործությունների բոլոր հետազոտողները։ Այդ հակասությունները տարորինակ չեն կարող թվալ, յեթե նկատի ունենանք, վոր հենց այդ նույն դարաշրջանում հումանիզմն Իտալիայում քաշվում է պալատական շրջանները և ստանում է ազնվական գունավորում։ Նույն բանը տեղի յե ունենում նաև Ֆրանսիայում։

Իր կյանքի և գրական գործունեության յերկրորդ շրջանում Ռոնսարն ավելի յե հեռանում հումանիզմի դիրքերից և արդեն բացահայտ կերպով կանգնում է կաթոլիկական յեկեղեցու, թագավորի և միապետական կարգերի պաշտպանության դիրքերում։ Կալվինականները ուժեղ կերպով դատապարտում եյին նրան նրա անորոշ վարքագծի համար, իսկ հուգենոտները Ռոնսարից պարզապես հրաժարվեցին, յերբ յերևաց, վոր նա վճռականապես անցել է կաթոլիկական յեկեղեցու կողմը։

Այդ շրջանում Ռոնսարը փորձում է ստեղծել ֆրանսիական ազգային էպոս, վորը պետք է իր արժանիքներով «Իլիականին» և «Ենեականին» հավասար գործ լիներ։ Նա մտածում էր ֆրանսիական թագավորների նախնիներին կցեն տրոյական հերոսների հետ, ճիշտ այնպես, ինչպես Վերգիլիոսը Ոգոստոս թագավորի նախնիներին փորձեց կապել Ենեասի հետ։

Այդ նկատառումներով նա գրում է «Ֆրանսիադա», որը լույս տեսավ 1572 թվին։

Պոեմի հերոսը Ֆրանկն է, որը Հեկտորի և Անդրոմաքեի որդին է։ Տրոյայի կործանման ժամանակ աքայացիք Ֆրանկին աշտարակից ցած են նետում, բայց Յուպիտերը փրկում է նրան մահից և տալիս է մորը։ Անդրոմաքեն գերի ընկնելով ամուսնանում է Հելենի հետ։ Ֆրանկը մեծանում է Հելենի տանը, կրթություն է ստանում, իսկ հետո իր ուսումը լրացնում է ճանապարհորդությամբ։ Երբ Ֆրանկը վերադառնում է ճանապարհորդությունից, Հելենը գուշակում է նրան, որ նա դառնալու յե մի մեծ ժողովրդի և թագավորի նախահայրը։ Գուշակությունը իրականություն դարձնելու նպատակով, Ֆրանկը մի խումբ քաջ զինվորների հետ գալիս է Դունայի ափերը։ Այստեղ ընդհատվում է պոեմը։ Ռոնսարը չկարողացավ վերջացնել իր պոեմը։

Նա չկարողացավ վերջացնել մի շարք պատճառներով։ Նախ այն, որ նա կարծում էր, թե էպոսը մի այնպիսի ծաղիկ կամ բույս է, որ կարող է բուսնել ամեն վայր բոլոր յեղանակներին և բոլոր պայմաններում։ Նա ցանկանում էր ստեղծել ֆրանսիական հերոսական-ազգային էպոս, անկախ էպոսին անհրաժեշտ ժողովրդական հիմքից և ժողովրդական յերևույթներից։ Նա կարծում էր, թե մի յերկու հերոսով կարելի յե էպոս ստեղծել։ Նա նկատի չէր առնում այն հանգամանքը, որ էպոսի հիմքում սովորաբար ընկած են այս կամ այն ժողովրդի կյանքում տեղի ունեցած խոշոր իրադարձությունները, այնպիսի իրադարձություններ, որոնք շոշափում են տվյալ ժողովրդական կյանքի բոլոր կողմերը և այդ բոլորն առնում են իրենց մեջ։ Նա անտեսում էր այն հանգամանքը, որ էպոսի կոլլիզիան տվյալ ժողովրդի պայքարն է իր պատմական իրավազորության, իրավահավասարության համար, որ առանց այդ պայքարի նկարագրության՝ էպոսը չի կարող գոյություն ունենալ։

Յեվ արդյունքը յեղավ այն, որ Ռոնսարը ստեղծեց ոչ թե ֆրանսիական ազգային էպոս, այլ Հոմերոսից և Վերգիլիոսից առնված մի չոր ու ցամաք խառնուրդ։

Ֆրանսիական գրականության որոշ պատմաբաններ այն կարծիքին են հանգել, որ յեթե Ռոնսարը լուրջ սխալներ

չգործեր, նա անպայման հաջող գործ կգրեր։ Մեզ թվում է, ավելի ճիշտ կլիներ ասել, որ Ռոնսարը չէր կարող չսխալվել, որովհետև էպոսին անհրաժեշտ նախադրյալները նրա մոտ բացակայում էին և նա չկարողացավ մտածել, որ առանց ժողովրդական լայն հիմքի չի կարելի էպոս ստեղծել։

Ռոնսարի մեծությունը և արվեստի ուժը պետք է որոնել ոչ թե նրա «Ֆրանսիադայի» և ոդաների մեջ։ Նրա տաղանդը լայն ծավալով արտահայտվել է նրա լիրիկական պոեզիայի մեջ և իրավացիորեն նրան համարել են համաշխարհային լիրիկական պոեզիայի խոշորագույն վարպետներից մեկը։ Հատկապես շատ արժեքավոր են և իրենց գրավչությունն ու թարմությունը չեն կորցրել նրա սիրային յերգերը։ Նրա լիրիկական բանաստեղծությունները ամենից առաջ շնչում են անկեղծությամբ և կենսուրախությամբ, և որ գլխավորն է՝ Ռոնսարի մոտ շատ ուժեղ է սերը դեպի կյանքը։ Նա մեծ ափսոսանքով է խոսում այն մասին, որ մի օր նրա մազերը սպիտակելու յեն, սիրտը դադարելու յե բաբախելուց և գալու կգա ժամանակ, յերբ մարդիկ բոլորովին էլ չեն իմանա, որ յեղել է մի գրող, սիրել է կյանքը, սիրել է Կասանդրային, սիրել բնությունը և ծաղիկները, սիրել է առավոտի ժպիտը, թռչունների յերգը, արևի փայլը։ Իր լիրիկայի այս քնքույշ մոտիվներով նա ոչ միայն մոտենում է Պետրարկային, այլև թագավորների և յեկեղեցու այդ բարեկամը, հանդիսավոր ոդայի և ճոռոմ էպոսի այդ հեղինակը դառնում է լայն ընթերցողներին մոտիկ գրող։

Ֆրանսիական Վերածնության դարաշրջանի գրականության վերջին հումանիստը համարվում է Միշել Մոնտենը (1553 1592)։ Նա հռչակվեց իր «Փորձերը» աշխատությամբ, որտեղ մանրամասն շարադրված են հեղինակի մտորումները կրոնի, բարոյականության, փիլիսոփայության, պատմության, քաղաքականության, բնական գիտությունների և այլ բազմաթիվ հարցերի մասին։ Ամենաէականը, որով Մոնտենը կապվում է հումանիզմի հետ, այդ՝ կյանքը, բնությունը և մարդուն ճանաչելու ձգտումն է։ Նա ցանկանում է իր ուսումնասիրության առանցքը դարձնել մարդկային գործունեության բոլոր բնագավառները, լայնացնել իրականության ճանաչման բոլոր սահմանները։ Մյուս գիծը՝ այդ նրա էպիկուրիզմն է, քրիստոնեա-

կան հանդերձյալ կյանքի բացասումը և քրիստոնեության բացասումը։ «Փորձերի» մեջ շատ ուժեղ գծերով արտահայտվել է նաև հեղինակի բացասական վերաբերմունքը դեպի ֆեոդալական-ազնվական կարգերը, դեպի ֆեոդալական-յեկեղեցական կուլտուրան։ Մոնտենը ֆեոդալական-միստիկական գրականությանը հակադրում է Լուկրեցիուսին, Պլուտարքոսին, Սենեկային։

Մոնտենի «Փորձերի» նշանակությունը գրականության պատմության մեջ շատ մեծ է։ Ամենից առաջ Ֆրանսիական 17-րդ դարի կլասիցիզմի ներկայացուցիչները շատ բան են վերցրել նրանից։ Բացի այդ, Մոնտենի ազդեցությունը նկատվում է Շեքսպիրի վրա (մանավանդ «Համլետում»)։

Մոլիերը և Վոլտերը նույնպես շատ բան են սովորել Մոնտենից։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [1])

1. Деперье, «Кимвол мира, новые забовы», пер. В. Пикова, изд. «Academia» *1936* г.
2. Ф. Рабле, «Гаргантюа и Пантагрюэль», *1938* г. Л. (*Բ. Կրժեվսկու առաջաբանով*)։
3. С. Пинтс, «Французские поэты», характеристики и переводы. СПБ 1914.
4. Монтень. «Опыты», пер. В. П. Глебевой, СПБ, 1891.
5. Г. Лансон. «История французской литературы», т. I, М. 1896 г.
6. А. Веселовский, «Рабле и его роман», Собр. соч. т. IV, вып. I, *1909* г.

---

[1]) Գերմանական վերածնունդի բաժնում նշված քրեստոմատիաները և քննադատական գրականությունն այստեղ յերկրորդ անգամ չեն նշվում, բայց մտնում են գրականության ցանկի մեջ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос [redacted] Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0168144

ԳԻՆԸ 3 Ռ. 50 Կ.

14709

О. МАМИКОНЯН

ИСТОРИЯ ЗАПАДНО-ЕВРОПЕЙСКОЙ ЛИТЕРАТУРЫ ЭПОХИ ВОЗРОЖДЕНИЯ

Изд. Пед. Института, Ереван 1940 г.